Գլխավոր խմբագիր՝
ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն:

Հասցեն՝
0025, Երևան,
Նալբանդյան փողոց 128,
կենտրոնական մասնաշենք,
2-րդ հարկ:
Հեռախոս՝ 593-460, 4-60

Վկայական N 03Ա054452:
Տրված է՝ 05.06.2002 թ.:

Հրատարակիչ՝ ՀՊՏՀ
«Տնտեսագետ» ամսագիրը լույս է ընծայվում ՀՊՏՀ լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից:

Նոյեմբեր-դեկտեմբեր
2020 / N5 (711)
Տպաքանակը՝ 300
Տարածվում է անվճար:

Խմբագրակազմ

Խմբագիր՝
ԱՐՄԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ
Լրագրող՝
ՆԱՆԵ ԱՎԱՆԵՍՅԱՆ
Լուսանկարիչ՝
ՌԱԶՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Համակարգչային ձևավորումը՝
ՆԱԻՐԱ ԽՉԵՅԱՆԻ

Համարի պատասխանատու՝
ԱՐՄԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Խմբագրությանը տրամադրված հեղինակների նյութերում տեղ գտած փաստական անճշտությունների համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: Ամսագրի նյութերն օգտագործելիս հղումը պարտադիր է:

Պատվեր՝ 556:
Ծավալը՝ 6 տպ. մամուլ:
Ստորագրված է տպագրության՝
29.12.2020 թ.:

Տպագրված է «Տնտեսագետ» հրատարակչությունում:

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀՊՏՀ ՌԵԿՏՈՐ ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆԻ ՈՒՂԵՐՁԸ.....4

ՄԵՐ ՀԵՐՈՍՆԵՐԸ

Ծառայում եմ Հայաստանի Հանրապետությանը.....5

Գիրկդ առ սիրասուն զավակներիդ, մա՛յր հայրենիք.....6

Տղաները, որ ելան մարտի.....8

ՍՊԻՏԱԿԻ ԵՐԿՐԱՇԱՐԺԻ 32-ՐԴ ՏԱՐԵԼԻՑ

Դիմակայենք աղետներին իրազեկվածությամբ և գիտելիքով.....10

ՆԱԴԵԺԴԱ ԱՖՅԱՆ
ՎԱՐԴԱՆ ՎԼԱՍՅԱՆ
ՆԱՐԻՆԵ ԽԱԼԱԹՅԱՆ
2020-Ը՝ ՀՊՏՀ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐՈՒՄ.....12

ՀԱՅԿ ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ
ԱՆԱՀԻՏ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ
ՄԱՐԻԱՆՆԱ ԴԱՆԻԵԼՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
ՆԱՐԻՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆ
ՍՅՈՒԶԱՆՆԱ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
ԱԼԻՆԱ ԱՌՈՒՇԱՆՅԱՆ
ՄԵՐ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԱԿԻՐՆԵՐԸ.....15

Բանկային համակարգն իր հիմնական ցուցանիշներով տարին կեզրափակի աճով. *հարցազրույց ՀՊՏՀ բանկային գործի և ապահովագրության ամբիոնի վարիչի ժ/պ Աշոտ Մարդոյանի հետ*.....19

ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԵՐ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ

Նամակ ապագային.....22

ՄԵՐ ՀԵՐՈՍՆԵՐԸ

ՇՈՒՇԱՆ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆ
Դեպի հավերժություն.....26

«ԱՄԲԵՐԴ» ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ.....27

ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՏՆՏԵՍԱԿԱՆ ԽԵԱՆԿԱՐ.....28

ՀՊՏՀ - 45

ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ.....31

ՀՊՏՀ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՌՅԱՆՑ ՆԻՍՏԵՐՈՒՄ.....38

ԼԵՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀՊՏՀ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂՈՒՄ.....40

ԱՐՄԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
2020 թ. հոբելյար տնտեսագետները.....42

ԼՐԱՀՈՍ.....44

Երուսաղեմի հայկական հախճապակին՝
սուրբ քաղաքի խորհրդանիշ.....45

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆԸ՝ ՀՊՏՀ ՌԵԿՏՈՐ

ՀՀ Կառավարությունը, «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջին համապատասխան, որոշել է հաստատել «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության ռեկտորի պաշտոնում Դիանա Ռոբերտի Գալոյանի ընտրության արդյունքները և նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով:

Սիրելի՛ գործընկերներ, ուսանողներ,

2020 թվականն իր եզրագիծը հատեց: Այն սկսվեց ու ավարտվեց ծանր ու դժնդակ՝ մարդկությանն ու երկիր մոլորակին բերելով աղետ ու տառապանք: Հայ ժողովրդի համար այն դարձավ ծանրագույն փորձության տարի՝ հերոսացումներով ու կորուստներով: Բնականոն հունից դուրս եկան գրեթե բոլոր ոլորտները, այդ թվում՝ կաթվածահար եղավ կրթության ոլորտը, նոր մարտահրավերները ծառացան օրվա հրամայականի կարգավիճակով ու պարտադրեցին շուտափույթ լուծումներ որոնել ու գործի դնել:

Տարեսկիզբը «նշանավորվեց» թագավարակի համաճարակով, և արդեն մարտ ամսին հանրապետությունում ուսումնական գործընթացի անընդհատությունն ապահովելու նպատակով անցում կատարվեց նոր ձևաչափի՝ հեռավար կրթության: Կրթության որակի ապահովումն ինքնին աշխատատար և միասնական ջանքեր պահանջող գործընթաց է, իսկ նոր իրականությունը պահանջեց անհապաղ գործելակերպ՝ տեղեկատվական և հաղորդակցական ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ: Ընդորիվ մեր համալսարանի ղեկավարության, պրոֆեսորադասախոսական անձնակազմի և ուսանողության համատեղ աշխատանքի, նորաստեղծական ու հետևողական ջանքերի՝ մեզ հաջողվեց գործընթացը կազմակերպել և անխոչընդոտ իրականացնել, պահպանել ակադեմիական սկզբունքներն ու արժեքները: Արդյունքում և՛ բակալավրիատում, և՛ մագիստրատուրայում, և՛ ասպիրանտուրայում առկա և հեռակա կրթաձևերում ապահովվեց բնականոն ուսուցում, կիսամյակային, ինչպես նաև քննական, ամփոփիչ ատեստավորման և ընդունելության գործընթացներ:

Համավարակը մեզ ուղղակիորեն ու անողոքաբար հարվածեց. կորցրեցինք մեր թանկագին գործընկերներին, արժանավոր գիտնական-մանկավարժների, որոնք լի էին եռանդով ու գաղափարներով:

Հայ ժողովրդին պարտադրված ծանր պատերազմը մի նոր փորձություն դարձավ բոլորիս համար, մեզանից խլեց մեր լավագույն ուսանողներին, ունեցանք վիրավորներ, շատերն էլ այսօր շարունակում են ծառայել հայրենիքին: Այսօր ցավի ու սրտամաշ հույզերի մեջ փորձում ենք շարունակել ապրել, աշխատել ու նայել առաջ: Քաջ հայտնի ճշմարտություն է՝ միայն աշխատանքով, նվիրումով է հնարավոր շարունակել ապրել, հաղթահարել ծանր կորուստների հսկայական բեռը ու պահպանել լավատեսությունը: Այո՛, աշխատանքով բարիք ենք ստեղծում, աշխատանքի ընթացքում սփոփվում ենք, փորձում թոթափել ծանր խոհերը և փոխել իրականությունը:

Այսօր, առավել քան երբևէ, մեզ անհրաժեշտ է միասնականություն ու միակամություն՝ հանդուրժողաբար ու փոխօգնությամբ, առանց երկվության, առանց պառակտման:

Բուհական միջավայրը կրթության ու գիտության դարբնոց է, այստեղ է արարվում լույսը, ոգեղենությունը, և մենք՝ կրթության սպասավորներս, իրավունք չունենք նահանջելու, թուլանալու, ավելին՝ ամուր կամքով ու հաստատուն գործելաոճով պիտի դառնանք լույսի ու հույսի անդավաճան ջահակիրներ, ոգևորենք երիտասարդ սերնդին՝ նորովի իմաստավորելու կրթության դերը, խրախուսենք բարձրորակ, մրցունակ մասնագետ դառնալու նրանց ձգտումը:

Կասկածից վեր է, որ մեր համալսարանում բոլորն են այս սկզբունքի որդեգիրները: Մենք հավատում ենք, որ միասնաբար՝ մեր հրաշալի կոլեկտիվի ու պայծառ ուսանողության հետ համատեղ ու արգասաբեր աշխատանքով մասնակիցը կդառնանք մեր ժողովրդի մի նոր վերածննդի, մի նոր ժամանակաշրջանի կերտման, որում կապաքինվեն վերքերը, կհառնի հույսը, կհաղթանակեն բարին և սերը:

Սիրելի՛ գործընկերներ և ուսանողներ, թող որ նոր տարին շրջադարձային դառնա բոլորիս համար, նշանավորվի խաղաղությամբ, ստեղծագործ աշխատանքով ու համերաշխությամբ, ուսման մեջ առաջադիմությամբ ու նորանոր բարձունքների նվաճմամբ:

Հույս, հավատ և սեր՝ բոլորիդ ընտանիքներին:

ԴԻԱՆԱ ԳԱԼՈՅԱՆ
ՀՊՏՀ ռեկտոր,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

«Ծառայում եմ Հայաստանի Հանրապետությանը».

Համլետ Մեխակյան



Արցախա-ադրբեջանական պատերազմում հայրենիքի պաշտպանության ծանր գործում իր անուրանալի ներդրումն ունեցավ ՀՊՏՀ կառավարման ֆակուլտետի 1-ին կուրսի (հեռակա) ուսանող Համլետ Կարենի Մեխակյանը: Արագածոտնի մարզի Կոշ գյուղից էր, ծնված 2002 թ.: Տան կրտսեր զավակն էր, միակ որդին, ունի 3 քույր:

Բանակ էր զորակոչվել 2020 թ. օգոստոսի 31-ին, ծառայել է Մատաղիսում: Ընդամենը 2 ամսվա ծառայող էր, երբ սկսվեց պատերազմը:

«Ինչպես մեզ հայտնել են ընկերները՝ հրամանատարը պատերազմի ընթացքում Համլետին չի թույլատրել դիրք բարձրանալ, քանի որ նա նորակոչիկ էր, իսկ Մատաղիսում կատաղի մարտեր էին ընթանում: Բայց Համլետը ցանկություն է հայտնել միանալ զինակիցներին՝ ասելով, որ տղաներին չի լքի: Նա 10 օր դիրք է պահել, ընկել է հերոսաբար՝ մինչև վերջին վայրկյանը մարտնչելով....»,- «Տնտեսագետի» հետ զրույցում ասաց Համլետ Մեխակյանի քույր Զոյա Մեխակյանը:

Միշտ ժպտերես ու կյանքով լի երիտասարդը դպրոցահասակ տարիներից ի վեր աչքի է ընկել հայրենասիրությամբ, պետականամետ մտածողությամբ: Ինչպես քույրն է հայտնում, հայոց եռագույնը միշտ նրա մեքենայում էր, մանկուց սիրում էր զինվորական համազգեստը: Նա առանձնակի ակնածանքով էր վերաբերվում պետական խորհրդանիշներին, հոգով-սրտով հայրենիքի զինվոր էր:

Համլետը հնարավորություն էր ունեցել երկարաձգելու բանակ գնալու ժամկետը, սակայն ցանկություն էր հայտնել շուտ մեկնելու: Իրենց տան դարպասի վրա սեփական ձեռքով գրել էր բանակ մեկնելու և վերադառնալու ժամկետները, ասում էր՝ վերադառնալու է՝ տուն կառուցի, ծառ տնկի և ընտանիք կազմի: Նույնիսկ իր հարսանիքի օրն էր որոշել՝ 26.06.2026: Դարպասին այդ գրվածքը հարազատների համար այժմ թանկ ու կենդանի հուշ է:

Նա հումորով, խելացի երիտասարդ էր:

«Ընտանի՛ք, ես լավ եմ, ծառայում եմ Հայաստանի Հանրապետությանը». սրանք առաջնագծի զինվոր Համլետի ողջույնի խրոխտ խոսքերն էին, որոնք նա ասում էր՝ ամեն անգամ տուն զանգելիս: Հանգստություն և ուժ էր ներշնչում ընտանիքին, ապա անհամբեր հետաքրքրվում էր հարազատների որպիսությամբ, ասես՝ ոչ թե ինքն էր սահմանին, այլ ընտանիքը:

Պատերազմից 1 օր առաջ՝ սեպտեմբերի 26-ին, ծնողներն այցելել են Համլետին. բանակ գնալուց ի վեր ծնողների առաջին այցն էր, քանի որ համավարակի պատճառով երդման արարողությանը մասնակցելու հնարավորություն չէին ունեցել: Քույրը պատմում է, որ զինվորի կարգավիճակում իրենց ճանաչած միշտ ժպտացող Համլետը բոլորովին այլ մարդ էր՝ լուրջ, վճռական: Հարազատների այցի օրը նա ծնողներին հորդորել է հնարավորինս շուտ գնալ Մատաղիսից՝ ասելով, որ ինքն էլ պետք է արագ վերադառնա ծառայության: Հավանաբար, զգում էր մոտալուտ վտանգը:

Համլետն ապագայի մեծ նպատակներ ուներ, որոնք պայմանավորում էր բանակից վերադառնալուց հետո ուսման բարեհաջող ավարտով. ցանկությունը պետական հատվածում աշխատանքի անցնելն էր:

Նա ծառայեց Հայաստանի Հանրապետությանը. և ոչ միայն. իր կյանքը նվիրաբերեց հայրենիքին...

Փառք ու պատիվ:

Գիրկդ առ սիրասուն զավակներիդ, մա՛յր հայրենիք

Պատերազմը մեզ պարտադրեց ավելի՛ սիրել հայրենիքը, կորստի վտանգից սերն առ հայրենիք ավելի՛ ուժգնացավ: Առանց վայրկյան անգամ վարանելու առաջնագիծ շտապեցին նվիրյալները, կրծքով կրեցին ոսոխի՝ հայոց աշխարհին ուղղված մահացու փամփուշտը:

Արցախա-ադրբեջանական պատերազմում սխրանքներով աչքի ընկած քաջազունների թվում էին ***ՀՊՏՀ շրջանավարտները,*** *որոնք սահմանին էին որպես կամավորներ, պահեստազորայիններ: Նրանք հավատարիմ մնացին իրենց երբեմնի տված զինվորական երդմանը. կյա՛նք անգամ չխնայեցին:*

Հայրենիքի նվիրյալը կրկին սահմանին էր որպես կամավոր

Վահե Աշոտի Վերդյանը արցախցի էր, Շուշի բերդաքաղաքից: 2016 թ. ավարտել էր ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետը՝ կառավարման տեղեկատվական համակարգեր մասնագիտությամբ, նույն տարում ընդունվել էր նշված մասնագիտության մագիստրատուրա: Մագիստրատուրայի 2-րդ կուրսում նրան տարկետում էր տրամադրվել:

Վահեն զինվորական գործի սիրահար էր, նպատակասլաց ու խոստումնալից սպա. ավագ լեյտենանտ էր, վերապատրաստվել էր Չինաստանում: Նա զոհվել է Արցախում՝ իր զինվորի կյանքը փրկելիս:

Հայրենիքի նվիրյալը նաև Ապրիլյան քառօրյա պատերազմի մասնակից էր, 4 տարի առաջ կրկին առաջնագծում էր՝ որպես կամավոր:

«Վահեն մարդկային բարձր հատկանիշներով օժտված, խելացի, աշխատասեր, աշխույժ տղա էր: Անընդհատ ձգտում էր նորին, եռանդը չէր մարում: Մեր սիրելի ուսանողը հաճախ էր գալիս դեկանատ, աշխատակիցները նրան հիշում են որպես վառ անհատականության»,- մեզ հետ զրույցում ասաց ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի ավագ գործավար Նաիրա Հայրապետյանը:

Հրեշտանվորը, որի հարվածներն անվրեպ էին



Հակոբ Ռաֆայելի Հակոբյանը կառավարման ֆակուլտետի մագիստրատուրայի 2017 թ. շրջանավարտ էր, պետական և մունիցիպալ կառավարում մասնագիտացման մագիստրոս: Մինչ այդ ավարտել էր մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի բակալավրիատը:

Առաջնագիծ էր մեկնել սեպտեմբերի 30-ին՝ որպես պահեստազորային, հրետանավոր էր: Սանասարը (Կուբաթլին) պաշտպանելիս ծանր վիրավորում է ստացել, բժիշկներին չի հաջողվել փրկել նրա կյանքը...

Հակոբը ՀՀ կենտրոնական բանկում ֆինանսական վերլուծաբան էր: Ուսումնատենչ տղա էր, հիանալի էր սովորում, վարժ տիրապետում էր օտար լեզուների և «Էրազմուս+» ծրագրով 1 կիսամյակ ուսումնառել էր Էստոնիայում: 2-րդ մագիստրոսական կրթությունն էր ստանում Հայաստանի ամերիկյան համալսարանում:

Մեզ հետ զրույցում Հակոբի քույրը՝ Գայանե Հակոբյանն ասաց, որ եղբայրը շատ ու շատ նվիրական երազանքներ ուներ, որոնք, ավա՛ղ, անկատար մնացին... երազում էր սովորել նաև Մասաչուսեթսի համալսարանում, ունենալ սեփական բիզնես-ընկերությունը...

«Ծայրաստիճան պատասխանատու էր, չէր սիրում որևէ գործ կիսատ թողնել: Կամավորական աշխատանքների սիրահար էր, հասարակական գործունեության մեծ փորձ ուներ: Հակոբն անչափ հայրենասեր էր, նա լավ հրետանավոր էր: Ընկերներն ասում են, որ նրա հարվածները միշտ անվրեպ էին…»,- ասաց Գայանեն:

Առաքելությունը՝ աշխատանքի. նրա համար հայրենիքն ամեն ինչ էր

Էրիկ Գաբրիելի Սայադյանը ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի 2020 թ. շրջանավարտ էր, ստացել էր ֆինանսիստի մասնագիտություն: Հայրենասեր երիտասարդը պայմանագրային հիմունքներով աշխատում էր ԱԱԾ սահմանապահ զորքերում, պետք է ստանար լեյտենանտի կոչում...

Պատերազմական օրերին Արաքսի հովտում մասնակցել է մարտական գործողություններին ու արիաբար զոհվել:

«Նրա համար հայրենիքն ամեն ինչ էր, վեր էր անգամ ընտանիքից»,- մեզ հետ զրույցում ասաց Էրիկի մայրը՝ Ալինա Ծավարշյանը:

«Էրիկս շատ բարի, մարդասեր տղա էր: Կարևորում էր ուսումը, սկզբում սովորում էր առկա համակարգում, հետո, ընտանիքին ֆինանսապես աջակցելու և հայրենավեր գործ անելու մղումով, աշխատանքի անցավ ու տեղափոխվեց հեռակա համակարգ, այնուամենայնիվ, աշխատանքը չէր խանգարում նրան սովորել, միշտ ձգտում էր մասնակցել դասերին, մեծ հարգանք ու սեր էր վայելում թե՛ բուհում, թե՛ շրջապատում»,- պատմեց հերոսածին մայրը:

Տնտեսագետ, արվեստաբան, հայրենիքի նվիրյալ յուրօրինակ մարդը



Արցախյան գոյամարտում հերոսական կռիվ մղեց ու հերոսի մահով ընկավ ***Ավետիս Արամի Ավետիսյանը***, ով պատերազմի առաջին օրերին սահման էր մեկնել որպես կամավոր: 2003-2008 թթ. նա սովորել է ՀՊՏՀ-ում՝ տնտեսագիտության տեսություն մասնագիտությամբ: Այնուհետև խորամուխ է եղել արվեստի բնագավառում՝ ստանալով նաև արվեստաբանի կրթություն: Կոմիտասի թանգարան-ինստիտուտի գիտաշխատող էր: Ամուսնացած էր, ուներ մեկ դուստր:

ՀՊՏՀ կառավարման ֆակուլտետի դեկանի տեղակալ Վարդան Վլասյանը և կառավարման ամբիոնի ասիստենտ Մարիաննա Քոչարյանը նրա համակուրսեցիներն են:

«Նա մեր Ավոն էր, մեր կուրսի յուրօրինակ մարդը, որն ապրում ու շնչում էր արվեստով ու հայրենիքով: Ճիշտ է, ընտրել էր տնտեսագիտությունը, սակայն ակնհայտ էր, որ ինքն արվեստի, հայագիտության, ռազմագիտության ոլորտների մարդ էր: Հետո, իհարկե, արվեստաբանի կրթություն ստացավ, խոր ուսումնասիրություններ կատարեց, հրետանու մասին գիրք հեղինակեց: Մենք միշտ հպարտանում էինք նրանով, շարունակում ենք հպարտանալ»,- մեզ հետ զրույցում հերոսին այսպես բնութագրեց Վարդան Վլասյանը:

«Ավոյից հայրենասիրություն ու արվեստ էր ծորում, նա բոլորից առանձնանում էր իր տեսակով: Հայրենիքն ու ռազմահայրենասիրությունն իր համար մի ուրիշ աշխարհ էին: Զինվորական ծառայություն էր անցել Արցախում՝ Եղնիկներում և ասում էր, որ ծառայության այդ 2 տարին իր կյանքի լավագույն ժամանակահատվածն էր: Պատկերացնո՞ւմ եք, որքան հայրենիք կար նրա մեջ: Անդադար շրջագայում էր Հայաստանով և Արցախով, ուսումնասիրում հայկական մշակույթը, այցելում եկեղեցիներ: Շատ պրպտող ու հետաքրքրասեր էր: Տեղյակ եմ նաև, որ Եղնիկների լեգենդար հրամանատար Քյոխը՝ Կարեն Ջալավյանը, Ավետիսի հրամանատարն է եղել, Ավոն նրան շատ էր հարգում և միշտ պահում էր կապը: Անգամ Ավետիսի ֆեյսբուքյան էջից է ակնառու, թե որքան հայրենասեր ու շնորհաշատ էր նա»,- ասաց Մարիաննա Քոչարյանը:

Գիրկդ ըղ աւրսուէն ջնվսկներիդ, մա՛յր հայրենիք, նզջեցրու խաղաղ ու անվրդով:
Մեր խոնարհումն ու երախտիքը՝ նրանց:
Անմար փառք:

ՆԱՆԵ ԱՎԱՆԵՍՅԱՆ



Տղաները, որ ելան մարտի

© Sipan Gyulumyan

Ոմանք հայրենասիրության մասին սոսկ խոսում են, ոմանք էլ.... տեղով մեկ հայրենիք են ու սեր:

Մեր ընթերցողն այսօր առիթ ունի ծանոթանալու հանուն հայրենիքի մղված պատերազմում արիությամբ աչքի ընկած ու սխրանքներ գործած ՀՊՏՀ ուսանողներին: Նրանք առանձնակի հիացմունքի են արժանի. հասուն են ու իմաստուն, անձնազոհ են ու անվախ, վճռական պահին գործում են գրագետ ու կշռադատված:

Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանող, զինվոր ***Արամ Սուրենի Մարտիրոսյանը*** ծառայության մի մասն անցկացրել է Մեխակավանում (Ջեբրաիլ): Արցախ-ադրբեջանական պատերազմի առաջին իսկ օրերին եղել է ամենաթեժ կետերից մեկում, դեռ սեպտեմբերի 25-ին մեկնել էր մարտական հերթափոխի: Արամն աչքի է ընկել սխրանքներով, կռիվ է մղել մինչև վերջ, վիրավորում է ստացել: Բարեբախտաբար, մեր հերոսն ապաքինվել է, բավարար առողջական վիճակով վերադարձել է Արցախ՝ ծառայության:

Պատերազմն սկսվելուն պես, Արամը ոչնչացրել է հատուկ ջոկատայինների, խոցել հակառակորդի մեկ միավոր զրահատեխնիկա (տանկ), շարքից հանել մեկ միավոր ՏՈՍ կայանք, ինժեներական համալիր (կամուրջ-տեխնիկա), մասնակցել մի շարք հակահարձակողական գործողությունների: Մարտի դաշտից դուրս է բերել զինակից ընկերներից 3-ի մարմինները և փրկել է սպաներից մեկի կյանքը:

Հոկտեմբերի 7-ին զինծառայողներից 3-ի հետ մեկնել է հատուկ առաջադրանքի՝ 1 կմ խորանալով հակառակորդի կողմից գրավված տարածքում՝ 3 կողմից շրջափակված: Առաջադրանքը կատարելիս տղաները հետ են մղել հակառակորդի 2 լայնամասշտաբ հարձակում:

Հոկտեմբերի 10-ին՝ հրադադարից 20-25 րոպե անց, հակառակորդի կողմից ենթարկվելով հարձակման, Արամն իր զինակիցների հետ խոցել է մեկ միավոր զրահատեխնիկա (տանկ), որի արդյունքում՝ ևս երկու զրահատեխնիկա, և թշնամու շուրջ 150 զինվոր դիմել է փախուստի, իսկ փախչողներին ոչնչացնելիս նա թիրախավորվել և խոցվել է հակառակորդի դիպուկահարի կողմից: Պատերազմի ամենավտանգավոր կետերից մեկում մեր հերոսը շուրջ 9 ժամ վիրավոր է մնացել: Վերջապես, զինակիցներին հաջողվել է նրան դուրս բերել ռազմի դաշտից ու տեղափոխել թիկունք: Առաջին բուժօգնությունը ստանալուց հետո Արամը տեղափոխվել է Ստեփանակերտի հոսպիտալ, այնուհետև՝ Երևան, «Էրեբունի» ԲԿ: Ապաքինվելուց հետո նա ուղևորվել է տուն՝ մայրական խնամքի, այնուհետև՝ ծառայության:

Ուրախ ենք տեղեկացնել նաև, որ Արամը մեր շնորհալի ուսանողներից է, կարմիր վկայականով է ավարտել «Փայտի գեղարվեստական մշակում» խմբակը:



Արամի աշխատանքներից

Մարտին Արմենի Բադասարյան. հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանող, ժամկետային զինծառայող: Պատերազմի օրերին նա հսկել է Ակնայի (Աղդամ) սահմանը:

Հակաօդային պաշտպանության մասնագետ է, հրաձիգ-զենիթահար: Ծառայության մեջ գտնվելով 1 տարի՝ Մարտինը յուրացրել է ՀՕՊ մասնագետին

անհրաժեշտ գիտելիք ու հմտություն և, ի զարմանս զինակիցների, լավագույնս կիրառել դրանք: Արցախ-ադրբեջանական պատերազմի տարբեր ժամանակահատվածներում միայնակ խոցել է թշնամու 3 անօդաչու թռչող սարք: Հրամանատարը սխրանքների համար նրան ներկայացրել է «Արիության մեդալի»: Բանակ է զորակոչվել 2020 թ. հունվարին: Ծառայում է Ասկերանում:

Պատերազմից հետո Մարտինը գտնվում էր 7-օրյա լրացուցիչ արձակուրդում, և մենք, օգտագործելով պատեհ առիթը, կապ հաստատեցինք նրա հետ, արձանագրեցինք հետպատերազմական տպավորությունները: Նա խոստովանեց՝ ամենուր՝ տանը, բակում, համալսարանում իրեն ընդունում են հերոսին արժանի կերպով, ինչն անչափ հաճելի է, միաժամանակ՝ պարտավորեցնող:

«Այն, ինչի միջով անցանք վերջերս, փորձություն էր, նաև փորձառություն: Մենք, իհարկե, պատրաստ էինք: Բայց գիտեք՝ պատերազմում ամեն ինչ այլ է, մտածելու ժամանակ չկա և պետք է կողմնորոշվել ու գործել գերժշգրիտ: Այդ պահին մի գերբնական ուժ է գալիս դեպի քեզ, և անում ես մինչ այդ քեզ անհնարին թվացողը: Հաճախ, զգալով մոտալուտ վտանգը, չեմ սպասել հրամանի և անմիջապես անցել եմ հակառակորդի խոցման գործին»,- պատմում է Մարտինը:

Կարճատև արձակուրդի ընթացքում այցելել է ՀՊՏՀ, հանդիպել կուրսընկերներին, կարոտն առել համալսարանից: Ինչպես մեզ հետ զրույցում նշեց Մարտինը, մեկնում է ծառայությունը շարունակելու և համակուրսեցիներին, ուսխորհրդականներին (նա Ուխ անդամ է) խոստացել է, որ մեկ տարի անց վերադառնալու է սիրելի համալսարան՝ համատեղ վայելելու ուսանողական քաղցր տարիները:

Հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող ***Սերգեյ Սեդրակի Յոբսեյանը*** որպես կամավոր է մեկնել առաջնագիծ և 49 օր շարունակ հսկել է Մատաղիսի հարակից բարձունքը (Մարտակերտի շրջան):

Սերգեյի հետ զրույցը պատերազմի, հայրենասիրության, որակյալ կրթության կարևորության մասին է:

Սեպտեմբերի 29-ին, պատերազմից 2 օր անց, Սերգեյը Արցախ մեկնելու որոշում է ընդունել: Նա հրետանավոր է, 2015-2017 թթ. ծառայել է բանակում, և պատերազմ է մեկնել զինվորական գիտելիքները հայրենիքին ծառայեցնելու նպատակով: Միացել է ժամկետային զինծառայողներին, նրանց հետ սահմանը հսկել՝ որպես ավագ հրաձիգ: Դիրքը, որն իր զինակիցների հետ պահել է Սերգեյը, անառիկ է մնացել:

«Իմ դիտարկմամբ՝ այս պատերազմում մենք հաղթել ենք մահին, եթե կանք, ուրեմն հաղթել ենք: Մեկնելիս վայրկյան անգամ չեմ վարանել, իսկ այժմ հպարտ եմ, որ մեր պահած դիրքը կանգուն է և մերն է: Պատերազմի մասին շատ եմ մտորել, հակասական զգացողություններ ունեմ»,- ասում է Սերգեյը:

Հրադադարի հաստատումից հետո էլ բարձունքը հսկող տղաները մնացել են տեղում՝ նկատի առնելով պատերազմի վերսկսման հավանականությունը: *«Տուն վերադարձանք 49 օր անց, երբ ամեն ինչ ավարտվեց»:*

Իսկ թե որն է հետպատերազմական երկրում առաջընթացի ուղին, ՀՊՏՀ մագիստրանտը վճռականորեն

նշում է՝ կրթությունը, որակյալ կրթությունը, որը կարող է տնտեսություն, բանակ, հասարակություն հզորացնել: Ըստ Սերգեյի՝ *«Մենք պետք է իմանանք մեր անելիքը: Այժմ մեր հասարակությունն ավելի պետք է կարևորի ռազմահայրենասիրության, հայոց պատմության, Հայաստանի աշխարհագրության դերն ու նշանակությունը: Յուրաքանչյուրը պետք է իր տեղում լինի, բոլոր ոլորտներում պետք է տվյալ գործի գիտակ մասնագետներ լինեն: Այս ամենի հիմքում, իհարկե, լավ կրթությունն է»*:

Իսկ պատերազմի մասին ասելիք շատ կա, մտքերը հախուռն են... Այնուհանդերձ, փաստ է, որ Սերգեյն իր կամքով է մեկնել առաջնագիծ ու պայքարել մինչև վերջ: Նման հայրենանվեր տղաների շնորհիվ ենք հզոր ու նրանց շնորհիվ է, որ մեր ոգին չի ընկճվում:

Ինչպես նկատեցիք, մեր հերոսները նույն՝ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի ուսանողներ են: Վերադարձից հետո ֆակուլտետի դեկան Մերի Բադալյանը հյուրընկալել է նրանց, զրուցել, երախտագիտություն հայտնել, իր հպարտությունն ու հիացումը փոխանցել, իսկ ծառայությունը շարունակողներին տոկունություն ու խաղաղ ծառայություն մաղթել:

ՆԱՆԵ ԱՎԱՆԵՍՅԱՆ

Դիմակայենք աղետներուն իրազեկվածությամբ եւ գիտելիքով

1988 *թ. դեկտեմբերի 7-ը հայ ժողովրդի պատմության ամենաողբերգական էջերից է: Տեղական ժամանակով ժամը 11.41-ին Հայաստանը ցնցեց 20-րդ դարի ամենաաղետալի երկրաշարժերից մեկը, որի ցնցումների ուժգնությունն էպիկենտրոն Սպիտակում հասավ 9-10 բալի: «Աղետների ռիսկի կառավարման ազգային ռազմավարությանը և դրա իրականացման գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» ՀՀ Կառավարության որոշման քաղվածքում արձանագրված է՝ Սպիտակի ավերիչ երկրաշարժի հետևանքով զոհվեց 25000 մարդ, 517000 մարդ դարձավ անօթևան, տնտեսությանը պատճառվեց 14,2 մլրդ ԱՄՆ դոլարի վնաս: Դեկտեմբերի 7-ը մեր օրացույցում դարձավ Երկրաշարժի զոհերի հիշատակի և աղետների դիմակայության օր:*

Այս տարի Սպիտակի ավերիչ երկրաշարժի 32-րդ տարելիցն է: Մեր համալսարանում ավանդաբար կազմակերպվում են ոչ միայն հիշատակի միջոցառումներ, այլև իրազեկող սեմինարներ, որոնք ուղղված են այդ ողբերգական իրադարձության վերլուծությանը, հետևանքների գնահատմանը և ունեն մեկ կարևոր նպատակ՝ իրազեկել հանրությանը՝ պատրաստ լինելու հնարավոր աղետներին, որոնցից, մասնագետների պընդմամբ, հնարավոր է դուրս գալ շատ ավելի քիչ մարդկային ու նյութական կորուստներով՝ համապատասխան տեղեկություն և պատրաստականություն ունենալու դեպքում:

Դեկտեմբերի 7-ին ՀՊՏՀ ֆիզդաստիարակության, արտակարգ իրավիճակների և քաղպաշտպանության ամբիոնի դոցենտ, համալսարանի քաղաքացիական գործառույթների պատասխանատու Սիրանուշ Հարությունյանի և նույն ամբիոնի դասախոս Նեդա Պետրոսյանի նախաձեռնությամբ մարքեթինգ մասնագիտության առաջին կուրսի 2-րդ հոսքում անցկացվեց դաս-սեմինար՝ նվիրված Սպիտակի երկրաշարժի 32-րդ տարելիցին՝ «Աղետների ռիսկերի կառավարում» խորագրով: Առցանց դաս-սեմինարին մասնակցում էին մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի դեկան Նարեկ Կեսոյանը, դեկանի տեղակալ Արա Մկրտչյանը, ֆիզդաստիարակության, ԱԻ և ՔՊ ամբիոնի վարիչ Հովհաննես Գաբրիելյանը, որպես հյուրեր հրավիրված էին Աղետների ռիսկերի նվազեցման ազգային պլատֆորմի (ԱՌՆԱՊ) փորձագետ Վահան Հարությունյանը և ԱԻՆ Կենտրոն համայնքի գլխավոր մասնագետ Գայանե Հայրապետյանը:

Բացելով հանդիպումը և շնորհակալություն հայտնելով հյուրերին, գործընկերներին և ուսանողներին՝ Սիրանուշ Հարությունյանը խնդրեց մեկ րոպե լռությամբ հարգել Սպիտակի երկրաշարժի և Արցախյան պատերազմի զոհերի հիշատակը: Այնուհետև, անդրադառնալով օրվա թեմային, նա նշեց, որ Սպիտակի երկրաշարժը 20-րդ դարի 19 ամենաավերիչ և սոսկալի երկրաշարժերից է, որը խլեց մարդկային բազում կյանքեր և հանգեցրեց նյութական մեծ կորուստների: Նա կարևորեց աղետներին պատրաստված և իրազեկ լինելը և հույս հայտնեց, որ հիշատակի այս

միջոցառումները կդառնան լիարժեք հարթակ, որտեղ ուսանողները կպատրաստվեն աղետներին, կլինեն գրագետ և տեղեկացված՝ այդպիսով նվազեցնելով աղետների ռիսկերը: *«Չպետք է մոռանանք՝ ով իրազեկված է, նա պաշտպանված է»,*- ընդգծեց բանախոսը:

Այնուհետև Սիրանուշ Հարությունյանը խոսքը տրամադրեց ուսանողներին: Նրանք՝ Սյուզաննա Թութունջյանը, Միլենա Կարապետյանը, Մելինե Հայրապետյանը, Անի Ավետիսյանը, Մելինե Դանիելյանը, Շուշանիկ Դավթյանը, Հասմիկ Բաբալարյանը և Էրիկ Խաչատրյանը, լուսանկարային շարքերով և տեսանյութերով պատկերավոր կերպով անդրադարձան Սպիտակի երկրաշարժին, դրա հետևանքներին, երկրաշարժերի ծագմանը, ուժգնության չափմանը, նախապատրաստմանը, հետևանքների վերացմանը և այլն:

Ելույթ-շնորհանդես ներկայացրեց ԱՌՆԱՊ փորձագետ Վահան Հարությունյանը: Նա նշեց՝ հուսադրող է, որ բուհերում դեռևս հիշում են 1988 թ. աղետալի երկրաշարժը և ուշադրություն դարձնում իրազեկման աշխատանքներին: Փորձագետը հիմնականում անդրադարձավ Սպիտակի երկրաշարժի պատճառներին: Նրա խոսքով՝ հայաստանյան այս աղետն ամենաուսումնասիրվածներից է, սակայն պետք է շարունակել դասեր քաղել, քանի որ Հայաստանի 90 տոկոսից ավելին գտնվում է սեյսմիկ գոտում: Անդրադառնալով Սպիտակի երկրաշարժի հետևանքներին՝ Վահան Հարությունյանը նշեց, որ հիմնական սխալներից է սեյսմիկ վտանգի գնահատումը 7 բալ, մինչդեռ պետք է գնահատվեր 9 բալ, սխալ են կառուցվել շենքերը, իսկ բնակիչների կողմից շենքերում ապօրինի շինարարական փոփոխությունները հանգեցրել են շենքերի հավասարակշռության կենտրոնների թուլացմանը: *«Այս հիմնական պատճառներն էլ բերեցին մեծածավալ փլուզումների»,*- ասաց փորձագետը՝ միաժամանակ հավելելով իշխանությունների և բնակչության ցածր պատրաստվածությունը, փրկարարական աշխատանքների կազմակերպման ցածր մակարդակը:

Նեդա Պետրոսյանը ներկայացրեց, թե ինչպես աշխարհն արձագանքեց Սպիտակի երկրաշարժին: Նրա խոսքով՝ այս ողբերգական աղետին արձագանքեց ավելի քան 110 երկիր, ՄԱԿ-ը, ինչպես նաև միութենական բոլոր պետությունները, որոնք ոչ միայն հումանիտար աջակցություն ուղարկեցին, այլև շինանյութ, դեղորայք, տեխնիկա, մասնագիտական օգնություն: *«Նշվում էր, որ 2 տարում երկրաշարժի բոլոր հետևանքները կվերականգնվեն, սակայն սկսվեց Արցախյան պատերազմը, և գործընթացը կիսատ մնաց, թեև միջազգային կազմակերպությունների ջանքերով մեծ աշխատանք կատարվեց. վերակառուցվեցին թաղամասեր, հիվանդանոցներ, դպրոցներ: Հատկապես ցանկանում եմ կարևորել սեյսմիկ կայանների, ինչպես նաև երկրադիտարանի վերազինումը, ԱՌՆԱՊ-ի ստեղծումը, ինչը մեծ դերակատարություն ունի աղետների ռիսկերի նվազեցման գործում և նպատակ ունի հզորացնել ՀՀ աղետների ռիսկի նվազեցման համակարգը»,*- ասաց Նեդա Պետրոսյանը:

Ելույթներին հաջորդեց հարցուպատասխանը, իսկ ավարտին Սիրանուշ Հարությունյանը շնորհակալություն հայտնեց մասնակիցներին՝ հուսալով, որ հետագա միջոցառումները նվիրված կլինեն մեր երկրի վերելքին ու հաջողություններին, որ հայրենիքի շենացման և զարգացման համար գործի կդրվեն բոլոր ջանքերը: Սիրանուշ Հարությունյանը նաև հատուկ շնորհակալություն հայտնեց ուսանողներին՝ միջոցառմանը պատշաճ պատրաստվելու և հետաքրքրական տեղեկություն ներկայացնելու համար: ԱՌՆԱՊ փորձագետ Վահան Հարությունյանն էլ հավելեց, որ, ՀՀ Կառավարության որոշմամբ, դեկտեմբերի 7-ը նշվում է նաև որպես Աղետների դիմակայության օր, ինչը խորհրդանշական է և մեզ ուղղորդում է մտածելու գրագետ դիմակայման և աղետներից հնարավորինս արագ դուրս գալու կարևորության մասին:

Աղետների ռիսկերի նվազեցման ազգային ռազմավարությունը որպես նպատակ ամրագրում է՝ անհրաժեշտ է ձևավորել աղետակայուն երկիր՝ ապահովելով անհատի, հասարակության անվտանգության աստիճանական բարձրացումն ու կայուն զարգացումը: Աղետների ռիսկերի նվազեցման ռազմավարության մշակման հիմնական նախադրյալներից է Հայաստանի աղետավտանգավորության աստիճանը:

Հայաստանը գտնվում է աշխարհի առավել բարձր սեյսմիկ ակտիվության գոտիներից մեկում, ուստի այստեղ առկա են գեոֆիզիկական վտանգներին առնչվող նշանակալի ռիսկեր: Աղետների ռիսկայնության մեծացման հանգամանքներից է այն, որ մեր երկրի տարածքի մեկ երրորդը գտնվում է սողանքավտանգ գոտում, իսկ կլիմայի փոփոխության ազդեցություններն այսօր զգացվում են ողջ աշխարհում, և Հայաստանը բացառություն չէ: Տեխնոլոգիական աղետները նույնպես զգալի ռիսկի աղբյուր են:

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

2020 թվականի ավարտն է, համայն մարդկությունը ծանր փորձության միջով է անցնում. համավարակը դեռևս չի զիջում իր դիրքերը: Ցավոք, հայ ժողովրդի համար համավարակը չարյաց փոքրագույնն էր: Պատերազմը ծանր վերք թողեց հայության սրտում, և այսօր վատնված ուժն ու լավատեսությունը վերագտնելու կարիք ունենք բոլորս:

Անհրաժեշտ է կյանքի նոր շրջան մտնել՝ դասեր քաղած ու իմաստնացած, հույս ու հավատին ապավինած: Անհրաժեշտ է աշխատել, առաջ նայել, հուսադրել մեկմեկու և աջակցել ջերմ խոսքով ու բարի խորհրդով:

Ստեղծված իրավիճակում կարևորելով ՀՊՏՀ գիտնականների ասելիքը, մասնագիտական դիտարկումները՝ «Տնտեսագետը» զրուցել է նրանց հետ՝ փորձելով հասկանալ, թե ինչ դասեր է հարկավոր քաղել փորձություններով ու կորուստներով լի 2020-ից, ինչպես սկսել տնտեսության նորոգումը, ինչ ճանապարհով ընթանալ և ինչ իրական սպասումներ ձևավորել, ինչ է փաստում վիճակագրությունը և վերջապես՝ ինչով կհուսադրեն և ինչ կմաղթեն նրանք մեր հայրենակիցներին:

Մենք չենք կարող կանխատեսել ապագան, սակայն կարող ենք այն ստեղծել

Հետաքրքրական է, որ դեռևս Արևելյան Եվրոպայի, Կովկասի և Կենտրոնական Ասիայի (ԱԵԿԿԱ) և այլ պետությունների 2019 թ. համապարփակ հաշվետվություններում շրջակա միջավայրի վիճակի վերաբերյալ ամփոփված տվյալները մտահոգիչ էին, քանի որ Կայուն զարգացմանն ուղղված միջոցառումների իրականացման արդյունքները գոհացուցիչ չէին՝ տնտեսության էքսպոնենցիալ (տնտեսության ցուցչային աճ) զարգացման համեմատությամբ և չէին բավարարում ապագայի մարտահրավերների պահանջները: Ներկայացնեմ օրինակ. Արևմտյան երկրներում 1990-2017 թթ. ընթացքում ջերմոցային գազերի արտանետման քանակության միայն 22%-ն է կրճատվել, վերականգնվող էներգիայի նկատմամբ սպառողական պահանջը 2017 թ. հասել է ընդամենը 17,5%-ի, իսկ 1990-2015 թթ. ընթացքում ջրառի ծավալը կրճատվել է ընդամենը 19%-ով (ըստ 2019 թ. վերջին վերլուծական տվյալների): Եվ 2020 թվականը ենթադրում էր, որ այդ ցուցանիշների դանդաղ տեմպերը հիրամայական են՝ անցնելու Կայուն զարգացման քաղաքականության խիստ կամ ուժեղ տիպի, որն էլ իր հերթին նախատեսում էր կատարյալ փոփոխություններ (SOER–2020 հաշվետվություն): Ընդ որում, կանխատեսվում էր դրական արդյունքներ արձանագրել միայն 2030 թ.: SOER–2020 հնարավորությունների պլանավորման հաշվետվության ներածական մասում ուշադրության է արժանի հետևյալ կարգախոսը. «Մենք չենք կարող կանխատեսել ապագան, սակայն կարող ենք այն ստեղծել»:

2020 թվականը պատուհաս դարձավ՝ պայմանավորված մասնավորապես COVID-19 համավարակով և Արցախա-ադրբեջանական պատերազմով: Եթե տարվա սկզբում մի խումբ բնապահպաններ համավարակի տարածման կանխարգելման հետևանքով ձևավորված սահմանափակումները դիտարկում էին ի օգուտ բնության վերականգնման, ապա ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշն իր վերջին ելույթում նշում է, որ ներկայիս ջերմոցային գազի արտանետումները 62%-ով գերազանցում են 1990 թ. ծավալը, երբ դեռ նոր էր սկսվել կլիմայի վերաբերյալ միջազգային համագործակցությունը: Այսինքն, ըստ երևույթին, համավարակի կանխարգելման սահմանափակումները չեն նպաստել բնության վերականգնմանը և կլիմայի գլոբալ փոփոխության կանխարգելմանը: Եթե համավարակի տարածման կանխարգելման համար արդեն մշակվում է պատվաստանյութ և այն կարող է թոթափել այս համավարակի խնդիրը, ապա կլիմայի գլոբալ փոփոխության կանխարգելման պատվաստանյութը՝ Կայուն զարգացման քաղաքականության հնարավորությունների դիտարկումն ու դրույթների կատարումը, յուրաքանչյուր պետության լոկ ցանկությունն է, որն ուղղակի չի իրագործվում, քանի դեռ նյութապաշտությունն է գերիշխում:

Կարծում եմ, երբ հայի տեսակը վերհիշի իր ազգային արժեհամակարգը և այն գերադասի իր նյութապաշտական պահանջմունքներից, կարող է կրկին առաջինների շարքում դասվել և իրականացնել շրջանաձև տնտեսության զարգացման քաղաքականություն: Վերջինիս կենսագործման համար ունենք բոլոր նախադրյալները՝ թափոնների վերամշակում, պոչամբարների ռեկուլտիվացում, վերականգնվող էներգետիկայի զարգացում, ռեսուրսախնայողություն, օրգանական գյուղատնտեսություն, ցածրածխածնային արտադրություն, տրանսպորտի էկոլոգացում, ինչու չէ՝ նաև էկոզբոսաշրջություն:

Առավել ցավալի դրվագ արձանագրվեց Արցախյան երրորդ պատերազմի վերջում, որը մատնանշեց հենց ազգային գաղափարախոսության տկարությունը: Արմատավորված տնտեսության կառավարման ավանդական համակարգի ցանկացած փոփոխություն ցնցումներ առաջացրեց արտաքին և ներքին ազգային արժեհամակարգերում: Ուստի, խիստ վերանայումները կամ փոփոխություններն անհրաժեշտ է իրականացնել՝ միայն ազգային կամ հայրենասիրական գաղափարախոսություն ձևավորելուց հետո: Ընդ որում, ազգային

գաղափարախոսության հիմքում պետք է ավելացնել նաև հայրենի հողի, ջրի ու բնության պահպանության գաղափարը: Մեկ նկատառում ևս. ազգային գաղափարախոսությունը պետք է ներարկվի գիտության, պետական քաղաքականության և տնտեսական գործունեության կառավարման էկոհամակարգային միասնականության միջոցով:

Ասելիքս ամփոփեմ նախորդիվ նշված մեջբերմամբ՝ այո, մենք չենք կարող կանխատեսել ապագան, սակայն կարող ենք այն ստեղծել:

ՆԱԴԵԺԴԱ ԱՖՅԱՆ

ՀՊՏՀ բնօգտագործման տնտեսագիտության ամբիոնի ասիստենտ, տ.գ.թ.

Տնտեսության վերակառուցման հիմքում՝ գիտության դերի բարձրացումը

Փորձություններով լի անցնող տարվա դասերը ուսուցանող են: Կցանկանայի դրանք դիտարկել տարբեր տեսանկյուններից՝ որպես հայ և ՀՀ քաղաքացի, որպես դասախոս, գիտության մարդ, որպես տնտեսագետ:

Նախ, որպես հայ, կրկին գիտակցեցի, որ մեզ պետք է ազգային միասնական գաղափարախոսություն, որի շուրջ կհամախմբվենք բոլորս: Այդ գաղափարախոսության կարևոր բաղադրիչ է ամուր ընտանիքների ստեղծումն ու բարգավաճումը:

Որպես դասախոս և գիտության մարդ՝ կասեմ, որ կյանքի փորձը այսպիսով ցույց տվեց, որ արդեն սպառվել է ֆիզիկական ուժով հաղթանակի հասնելու մոտեցումը: Մեզ պետք են արդի գիտական լուծումներ, գիտական մտքի առարկայացման արդյունքում պետք է հասնենք նվաճումների թե՛ ռազմական, թե՛ առողջապահական և թե՛ այլ ոլորտներում:

Առավել ևս, երբ մեր երկիրն ունի գիտական մեծ ներուժ, պարզապես պետք է ռեսուրսները ճիշտ համախմբել:

Որպես տնտեսագետ՝ կընդգծեմ, որ, ըստ էության, մենք վերջին 30 տարիները մսխել ենք և տնտեսության հիմնական ուղիներն ենք դարձրել էքստենսիվ գյուղատնտեսությունն ու հանքարդյունաբերությունը: Մինչդեռ, խորհրդային տարիներին մեր տնտեսական զարգացման ուղին այլ էր՝ առավել գիտելիքահենք: Ըստ իս, գիտելիքահենքի գաղափարը պետք է Հայաստանի համար ճիշտ առարկայացնենք ու շարժվենք առաջ:

Տնտեսության վերակառուցման մասով. նախ, պետք է սկսել ճիշտ «ախտորոշումից», ներուժի ճիշտ գնահատումից: Տեխնոլոգիական զարգացման մակարդակով մենք հետ ենք մնացել լոկոմոտիվ երկրներից: Բայց այժմ մեր խնդիրը ոչ թե նրանց կրկնօրինակելն է, այլ որևէ բանով 1-ինը դառնալը: Եթե, օրինակ, մի երկիրն առաջինն է ստեղծել անօդաչու սարքերը, մենք էլ պետք է փորձենք դառնալ, ենթադրենք, ռոբոտ-զինվոր ստեղծող 1-ին երկիրը: Այսինքն, ավելի լայն իմաստով ասելիքս այն է, որ պետք է ընտրենք զարգացման նոր ճանապարհ: Դյուրին ճանապարհները երբեք լավ տեղ չեն տանում, իսկ բարդ ճանապարհների վերջում միշտ լույս է առկայծում:

Իսկ թե ինչ իրական սպասումներ ձևավորել՝ փոքր-ինչ դժվար է պատասխանել: Սակայն հստակ է մի բան, որ պետք է ծայրահեղություններից զերծ մնալ, լինել բավականաչափ իրատես և նույնքան լավատես: Խուճապային տրամադրությունները մեզ միայն կխանգարեն առաջ նայել: Ավելորդ հանգստություն և թուլություն դրսևորելը ևս խելամիտ չէ. օրինակ, կարծել, որ առաջիկա 5 տարում մեր երկիրն անվտանգ կլինի կամ ներկայում համավարակը նահանջում է և կորցնել զգոնությունը: Միշտ աչալրջության կարիք կա:

Տնտեսության վիճակի հետ կապված՝ կարող են մտահոգիչ թվալ դրամի արժեզրկման դրսևորումները: Մենք հիմնականում ներմուծող երկիր ենք, և դրամի թուլացումը պետք է խթանի արտահանումը: Այնուամենայնիվ, ՀՀ կենտրոնական բանկը չպետք է թույլ տա ազգային արժույթի կտրուկ անկում: Տնտեսական ցնցումները սերտորեն կապված են նաև համաշխարհային տնտեսության ոչ բարվոք վիճակի հետ: Թեկուզև դանդաղ քայլերով, բայց պետք է առաջ շարժվել:

Խորհուրդների առումով. նկատել եմ, որ գրեթե բոլորս խորհուրդ ենք տալիս, բայց կարևոր պահերին շատերս չենք հետևում դրանց: Նախ, ուզում եմ, որ մենք ինքներս մեր խորհուրդների հետևողը լինենք: Օգտվելով պատեհ առիթից՝ մաղթում եմ, որ, որպես նոր մեկնակետ, նոր տարվանից լինենք ավելի միասնական, համախմբենք մեր ուժերը՝ գերադասելով ազգային ու պետական շահը, մի կողմ թողնենք «ինձ հետ ես, ինձ դեմ ես» և այս բնույթի այլ արտահայտությունները: Առանձնակի պետք է արժևորենք կրթության դերը, գիտելիքը, ինքնազարգացումը: Գիտության ոլորտում մեզ պետք են իրական արդյունքներ, որոնք շոշափելի կլինեն և կծառայեն մեր երկրի տնտեսության հզորացմանը, անվտանգության ապահովմանը: Յուրաքանչյուրիս տնտեսական վարքագծից է կախված նաև երկրի բարգավաճումը:

ՎԱՐԴԱՆ ՎԼԱՍՅԱՆ

ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.

ՎԵՐԱՓՈԽՈՒՄՆԵՐԸ ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ ԳԻՏԵԼԻՔԻ, ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԵՎ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐ

2020-ին հայոց երկնակամարն ասես սև ամպերով պատվեց...

Համավարակը հիմնովին փոխեց մեր կյանքը՝ ճակատագրական և ճգնաժամային դառնալով յուրաքանչյուրիս համար, ստիպեց վերանայել մեր նպատակները, հայացքները, կենսակերպը: Եթե նախկինում մեզ թվում էր, թե մեր կյանքը կանխատեսելի է, վտանգազերծ և ապահով, ապա համավարակը գլխիվայր շրջեց մեր պատկերացումները հասարակական արժեքների վերաբերյալ: Համակերպվեցինք բոլոր այն պայմաններին, որոնք հետևանքն էին համաճարակի:

COVID-19 խարխլեց աշխարհը, պետությունները կղզիացան, մտան կաղապարի մեջ: Սակայն հաղթահարումը պահանջում էր համագործակցություն: Ճգնաժամն աստիճանաբար բացահայտում էր սոցիալ-տնտեսական անվտանգության համակարգերի և գլոբալ համագործակցության ոլորտում համավարակի պատրաստվածության ապահովման թերությունները:

Տնտեսական կոլապսը, տրանսֆերտների կրճատումը, զանգվածային հարկադիր պարապուրդների վճարումը, չնախատեսված ծախսերի շեշտակի ավելացումը հանգեցրին տնտեսության համատարած վերափոխման:

Անկախ այն հանգամանքից, որ համավարակի պայմաններում տնտեսությունը մասնակիորեն լճացավ, բիզնեսը և կրթությունը արագ հարմարվեցին ժամանակի հրամայականին՝ յուրացնելով նոր արտադրատեսակների արտադրությունը, զարգացնելով թվային հմտությունները՝ կրթության հեռավար կազմակերպումը, առցանց բանկային ծառայությունների մատուցումը, առևտրի տեղափոխումը էլեկտրոնային տիրույթ և այլն: Արագ վերափոխումները պահանջում են տարբեր բնագավառների միջև գիտելիքի, փորձի փոխանակման և համագործակցության նոր մոտեցումներ:

Աշխարհի շատ երկրներում կորոնավիրուսը դեռ գագաթնակետին չի հասել, իսկ տնտեսագետները, քաղաքագետներն ու փիլիսոփաները արդեն փորձում են տեսնել նոր աշխարհի ուրվագիծը, որը կառաջանա հիվանդության դեմ հաղթանակից հետո: Մեծամասնությունը համակարծիք է, որ մեծ փոփոխություններ են սպասվում տնտեսության, բիզնեսի, միջազգային հարաբերությունների, ներքին քաղաքականության, սոցիալական ոլորտի, բժշկության և մարդկանց վարքագծի մեջ: Բայց համաճարակի և դրա դեմ պայքարի գնի հետ կապված անորոշությունը ծնում է ճիշտ հակառակ կանխատեսումներ. ոմանք հավատում են նոր, լավագույն աշխարհին, ոմանք էլ կանխատեսում՝ երկարաժամկետ վատթարացում և քաղաքական կատակլիզմներ:

Ցավոք, համավարակը խլեց մարդկային բազմաթիվ կյանքեր՝ կորցրինք նաև հարգարժան գործընկերների:

Կարծում էինք՝ 21-րդ դարում սրանից մեծ աղետ չէր կարող կախվել մեր ժողովրդի գլխին, սակայն կրկնվեց այն, ինչ տեղի էր ունեցել 1915 թվականին. նոր ցեղասպանություն: Անօրեն թուրքի ձեռքով նահատակվեցին հազարավոր հայորդիներ, չիրականացված մնացին նրանց փայփայած երազանքները, որբ մնացին անմեղ երեխաներ, այրիացան հարսներ, որդեկորույս դարձան և սև հագան բազմաթիվ հայ մայրեր:

Պատերազմի արհավիրքից անմասն չմնաց նաև ՀՊՏՀ-ն: «Հաղթում ենք» հեշթեգն իր շուրջ համախմբեց ՀՊՏՀ-ականներին. մի խումբ կամավորներ շտապեցին Արցախ՝ հայրենիքի հանդեպ իրենց պարտքը կատարելու, մյուսներն էլ թիկունքում ֆինանսական, բնեղեն, բարոյահոգեբանական աջակցություն ցուցաբերեցին հայոց բանակին, արցախցիներին, վիրավորներին և որդեկորույս ընտանիքներին: Վիշտն ու ցավը սրտում, համավարակի վտանգն անտեսելով՝ ողջ անձնակազմը մի բռունցք դարձավ, սատար կանգնեց հայրենիքին: Մեր ուսանողների և նախկին շրջանավարտների սխրանքների հետ մեկտեղ, ունեցանք հերոսներ, որոնք իրենց կյանքը չխնայեցին հանուն հայրենիքի: Խոնարհվում ենք նրանց շիրիմների առջև և երդվում հավատարիմ մնալ նրանց ոգեղեն հիշատակին:

Պատերազմը փաստեց, որ հայ հասարակության, պետության, բանակի առջև ծառացած են բազմաթիվ խնդիրներ, որ մեր քաղաքական և ռազմական հասարակարգը այնքան էլ «անպարտելի» չէ: Բայց անպարտելի է հայ զինվորը, նրա պայքարող ու մաքառող ոգին:

2020-ը մեզ ստիպեց նորովի գնահատել կյանքը, գնալ առաջ, զարգանալ, շենացնել տնտեսությունը՝ կարևորելով գիտատար ճյուղերի, ռազմարդյունաբերության, տեխնոլոգիատար արտադրության զարգացումը: Պետք է վերափոխել գործարարության մոդելները:

Թանկ վճարեցինք, չափազանց թանկ: Ծուտով 2020-ն անցյալ կդառնա, բայց պատերազմի խոր վերքերը միշտ կուղեկցեն մեզ: Մեզանից յուրաքանչյուրը պետք է իր մեջ ուժ գտնի՝ նորովի վերաիմաստավորելու կյանքը, ավելի լուսավոր դարձնելու վաղվա օրը, գալիք սերունդների ապագան:

Հա՛յ ժողովուրդ, դու միշտ տոկուն ես եղել, քո գործն ազնիվ է, միշտ դիմակայել ես արհավիրքներին: Միշտ հաղթել ես, հիմա էլ կհաղթես, որքան էլ թշնամին նենգ է ու դրուժան:

ՆԱՐԻՆԵ ԽԱԼԱԹՅԱՆ

ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ.

Տարիներ շարունակ, մեր համալսարանն իր լավագույն ուսանողների ուսման առաջադիմությունը խրախուսում է անվանական կրթաթոշակներով:

Տեխնոլոգիական դարաշրջանի հարաճուն փոփոխությունները մերօրյա իրականություն են բերում ուսումնակրթական նոր չափորոշիչներ, որոնք ենթադրում են մրցունակության նոր՝ առավել բարձր մակարդակ: Համընդհանրացված կրթության պայմաններում ուսանողի գիտելիքն ու հմտությունները դառնում են լայնահուն՝ ընդգրկելով բազմաշերտ իմացություններ, սահմանելով լավագույնի նոր նշաձող: Ուսանողը պետք է լինի սովորող, հետազոտող, լեզուների իմացությամբ, ստեղծագործական մտքով, կամավորական ու նախաձեռնող: «Տնտեսագետն» իր տարեվերջյան համարում համախմբել է ՀՊՏՀ անվանական 7 կրթաթոշակակիրներին՝ պարզելու ժամանակակից կրթության պայմաններում նրանց մոտեցումները՝ ուսումնառության, մասնագիտանալու, ինքնակրթվելու նկրտումները:

Կրթաթոշակակիրները հանդես են գալիս կրթության դերն իմաստավորող ինքնօրինակ ասելիքով: Նրանք սովորում են անվճար համակարգում, գերազանց առաջադիմությամբ: Յուրաքանչյուրը հարուստ ներաշխարհով, ստեղծարար, պրպտուն, երազանքներով լի անհատ է, որի համար ՀՊՏՀ-ն դեպի մեծ կյանք ճանապարհի թևավորող մեկնակետ է:

Մաքրամաքուր բնության ողջ ասելիքը ներսումս փայփայած...

Ողջո՛ւյն, ընթերցո՛ղ, դժվար ժամանակներ են, այնպես չէ՞:

Անուս Հայկ է, Տավուշից եմ, մաքրամաքուր բնության ու փառահեղ լեռների ողջ ասելիքը ներսումս փայփայող մի երիտասարդ: Դու այս տողերիս, գուցե, մի բառ կվերագրես՝ «պաթոս»: Լավ, ուրեմն, մի անգամ էլ սկսեմ գրվածքս:

Ես Հայկն եմ, «Ժողի» 4-րդ կուրսի ուսանող: Այս կիսամյա՛կ էլ դարձա անվանական կրթաթոշակակիր: Առհասարակ, ՀՊՏՀ-ում փորձել եմ առավելագույնը ստանալ, հաճախ էլ՝ ստեղծել: Անցյալ տարի Գերմանիայում էի՝ որպես փոխանակային ուսանող, դրանից առաջ էլ «Ժողի» դահլիճում էի: Բեմից հանդիսավարներն ինձ ասացին, որ պետք է բեմ բարձրանամ՝ հասարակական ակտիվությանս համար ճանաչվել էի «Հասարակական գործունեություն ծավալող ՀՊՏՀ լավագույն ուսանող»: Այս ամենից հետո հասկացա, որ ժամանակն է՝ գիտական գործունեություն սկսելու: Կարճ կասեմ՝ սկսեցի ու ակտիվորեն շարունակում եմ:

Հիմա կասես՝ գլուխ է գովում, սկզբի «պաթոսը» փառք էր: Բայց, իրականում, երկու տարբերակն էլ տանում են մեկ մտքի, այն ուղերձին, որն ուզում եմ հղել:

Հայաստանի ծայրում ծվարած մի փոքրիկ գյուղում՝ հայրենի Չորաթանումս, մի կողմից պատշգամբում սեփական այգուց բերած մրգերի հյութը վայելելիս առջևումդ բացվում են հսկա լեռներ, կուսական անտառներ, մյուս կողմից՝ լսվում է սահմանային գծում կրակոցների ձայնը: Եվ այստեղ պարզապես չկա աշակերտի գործունեության համար անհրաժեշտ հնարավորությունների զգալի մասը, երբեմն գժվում ես...

Բայց այս իրավիճակում դու ինքնաբերաբար ոչ թե փորձում ես դառնալ հաղթող, այլ պարտավորվում ես լինել հաղթող, որովհետև լեռներում ոչ միայն հողն ու արևն են ջերմացնում մարդուն, այլև լեռների արևով ջերմացած մարդն է հոգի տալիս հողին:

Ու հիմա մեր հողն իրեն ջերմացնողի կարիքն ունի, իսկ երկրի տնտեսությունը կառուցվել ու գործում է հենց այդ հողի վրա, ուստի ժամանակն է լծվելու քո երազած տնտեսության կառուցման գործին: Գիտությունը քո կարիքն ունի, կրթությունը քո կարիքն ունի, Նալբանդյան փողոցի կոկիկ շենքը քո նվիրման կարիքն ունի: Սա է ինձ՝ ուսանողիս, երիտասարդիս առաջ մղող ուժը:

Թո՛ւյլ տուր, սիրելի՛ ընթերցող, ասելիքս ավարտել ինձ ոգեշնչող Նժդեհով.

«Կուզեի, որ դու, հա՛յ երիտասարդ, որ դու յուրացնեիր ինքնաճանաչությունը՝ որպես ուժի, հաղթանակի և բարձր երջանկության ամենակարճ և ամենաստույգ ճամփան:

Ծանի՛ր ինքդ քեզ»: *(Գարեգին Նժդեհ, «Որդիների պայքարը հայրերի դեմ»):*

Հայկ Քալանթարյան
Կարպիս Կարագյանի անվան կրթաթոշակակիր,
հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի
հաշվապահական հաշվառում և հարկում մասնագիտության
4-րդ կուրսի ուսանող

Չորս տարի է անցել այն օրից, երբ աշխարհը փոխվեց ինձ համար...

Երբ Երևան եկա՝ բուհում սովորելու, դեռ չէի գիտակցում դպրոցում լսածս «նոր կյանք» արտահայտության էությունը: Երբ ծնողներս եկան ինձ այցի և նորից հայրենիքս՝ Ջուջևան էին վերադառնում և դուռն իրենց հետևից փակեցին, երբ ես՝ նորաթուխ ուսանողս, պատուհանից տեսա նրանց հեռացող մեքենան և աչքերս սահեցրի նրա հետագծով մինչև վերջին փոքրիկ կետը, առաջին անգամ ինձ միայնակ զգացի... Չորս տարի առաջ էր, երբ աշխարհը փոխվեց ինձ համար: Այդ օրվանից ի վեր սուր զգացողություններից պոռթկացող մի ձայն վճռականորեն ինձ հուշում է՝ որտեղ եմ և ինչ առաքելությամբ եմ եկել:

Ավարտական կուրսում եմ: ՀՊՏՀ-ն դարձել է իմ մասնիկը: Տարիների ընթացքում, ՀՊՏՀ-ն՝ իբրև կրթական, ընկերական միջավայր, ինձանում ձևավորեց ուսումնատենչ ուսանողի, տնտեսագետի մտածողություն: Առաջին քայլերս փորձեցի կատարել աշխատաշուկայում, գիտության մեջ: Մասնակից դարձա մի քանի գիտաժողովի: Երեկվա վախվորած ուսանողն ամեն օր համալսարան էր գալիս ավելի ինքնավստահ դարձած՝ «Այսօր լինել ավելի լավը, քան երեկ էի» կարգախոսով: Քայլ առ քայլ՝ ՀՊՏՀ-ի հետ: Հետո արդեն ինձ տեսա անվանական կրթաթոշակակիրների թվում:

Միշտ մտածել եմ, որ պիտի տնտեսագետ դառնամ: Այսօր, առավել քան երբևէ, վերահմաստավորում ու կարևորում եմ տնտեսագետի դերը:

Առաջին կուրսում, երբ դասախոսը բացատրում էր տնտեսական պարբերաշրջանը և ներկայացնում ալիքաձև գծապատկերը, դա յուրացնում էի սոսկ որպես հերթական դաս, իսկ այժմ այդ նվազող ալիքը տեսնում եմ տեսությունից դուրս՝ իրականում, տեսնում եմ դրա հաղթահարման գործում տնտեսագետի էական դերակատարումն ու առավել պատասխանատվությամբ մոտենում ուսմանս: Ի վերջո, ո՞վ է կանգնած տնտեսության հզորացման գործի հետևում, եթե ոչ՝ լավ տնտեսագետը: Երկիրը շենացնելու լուսավոր երազանքն ամեն օր մղում է համառ աշխատանքի՝ այսօր՝ ուսանող, վաղը՝ տնտեսագետ լինելու պայմանով: Ոչ թե սոսկ ուսանող կամ տնտեսագետ լինելու, այլ լավ ուսանող ու լավ տնտեսագետ լինելու: Հետևաբար, պետք է սովորել համառորեն ու հետևողական կերպով:

Անահիտ Իսրայելյան
Հովհաննես Թումանյանի անվան կրթաթոշակակիր,
ֆինանսական ֆակուլտետի ֆինանսներ մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող



...

Չկան լավագույն մասնագիտություններ, կան լավագույն մասնագետներ

Արդեն չորրորդ տարին է՝ Տնտեսագիտական մայր բուհի ուսանող եմ, մասնագիտությունս՝ վիճակագիր:

Մեր օրերում ժամանակակից բուհ և մասնագիտություն ընտրելը բավարար չէ ժամանակակից ուսանող լինելու համար: Պետք է քեզնից կերտես այն մրցունակին, որը կկարողանա արևի տակ իր տեղը գտնել...

Մենք սովորում ենք լայն հնարավորություններ ընձեռող բուհում: Պարզապես անհրաժեշտ է մեծ կամք՝ որպես ուսանող հասնելու շոշափելի արդյունքի, հետո սահմանել նոր նպատակներ ու ընթանալ անշեղորեն: Իսկ ինչո՞ւ տքնաջան աշխատել այսօր. իհարկե՝ վաղը լավագույն մասնագետ դառնալու մեծ ու կարևոր նպատակի իրագործման համար:

«Լավագույն մասնագիտություն» արտահայտության հետ այնքան էլ համաձայն չեմ, քանի որ պետք է պարզապես լինել լավագույն մասնագետ: Միաժամանակ տասնյակ անձինք կարող են ընտրել տվյալ մասնագիտությունը, բայց տասնյակներից ընդամենը մի քանիսը կարող են դառնալ լավագույն մասնագետ:

Կյանքում, այո՛, կան լավագույններ, կան ամեն ոլորտում, և յուրաքանչյուրն իր ներսում պետք է հետևողականորեն ձգտի համալրել նրանց շարքերը:

Եվ նրանց շնորհիվ է, որ հնարավոր է ապահովել զարգացում:

Սովորել՝ հանուն առաջընթացի:

Մարիաննա Դանիելյան
Անուշավան Արզումանյանի անվան կրթաթոշակակիր,
ինֆորմատիկայի և վիճակագրության ֆակուլտետի
վիճակագրություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող

Ապավինելով կրթությանը՝ կգտնես քո տեղը

Թվերի աշխարհը ինձ համար գրավիչ էր փոքր հասակից: Տարիներ անց այդ հետաքրքրաշարժ թվերի հանդեպ սերն ինձ բերեց այն բուհական հաստատություն, որտեղ պետք է թվերի աշխարհն իր ողջ հմայքով ուսումնասիրեի և մասնագիտական կրթություն ստանայի: Անվճար հիմունքներով ընդունվեցի ՀՊՏՀ կառավարման ֆակուլտետ: Դեռ սկզբում այդքան էլ հստակ պատկերացում չունեի մասնագիտությանս վերաբերյալ և, որպես առաջին կուրսեցի, մտավախություն ունեի, որ հնարավոր է՝ չկարողանամ լավ սովորել: Բայց արի ու տես, որ 3 տարի անց պիտի դառնայի անվանական կրթաթոշակակիր՝ իմ ուսերին կրելով մի ողջ ֆակուլտետի առաջավոր ուսանողի պատասխանատվությունը:

Համալսարանում տարեցտարի ամբարած գիտելիքները մի օր քեզ վստահեցնում են, որ ճիշտ ուղու վրա ես, որ կրթությունը կարևոր է, որովհետև դրա շնորհիվ ես կարողանում քեզ լիարժեք զգալ, հույսդ քեզ վրա դնել:

Այսօր կատարում եմ հետազոտություններ, հեղինակում եմ գիտական հոդվածներ: Ծուտով հրապարակված հոդվածներիս թիվը կհասնի 3-ի: Հետաքրքրություններիս շրջանակում նաև ֆինանսական ոլորտն է. թվերի հանդեպ մանկուց եկող սերը չի մարել, հակառակը...

Կառավարման ֆակուլտետում սովորելով ինձանում որոշակիորեն ձևավորել եմ ղեկավարի և առաջնորդի կերպար, կազմակերպչական գերազանց հմտություններ:

Գուցե, դժվարանամ կանխորոշել, թե կոնկրետ ուր կտանեն ինձ քայլերս, բայց մի բանում վստահ եմ՝ ապավինելով կրթությանը, կգտնեմ իմ տեղը: Տնտեսագիտական մայր բուհն, անշուշտ, այդ կրթության երաշխավորներից է, և ուսման հարգն իմացողի կայացման գործում նրա ներդրումը չի կարող կասկածի տակ առնվել:

Գևորգ Բաղդասարյան
Հաքարե Բաշինջաղյանի անվան կրթաթոշակակիր,
կառավարման ֆակուլտետի կառավարում
մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող

Առաջին կուրսի առաջին օրը սահմանածս նպատակն իրագործելով...



Նոր էի մուտք գործել համալսարան: ՀՊՏՀ ղեկավարությունը, ավանդույթի համաձայն, լսարաններ էր մտնում, ծանոթանում ուսանողների հետ ու խորհուրդներ հղում: Երբ մեր ֆակուլտետի դեկան պարոն Գրիգոր Նազարյանը մեր համալսարանական կյանքի առաջին իսկ օրը հորդորեց լավ սովորել, առավելագույնը քաղել ՀՊՏՀ-ից, նա ընդգծեց, որ առաջավոր ուսանողներն արժանանում են անվանական կրթաթոշակի: Դա ինձ համար շատ մեծ մոտիվացիա դարձավ, ու այդ օրվանից կենտրոնացա լավագույններից մեկը դառնալու, ՀՊՏՀ-ի արժանի սանը լինելու մտքի վրա:

Ըստ ամենայնի, տնտեսագիտության մեջ կայանալու ճանապարհին պետք է պատրաստ լինել անելու մի քանի անգամ ավելին, քան բուհն է պահանջում: Խոսքը ինքնակրթության, ինքնազարգացման ու ինքնաճանաչման (սեփական կարողությունները բացահայտելու) դերը չերկրորդելու մասին է:

Դեռ առաջին կուրսից մասնակցել ու շարունակում եմ մասնակցել ներբուհական, հանրապետական, միջազգային գիտաժողովների, հետազոտություններ եմ կատարում ու ներկայացնում: Տարեցտարի հղկվել ու ավելի լուրջ հետազոտական աշխատանքներ հեղինակել. սա ևս կրտսեր կուրսերում իմ նպատակներից մեկն էր: Պատրաստակամ դասախոսների շնորհիվ սիրեցի գիտությունը և գիտությամբ զբաղվելը: Այժմ ՈւԳԸ անդամ եմ, «Enlight հանրային հետազոտությունների կենտրոն» ՀԿ-ում աշխատում եմ որպես տնտեսագետ-վերլուծաբան, ներգրավված եմ ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ուսանողական հետազոտական խմբի աշխատանքներում:

Բուհն ավարտելու նախաշեմին մի հաստատ համոզմունք ունեմ՝ պետք է դուրս գալ դասագրքային իրականությունից, ուսումնասիրել ու փորձել ստեղծել քոնը, չսահմանափակվել նրանով, ինչը պահանջվում է քեզնից կամ բավարար է, պատրաստ լինել անտրտունջ ու անխոնջ աշխատանքի... Սա՛ է զարգացման հիմքը:

Մենք պարտավոր ենք օգտակար լինել մեր փոքր երկրի առջև ծառացած մեծ ու խրթին խնդիրների լուծման գործում:

Նարինե Պետրոսյան
Միքայել Քոթանյանի անվան կրթաթոշակակիր,
տնտեսության կարգավորման և միջազգային տնտեսական հարաբերությունների
ֆակուլտետի տնտեսագիտություն մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող

Կարողանալ մտածել այլ կերպ, շարժվել դեպի նորը...

«Կրթությունը գիտելիքների քանակը չէ, այլ լիակատար ըմբռնումն ու հմուտ կիրառումն այն ամենի, ինչը գիտես». ասել է գերմանացի մանկավարժ Ադոլֆ Դիստերվեգը:

Չորրորդ կուրսում իմ ամենամեծ ձեռքբերումներից մեկը համարում եմ այն, որ ստացել եմ մրցունակ կրթություն: Բազմակողմանի և ստեղծագործական մարքեթինգը կարողանում է ուսանողի մեջ ձևավորել տեսական ու գործնական գիտելիքի ամբողջություն, սովորեցնում է մտածել, ճկուն լինել: Կրթությունս ինձ հնարավորություն է տալիս դյուրին կերպով հարմարվելու նոր միջավայրում, աշխատելու թիմում և ճանաչելու մարդկանց:

Կրթության ճանապարհին նախ պետք է հասկանաս ինքդ քեզ՝ որտեղ ես, ինչի համար և ինչի ես ուզում հասնել: Ուսման հանդեպ գիտակցված մոտեցումը աղերսվում է նաև ինքնակրթության հետ: Հենց ինքնակրթությունն է, որ հաճախ օգնում է դուրս գալ կաղապարներից, մտածել այլ կերպ, շարժվել դեպի նորը...

Ուզում եմ, որ յուրաքանչյուրս պատասխանատու լինենք ուսումնառության հարցում: Հիմա, առավել քան երբևէ, մեր երկրում կրթության դերը վերաարժևորվում է: Ամեն մասնագիտություն կարևոր է յուրովի: Ուժեղ պետություն կերտելու համար լավ մասնագետներ են պետք, իսկ մասնագետ դառնալու հիմնական ճանապարհը դժվարանցանելի, բայց հաղթահարելի է: Եկեք դառնանք այդ ճանապարհը հաղթահարող անցորդ:

Սյուզաննա Գաբրիելյան
Վլադիմիր Ներկարարյանի անվան կրթաթոշակակիր, մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի մարքեթինգ մասնագիտության 4-րդ կուրսի ուսանող

21-րդ դարում ամենագործուն ու հզոր զենքը գիտելիքն է

Մանկուց հրապուրված էի թվերի, հաշվարկների, բանաձևերի, տնտեսության, գործարարության աշխարհով, ավելի հասուն տարիքում՝ տնտեսական գործունեությամբ: Թերևս, այդ հասունացող հետաքրքրվածությունն էլ ինձ բերեց Տնտեսագիտական համալսարան: Չեմ սխալվի, եթե ասեմ, որ ինձ բախտ է վիճակվել ընդգրկվել այն մարդկանց շարքում, ում մանկական անկեղծ, պարզ ու նվիրական երազանքը, կապված մասնագիտական կողմնորոշման հետ, իրականություն է դարձել: Առաջին կուրսում ես պարզապես շատ ու շատ երազանքներ ունեցող և ապագայի հանդեպ եռանդով լցված մի ուսանող էի: Այսօր, արդեն 3-րդ կուրսում, այդ երազանքներն իրականանում են: Վստահ եմ՝ ՀՊՏՀ-ի հետ հասնելու եմ ավելիին:

Որպես ուսանող՝ հիմա հաստատ գիտեմ, որ 21-րդ դարում ամենագործուն ու հզոր զենքը գիտելիքն է, որի շնորհիվ կարող ես փոխել աշխարհը, ճանաչել ու ընկալել այն իր ամբողջ բազմազանությամբ: Գիտելիքն է այն ոսկե բանալին, որը մեր հետագա կյանքի ընթացքում օգնելու է մեզ ամենաամուր կողպված դռները բացել: Ես և Տնտեսագիտական համալսարանը ամեն օր, ձեռք ձեռքի տված, միասին ձուլում ենք այդ բանալին:

Համոզմունքս է՝ մենք ուժեղ ենք մեր գիտելիքով, խելացի ազգն է զորեղ: Ուստիև, կրթությունն ու գիտելիքը ինձ համար առաջին տեղում են:

Ալինա Առուշանյան
Ուսանողական խորհրդի կողմից սահմանված կրթաթոշակակիր, հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող

Պատրաստեց ՆԱՆԵ ԱՎԱՆԵՍՅԱՆԸ

2020 թվականը հատկապես հայ ժողովրդի համար ծանր էր, քանի որ ամբողջ աշխարհին պատուհասած թշգավարակին սեպտեմբերի 27-ին երկրորդեց Արցախ-ադրբեջանական պատերազմը: ՀՊՏՀ բանկային գործի եվ ապահովագրության ամբիոնի վարիչի ժ/պ, տ.գ.թ., դոցենտ Աշոտ Մարդոյանի հետ «Տնտեսագետը» զրուցում է նշված իրադարձությունների հետեվանքով մեր երկրի ֆինանսաբանկային ոլորտում ստեղծված իրավիճակի մասին:

Բանկային համակարգն իր հիմնական ցուցանիշներով տարին կեզրափակի աճով.

Աշոտ Մարդոյան

– Պարո՛ն Մարդոյան, 2020 թվականը մեր երկրի և ժողովրդի համար ծանր տարի էր ինչպես կորոնավիրուսի, այնպես էլ Արցախա-ադրբեջանական պատերազմի պատճառով: Հայաստանի բանկային ոլորտն ինչպե՞ս արձագանքեց այս երկու աղետալի իրադարձություններին:

– Նախ՝ շնորհակալ եմ հարցազրույցի համար: Իրոք, պետք է նշել, որ 2020 թվականը համաշխարհային տնտեսության և, իհարկե, մեր տնտեսության համար, բավական ծանր տարի կարելի է համարել: Այս ամենով հանդերձ, պետք է փաստենք, որ մեր բանկային համակարգը բավական կայուն է, և դա արդյունք է 25 տարվա քրտնաջան աշխատանքի: Կարող ենք արձանագրել, որ ՀՀ բանկային համակարգը տարածաշրջանում ամենակայացածն է, ունի մեծ դիմադրողականություն, ինչն ապացուցվել է և՛ 1997-1998 թվականների ասիական ֆինանսական, և՛ 2008 թվականի համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամերի ընթացքում և, ինչու ոչ, կորոնավիրուսի պատճառով առաջացած ճգնաժամի պայմաններում: Եթե դիտարկենք կորոնաճգնաժամի ժամանակաշրջանը, ապա պետք է փաստենք, որ բանկային համակարգն իր հիմնական ցուցանիշներով աճ է արձանագրել, օրինակ՝ 2020 թվականի երրորդ եռամսյակում, նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ, հաշվեկշռային հիմնական ցուցանիշների գծով, ունենք հետևյալ պատկերը՝ ընդհանուր ակտիվներն աճել են 16.5, պարտավորությունները՝ 17.5, իսկ կապիտալը՝ 10.8 տոկոսով:

Ինչպես գիտենք, ՀՀ-ում կորոնավիրուսով առաջին հիվանդի դեպքը հայտնաբերվել էր այս տարվա փետրվարի 28-ին, և եթե փորձենք դիտարկել այդ ժամանակաշրջանից սկսած, ապա կտեսնենք, որ ունենք հետևյալ շարժընթացը. եթե ընդհանուր ակտիվները 29.02.2020 թ. կազմել են շուրջ 5.8 տրլն ՀՀ դրամ, ապա արդեն 31.07.2020 թ. այն շուրջ 6.1 տրլն ՀՀ դրամ էր, այսինքն՝ այս ցուցանիշով ունենք աճ: Նման իրավիճակ է նաև վարկային պորտֆելի գծով. եթե ՀՀ առևտրային բանկերի կողմից ռեզիդենտներին տրամադրված վարկերը 01.03.2020 թ. կազմել են շուրջ 3.4 տրլն ՀՀ դրամ, ապա 31.10.2020 թ. արդեն 3.7 տրլն ՀՀ դրամ էր: Աճն ակնհայտ է: Ինչ վերաբերում է ավանդային պորտֆելին, ապա այստեղ ունենք չնչին անկում. 01.03.2020 թ. ընդհանուր ավանդային պորտֆելը կազմել է 3.52 տրլն ՀՀ դրամ, իսկ 31.10.2020 թ. նվազել է՝ դառնալով 3.49 տրլն ՀՀ դրամ: Իհարկե, սեպտեմբերի 27-ին սկսված պատերազմն իր ճշգրտումները կիրականացնի չորրորդ եռամսյակում, սակայն կարող ենք նշել, որ բանկային համակարգն իր հիմնական ցուցանիշներով տարին կեզրափակի աճով:

– Ինչպե՞ս եք գնահատում ոլորտում իրավիճակը և ի՞նչ հետևանքներ կարող են ունենալ նշածս իրողությունները մեր ամբողջ տնտեսության վրա:

– Որպեսզի գնահատենք ոլորտի իրավիճակը, պետք է կրկին դիտարկենք բանկային համակարգի կարևորագույն որոշ ցուցանիշներ: Հատկանշական է, որ այսօր առևտրային բանկերի և վարկային կազմակերպությունների ակտիվները միասին կազմում են ֆինանսական համակարգի ակտիվների շուրջ 95 տոկոսը, ֆինանսական հատվածում աշխատող շուրջ 14500 աշխատակցից 12700-ն աշխատում է բանկերում, և ոլորտը, աշխատավարձի չափով, տեղեկատվության և կապի հետ միասին, կիսում է երկրորդ տեղը՝ զիջելով միայն հանքարդյունաբերությանը: Շատ կարևոր է արձանագրել, որ ակտիվներ/ՀՆԱ և վարկեր/ՀՆԱ ցուցանիշները 2020 թ. առաջին կիսամյակի ընթացքում աճել են 5.6 և 4.7 տոկոսով և կազմել 94.6 և 56.8 տոկոս:

Ինչպես տեսնում ենք, կորոնաճգնաժամը վնաս չի

հասցրել բանկային ոլորտին, նույնիսկ կարող ենք նշել՝ որոշ դեպքերում էական, դրական փոփոխություններ է բերել, օրինակ՝ անկանխիկ գործարքները կտրուկ աճել են, իսկ, ինչպես գիտենք, դա մեր երկրում մշտապես խնդիր է եղել:

– Այդուհանդերձ, Ձեր կարծիքով, ինչպիսի՞ ցուցանիշներով կավարտվի տնտեսական տարին:

– Այս ամենով հանդերձ պետք է նշել, որ պատերազմի հետևանքը, իհարկե, բացասաբար կազդի երկրի տարեկան մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների վրա. ըստ տարբեր միջազգային կառույցների՝ երկրում տնտեսական անկումը կկազմի 4.9-6 տոկոս, որոշ դեպքերում նշվում է ընդհուպ մինչև 8 տոկոս: Այստեղ հիմնական խնդիրն այն է, որ ամեն ջանք պետք է ներդնել, որ տարեվերջին ցուցանիշն առավելապես մոտ լինի 0 նիշին: Տարեսկզբից մինչ հոկտեմբեր բյուջեի եկամուտները նվազել են շուրջ 62 մլրդ ՀՀ դրամով, իսկ հոկտեմբերին որոշ չափով սկսել են աճել: Ինչ վերաբերում է 2021-ին, ապա, ըստ Էկոնոմիկայի նախարարության նոյեմբերի սկզբին հնչեցրած կանխատեսման, տնտեսության վերականգնումը կլինի 4-5 տոկոսի սահմաններում:

Եթե փորձենք ապագային միտված կանխատեսում կատարել, ապա պետք է նշենք, որ 2021 թ. հիմնական տնտեսական ցուցանիշները կաճեն, և դա առաջին հերթին այն դեպքում, եթե երկրում հաստատվի քաղաքական կայունություն: Ես այս տեսակետից եմ կանխատեսում իրականացնում: Նաև միջազգային կառույցների կողմից 2021 թվականը վերականգնման տարի է հայտարարվել, և արդեն այսօր այդ միտումները նկատելի են: Չմոռանանք այն, որ տնտեսական պատմությունն ունի բավական հետաքրքիր, առեղծվածային դեպքեր (օրինակ՝ ֆորսմաժորային՝ երկրաշարժից, պատերազմից կամ նմանօրինակ իրավիճակներից հետո), երբ տնտեսություններն արագ, կառուցվածքային փոփոխությունների արդյունքում, նոր շունչ են ստանում և հաջորդող տարիներին ունենում բավական դրական տեղաշարժեր: Այդպիսի երկրներ կարող ենք համարել Հարավային Կորեան, Սինգապուրը, Գերմանիան, Ճապոնիան, Իտալիան, ինչու ոչ՝ Վրաստանը:

Հեռուն գնալով նշենք, եթե տարածաշրջանում տեղի ունենա շրջափակման վերացում, որը, ի դեպ, նախատեսված է նոյեմբերի 9-ի եռակողմ համաձայնագրով, անխոս, ՀՀ տնտեսությունը և հետևապես՝ բանկային համակարգը կարող են ունենալ էական աճ: Սա հնարավոր կլինի ապահովել ճիշտ քաղաքական որոշումների արդյունքում, իսկ, ինչպես գիտենք, քաղաքականությունը «սեղմված» տնտեսագիտությունն է: Եթե չհաջողվի երկրում կայունություն ապահովել, ապա այն կազդի ամբողջ երկրի տնտեսության օղակների վրա՝ իր բոլոր բացասական հետևանքներով. աղքատության մակարդակի և արտագաղթի աճ, որն էլ իր հերթին բանկային համակարգին կհասցնի էական վնասներ:

Չմոռանանք նաև, որ այս տարվա դեկտեմբերի 31-ից Թուրքիայից ներկրվող ապրանքների գծով գործելու է արգելանք, ինչը ներքին արտադրողի համար որոշակի խթան կհանդիսանա: Ներքին արտադրության աճին կնպաստի նաև այս տարվա մարտի սկզբից սկսված դրամի աստիճանական արժեզրկումը:

Արգելանքը տարածվելու է շուրջ 2200 ապրանքատեսակների գծով, և ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ արտադրատեսակների շուրջ 80-90 տոկոսը հնարավոր է փոխարինել ներքին արտադրությամբ: Փաստենք, որ Թուրքիայից ներկրվող ապրանքների շուրջ 60 տոկոսը կազմում է տեքստիլ արդյունաբերությունը: Ուսումնասիրելով մեր երկրի արտահանման և ներմուծման ցուցանիշները՝ նկատելի է, որ Թուրքիայից ներմուծում ենք 253 մլն ԱՄՆ դոլարի ապրանք և ծառայություն, իսկ արտահանում 100 անգամ պակաս՝ ընդամենը 2.5 մլն ԱՄՆ դոլարի:

Անկեղծ ասած՝ ես կարևորում և հետևում եմ նաև նավթի միջազգային գներին և, եթե այս տարվա մարտի 31-ին 1 բարել նավթն արժեր 23 ԱՄՆ դոլար, ապա ապրիլի 1-ից այն աստիճանաբար սկսեց աճել, և արդեն դեկտեմբերի 4-ին միջազգային բորսաներում Brent տեսակը վաճառվում էր 49 ԱՄՆ դոլարով: Դեկտեմբերի 3-ին ՕՊԵԿ+ գագաթաժողովը բավական ծանր ընթացք ունեցավ, սակայն, այնուամենայնիվ, որոշում ընդունվեց 2021 թ. հունվարից արդյունահանումն ավելացնել օրական 500 հազ. բարել: Եվ սա այն բանի համար, որ արդեն ամբողջ աշխարհում նկատվում է նավթի պահանջարկի աճ, այսինքն՝ համաշխարհային տնտեսությունն առողջացման միտում է դրսևորում: Նավթի գնի աճը հանգեցնում է նաև Ռուսաստանում ռուբլու արժևորմանը, որի արդյունքում մեր արտահանվող ապրանքներն առավել նպաստավոր վիճակում կհայտնվեն ռուսական շուկայում: Կարճ ասած՝ այս սցենարով հաջորդ տարի կունենանք արտահանման էական աճ:

Պարզ է նաև, որ 2021 թվականի գարնանը կորոնավիրուսի դեմ պատվաստանյութերն արդեն պատրաստ կլինեն, դա ևս կնպաստի նավթի գնի աճին: Այս առումով Մեծ Բրիտանիան և Ռուսաստանն արդեն հայտարարել են, որ շուտով իրենց երկրներում համատարած պատվաստում են իրականացնելու. կարծում եմ՝ մոտ ժամանակներս կլսենք նաև նոր երկրների անուններ: Ի դեպ, այդ պատվաստանյութերի ՕԳԳ-ն հասնում է շուրջ 94 տոկոսի, ինչը շատ լավ է:

– Նոյեմբերի երկրորդ կեսից փոփոխության ենթարկվեց նաև արտարժույթի շուկան, նկատի ունեմ մասնավորապես դոլարի արժևորումը, դրամի անկումը: Ինչպիսի՞ պատկեր է այս հատվածում:

– Պետք է փաստենք, որ մեր երկրում դրամի արժեզրկումը սկսվել էր դեռևս այս տարվա մարտի 9-ից, այսինքն՝ կորոնավիրուսի առաջին հայտնաբերված դեպքից 10 օր անց, իսկ սեպտեմբերի 29-ից՝ պատերազմից 2 օր անց, արժեզրկման տեմպն առավել արագացավ և գագաթնակետին հասավ նոյեմբերի 24-ին, երբ ՀՀ ԿԲ-ն սահմանեց մեկ դոլարի համար 512 ՀՀ դրամ: Ի դեպ, այս տարվա հունվարի 8-ի՝ ՀՀ ԿԲ սահմանած փոխարժեքում 1 ԱՄՆ դոլարի համար սահմանվել էր 479.8 ՀՀ դրամ: Իհարկե, սեպտեմբերի 29-ից արագացված տեմպով դրամի արժեզրկումը սպասելի էր և հիմնականում արդյունք էր անորոշության, դրան նպաստեց նաև պատերազմը, որն ակտիվացրեց շուկայում սպեկուլյացիոն գործարքները, և մեկ ԱՄՆ դոլարն անցավ հոգեբանական ցուցիչը, այն է՝ 500 ՀՀ դրամը: Փոխանակման կետերում նոյեմբերի 24-ին այն հասավ 516-518 ՀՀ դրամի: Այժմ փոխարժեքի շուկայում նկատում ենք ԱՄՆ դոլարի

գնի որոշակի վայրիվերումներ՝ անկման միտումով, և շուտով կձևավորվի հավասարակշռված գինը, որը, ի դեպ, արդյունք է նոյեմբերի 24-ից սկսված ՀՀ ԿԲ միջամտության: Այն շուկայում իրականացնում է դոլարային ինտերվենցիա, և պետք է արձանագրենք, որ հերթական անգամ ԿԲ-ն իր հզոր գործիքակազմով գործեց շատ արդյունավետորեն:

Փաստենք. որպես կանոն, դեկտեմբերի կեսերից սկսած, մարդիկ իրենց կուտակած որոշակի դոլարային ռեսուրսները, ծախսերն ավելացնելու նպատակով, վերածում են դրամի, որը ևս կնպաստի որոշակիորեն դոլարի փոխարժեքի կայունացմանը: Ի դեպ, տարածաշրջանի բոլոր երկրներում, ազգային արժույթի արժեզրկում տեղի է ունեցել, և այս իմաստով մենք եզակի չենք:

Դրամի արժեզրկումն իհարկե նպաստում է ներդրումների ավելացմանը, և երկրի համար առավել ձեռնտու է ոչ թե ներմուծումն, այլ արտահանումը, սակայն քանի որ մեր երկիրը գրեթե կրկնակի ավելի է ներմուծում, քան արտահանում (ներմուծում ենք շուրջ 5.6 մլրդ ԱՄՆ դոլարի ապրանք և ծառայություն և արտահանում 2.6 մլրդ ԱՄՆ դոլարի), ապա դոլարի փոխարժեքի բարձրացումը կարող է երկարաժամկետում բերել ներմուծվող ապրանքների թանկացման, որն այս պահին այնքան էլ իրատեսական չեմ համարում՝ կապված ամբողջական պահանջարկի նվազման հետ: Ներմուծողները, թանկացնելով ապրանքները, պարզապես շուկա կկորցնեն: Կարծում եմ՝ նրանք կսպասեն դոլարի կայունացմանը, և գների բարձրացում տեղի չի ունենա, իսկ տարին կփակենք կրկին անգամ նախատեսված 4+/-1 միջակայքից ցածր գնաճով՝ 1.5 տոկոսի շրջանակում: Ինչ վերաբերում է որոշ ապրանքների թանկացմանը, օրինակ՝ կարագ, ձեթ, շաքարավազ, ապա դա հետևանք է միջազգային գների բարձրացման, որոնք ընդհանուր գնաճի ցուցանիշում էական չեն լինի:

Շատ կարևոր է նշել, որ թեև դրամի արժեզրկումը հանգեցնում է ներդրումների և ներքին արտադրության ծավալների ավելացման, սակայն դա այդպես պարզ չի իրականացվում: Ինչպես ասում է տնտեսագիտության հիմնադիր Ադամ Սմիթը, «ներդրումները, փողը չեն սիրում պատերազմ և անկայունություն»: Անհրաժեշտ է դրամի աստիճանական արժեզրկմանը զուգընթաց իրականացնել էական խթանող քաղաքականություն, հիմնականում՝ հարկերի և սուբսիդավորվող վարկերի տեսքով: Շատ կարևոր է աշխատանքի արտադրողականության բարձրացմանը միտված քայլեր ձեռնարկել, մեր երկիրը այդ ցուցանիշով բավական հետ է, իսկ դա, ինչպես գիտենք, իր հերթին բերում է արտադրանքի ինքնարժեքի բարձրացման, հետևապես՝ ներդրումների համար մեր երկիրը հրապուրիչ չի դառնում: Կարևոր է նաև պահանջարկը խթանելը. ինչպես ասում են՝ ճգնաժամերն անցնում են, սակայն մարդկանց հոգեվիճակում շարունակվում են պահպանվել: Անհրաժեշտ է նաև հոգեբանական փոփոխություններ և դրական սպասումներ ձևավորել: Կիսահումորով նշեմ, որ այսօր սոցիալական ցանցերին և լրատվամիջոցներին քիչ հետևելու դեպքում քաղաքացիների շրջանում արդեն իսկ կձևավորվեն դրական սպասումներ, իսկ տարաբնույթ, հակասական լուրերը միայն անորոշություն և սթրեսային իրավիճակ են ստեղծում, որն իր հերթին նպաստում է պահանջարկի ոչ լիարժեք ձևավորմանը:

Առանցքային է նաև, թե արդյոք կկարողանանք Ամուլսարի հանքավայրը շահագործել: Ինչպես գիտենք, իր չափով սա նորանկախ Հայաստանում ամենամեծ ներդրումային ծրագիրն է, և գործարկելով այն՝ մենք կունենանք արտարժութային ներհոսք դեպի մեր երկիր: Կարծում եմ՝ այս ծրագիրը կյանքի կոչելու գործընթացը շուտով կակտիվանա, քանի որ նմանօրինակ հրապուրիչ ներդրումային նախագիծ դժվար թե մեր երկրին այս պահին առաջարկվի:

Ամփոփելով կրկին կհանգենք նույն մտքին. այսօր չափազանց կարևոր է հասկանալ՝ մեր երկրում հնարավոր կլինի՞ կայունություն հաստատել, թե՞ ոչ: Սա ելակետն է, և այս դիրքերից պետք է կանխատեսումներ կատարել:

– Ինչպիսի՞ն է վիճակն ավանդների շուկայում, այստեղ ի՞նչ ռիսկեր կան և ի՞նչ խորհուրդներ կտաք ավանդներ ունեցող քաղաքացիներին:

– Առաջին հարցի շրջանակում որոշակիորեն անդրադարձա ավանդներին, նշեցի, որ չնչին անկում է նկատվել, սակայն օգոստոս և սեպտեմբեր ամիսներին, մարտի համեմատ, ավանդային պորտֆելն աճել էր, ինչը պայմանավորված էր կորոնավիրուսով վարակվածների թվի անկմամբ: Սակայն հոկտեմբերից վարակվածների թվի աճը, նաև պատերազմական իրավիճակն իրենց աննշան բացասական ազդեցությունն ունեցան ընդհանուր պորտֆելում: Ի դեպ, դրան նպաստեց նաև այն, որ, ԱՄՆ դոլարի արժևորմամբ պայմանավորված, որոշ քաղաքացիներ, բանկերից դուրս բերելով դրամային ավանդը, վերածում էին ԱՄՆ դոլարի, կարճ ասած՝ զբաղվում էին սպեկուլյացիայով, որն այս պահին դադարել է, և իմաստ էլ չունի նման գործարքներ կատարել: Նվազումը նաև պայմանավորված էր այն հանգամանքով, որ պատերազմի օրերին շատ անձինք, ովքեր կամավոր մեկնում էին ռազմաճակատ, ավանդային միջոցները հանում էին բանկերից՝ այն թողնելով իրենց ընտանիքի անդամների մոտ: Նվազման համար նաև կարող եմ նշել, որ կորոնաճգնաժամի պայմաններում որոշ անձինք ունեցան եկամուտների նվազեցում և այդ բացը լրացնելու համար դիմում էին ներդրված ավանդների օգնությանը:

Փաստենք, որ այսօր ավանդային պորտֆելը վերականգնվելու միտում ունի, մասնավորապես՝ դեկտեմբերի 1-ից ֆիզիկական անձանց ավանդների երաշխավորման չափն ավելացել է. 10 մլն ՀՀ դրամից դարձել է 16 մլն ՀՀ դրամ, արտարժութային ավանդինը՝ 5 մլն ՀՀ դրամից 7 մլն ՀՀ դրամ: Ավանդ ներդնելը բանկերում մեր քաղաքացիների ամենաանախընտրած ներդրումն է, և դա պայմանավորված է ցածր ռիսկայնությամբ: Վերջին տարիներին ավանդների ծավալը բավական աճել է. ինչպես նախորդ հարցի շրջանակում նշեցի, այսօր այն կազմում է շուրջ 3.5 տրլն ՀՀ դրամ, և քանի որ դեռևս երկրում զարգացած չեն արժեթղթերի շուկան և ներդրումային այլ գործիքները, ապա ավանդային պորտֆելը միտում ունի հետագա էլ ավելի աճի, որն էլ իր հերթին կհանգեցնի տնտեսության վարկավորման մասշտաբների ընդլայնմանը:

–Պարո՛ն Մարդոյան, շնորհակալ եմ զրույցի և կարևոր տեղեկատվության համար:

Հ.Գ. Հավելենք, որ հարցազրույցն արվել է դեկտեմբերի 4-ին:

Զրուցեց ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆԸ



Նամակ ապագային

Օրեր... հետպատերազմյան օրեր... սիրտը հայոց ափեափ է լինում մի ափ հողի սիրուց, ճաք է տվել սիրտն անսրտությունից... հողը ցավից փխրվել է... հո՞ւյսը... հույսն ապրելու նոր հնար է գտել, հայաբար վերակերտվել է, համատարած ձայն է դարձել, կոչնակում է՝ այն սերունդը, որն իր մահերով ապրեցրեց ձեզ, դեռ նույն այդ սերունդը, ապրումի նոր ձևեր արարելով, ապագա է կերտելու...

Ապագան կերտողների մտորումները՝ ի դեմս ՀՊՏՀ ուսանողների, ապագայի հետ նրանց ամենաանկեղծ բանակցումներն ու «փխրված խաղաղության» պայմաններում ապագայի համար նրանց քայլերի հաջորդականությունը՝ մայրենիի դասաժամին գրված «Նամակ ապագային» վերտառությամբ խոկումներում: Նամակ ապագային... հղում են ՀՊՏՀ առաջին կուրսի մի խումբ ուսանողներ:

ՀՊՏՀ լեզուների ամբիոնի դասախոս Մերի Աբգարյան

Ապագա՛, հարգելի՛ս, ես՝ նոր սերնդի ներկայացուցիչս, ականատես լինելով իմ երկրում կատարվող պատմական իրադարձություններին, խնդրում եմ քեզ՝ լուսավորվի՛ր: Կարծում եմ՝ ծանոթ ես, չէ՞, հային, հայի ոգուն, հայի տեսակին, որ զգացել և ապրել է կյանքի դժվարագույն պահերը: Նույնիսկ բառերն են քիչ՝ ներկայացնելու այն, ինչ տեսել է հայը՝ քո հեռավոր անցյալից հետևելով անգութ ներկային: Ապագա՛, իմ հողը հագեցած է հրաշքներով և գիտե՞ս՝ ինչու... Որովհետև նրա պաշտպանը հայ քաջարի զինվորն է, այն զինվորը, որ այդ հողը պահպանել է արյան գնով: Ուստի հիշի՛ր, որ ոչ մեկի բարբարոսությունը չի կարող կոտրել հայ ազգի՝ հավերժ լույսի ձգտող հզոր ոգին: Ուստի խնդրում եմ՝ լուսավորվի՛ր: Հավատում եմ, որ դու՝ հայտնի անհայտդ, ներկան դարձնելու ես հեռավոր անցյալ՝ ինքդ դառնալով ներկա, բայց, ցավոք, շատերը կլինեն բացակա: Կարծում եմ՝ հասկացար, չէ՞, որ նրանք բացական ընտրեցին հանուն քեզ, հանուն քո հաղթանակի և այն սերնդի, որ ապրելու է զարգացած ու լուսավո՛ր ապագայում:

Լուսավորվի՛ր, ապագա՛: Խնդրում եմ:

Հարգանքով՝ Գրետա Թամոյան
ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ, 1-ին կուրս

Երկրից հեռանալիս կամ երկիր վերադառնալիս բոլորս ունենում ենք սպասելու, քայլ առ քայլ երջանկության մասին մտածելու հնարավորություն: Ես հիմա գրում եմ քեզ մեծ սպասումով՝ ներկան քեզ կապող կամուրջը՝ երիտասարդությունը, կանգնած է բախտորոշ, անկանխատեսելի, ոչ կառավարելի զարգացումների վտանգաբեր խաչմերուկում:

Նորը ունենալու տեսլականը վճռորոշ քայլերի է դրդում մեզ: Գիտեմ՝ դու սիրում ես նոր սերնդի ընթացքը և բազմիցս սատարել ես, որ թռիչքի նշածողը բարձր դրվի: Այսօր ուզում ենք նորը կերտել: Տո՛ւր մեզ այդ հնարավորությունը՝ հանգուցալուծման միակ բանալին: Քո թիկունքում երիտասարդների շնչառությունն է, վերածնվող երկրի շունչն ու բարոյական կարողությունը:

Անարդարությունից, անարդարադատությունից հեռացողներից շատ շատերը կվերադառնան, քանզի անցյալն այլևս չկա, դու դեռևս չկաս, բայց երբ հասանելի լինես, թող միայն երկիր վերադառնալիս ունենանք երկար սպասելու, քայլ առ քայլ երջանկության մասին մտածելու և հասնելուն պես երջանկություն կերտելու հնարավորություն: Թույլ տուր, որ սպասման այլ ձևեր չլինեն:

Վարդուհի Մանուկյան
ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ, 1-ին կուրս

Ապագա... գալիք... անորոշություն...

Գրել նամակ ապագային, նշանակում է հայտնել ցանկություն՝ իմանալու ապագան: Ինչպես կյանքի յուրաքանչյուր վերացական երևույթ, ապագան ևս ծնում է անկառավարելի հույզեր՝ սպասվելիք գալիքի, նոր հույսերի և անպայման դրանց հավատալու նկատմամբ:

Չնայած ապագան անսպասելի է, բայց կանխատեսելի կարող է լինել ներկայի հիմքերի ճիշտ կառուցումով:

Նամակիս բուն հեղինակը լավատեսությունն է, որ այս օրերին պետք է յուրաքանչյուրիս: Ես չգիտեմ՝ ապագան ինչեր է պահել ազգիս համար, բայց միայն խաղաղություն եմ խնդրել նրանից, հորդորել, որ կորած ու կոտրված հույսերս նրա հետ վերադառնան ինձ, մեզ, ձեզ...

Թո՛ղ ապագան իր միգասքող շղարշի տակ թաքցնի միայն լավը, դրականն ու բարին:

Սիրելի՛ հայրենակիցներ, ես դիմում եմ ապագային բոլորիս անունից...Մենք քեզ ժպտում ենք, ժպիտով կգաս, կգաս ու կբերես լույս, սեր ու բարիք, որ ազգս մաքրվի կեղծիքից ու ստից, որ...

Սիրելի՛ ապագա, բեր քեզ հետ մի կտոր լույս ողորմություն բոլորիս...

Մենք սիրով սպասում ենք դրական պատասխանիդ:

Արմեն Սարգսյան
ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ, 1-ին կուրս

Բարև՛, ապագա՛: Քեզ հետ փոքր-ինչ անկեղծանալ եմ ուզում: Իմ ներսում ամեն ինչ խառնվել է: Ես մոլորվել եմ, կորցրել եմ ինձ: Մտածում եմ անվերջ, մտածում եմ մեր ու մեր ժամանակի մասին: Ինչքան բան է փոխում ժամանակը: Որքա՜ն ճիշտ է ասված՝ «ժամանակի հետ սովորում ես, որ երջանկությունդ հիշողություններիդ մեջ է, սովորում ես ամեն ինչ անդառնալի բաց թողնել, որովհետև այն ամենը, ինչ կա, ժամանակին է պատկանում, հիշողությունն է միայն մերը»... Ինչպե՞ս հետ բերենք ժամանակը, որտեղ տունս ու հայրենիքս էր, այգիս ու ծառս:

«Հասկանում ես, որ վատագույն ողբերգությունը սեփական անտարբերությունն է, մի բան, որը քեզ միշտ ստիպում է ափսոսալ»: Այսքանից հետո ինչպե՞ս անտարբեր չդառնամ...

«Սովորում ես, որ տառապանքները դասեր են, որոնք ոչ ոք երբեք չի սովորեցրել»...

Բայց ինչպե՞ս դիմանամ այս անվերջանալի տառապանքներին...

«Սովորում ես, որ ցավը հաշվարկներից դուրս է, և այն կշիռ չունի: Սովորում ես կարևորագույնը՝ ցավը ընկեր է, որ քեզ միշտ ստիպում է հասկանալ, որ դեռ ողջ ես»:

Իսկ արդյո՞ք աշխարհում կա մի հայ, ով անտեղյակ է ցավին՝ հայրենիքին, հողին, որդուն կորցնելու ցավին: Չկա՛, որովհետև հայի ցավը դարավոր է:

«Ժամանակի հետ հասկանում ես, որ կան օրեր, որոնք ապրելը տևում է տարիներ», որովհետև այդ օրերում նրանք են պակասում: Եվ հասկանում ես, որ նրանց ժպիտները մնացին երկնքում: Մի օր էլ հանկարծ հասկանում ես, որ համակերպվում ես: Համակերպվում ես՝ ցավը սրտումդ, համակերպվում ես՝ չարացած աշխարհի և հենց քո հանդեպ: Եվ այսքանից հետո չես ապրում, այլ ուղղակի գոյատևում ես, և գլուխդ կախում նրանց շիրիմների առջև, շիրիմներ, որ միշտ թաց են մայրերի արցունքներից: Ո՞վ կարող է նրանց ցավը մեղմել, ո՞վ կարող է նրանց հասկանալ, ո՞վ կարող է նրանց վերքերը բուժել...

Ոչ ոք: «Ժամանակը բուժում է բոլոր վերքերը»: Սո՛ւտ: Այդ վերքերը ո՛չ ժամանակը, ո՛չ Աստված, չեն կարող բուժել: Անբուժելի են: Մենք բոլորս պարտական ենք նրանց, որ ծնել են այդպիսի հերոսներ, անվախ հերոսներ:

Հիմա կասես՝ ինչո՞ւ եմ այս ամենը պատմում: Քեզ պատմում եմ, ապագա՛, որ ճանաչես ներկային, իմանաս ներկայի պատմությունը, չկրկնես իր սխալները, որ էլ՛ ավելի լավը լինես: Պատմում եմ, որ ասեմ՝ քեզ հետ մեծ հույսեր ունեմ, որ պիտի գաս ու ամեն ինչ փոխես, որ պիտի քեզ հետ խաղաղություն բերես, տունս բերես, հայրենիքս բերես, որ գոնե տղերքին կորցնելու ցավը մեղմվի, որ գոնե նրանց չլինելը արդարացնեմ:

Սա իմ և ազգիս խնդրանքն է, խնդրում եմ...

Մարիա Հովհաննիսյան
ՀՊՏՀ ֆինանսական ֆակուլտետ, 1-ին կուրս

2020 թվական, մարտ, թվում էր՝ ամեն ինչ պետք է գնար բնականոն հունով, ու բոլորը պետք է նշեին հերթական անգամ գարուն թևակոխելը, սակայն... Ոչ մեկի մտքով չէր անցնում, որ այս անգամ գարուն թևակոխելու ենք արտակարգ դրության պայմաններում ու մահացու վիրուսի «հովանու» ներքո: Կյանքը խաթարված էր, մարդիկ, որոնց մի մասի համար օրվա հացի գումար վաստակելը մեծ ծանրություն էր արդեն իսկ, հիմա պետք է մտածեին իրենց ապրուստը հայթայթելու մասին:

Ժամանակը կանգ առավ մարտին:

Գրում եմ այս ամենի մասին տարվա ավարտին, հետադարձ հայացք եմ գցում անցած ամիսների վրա ու ի խորոց սրտի ցանկանում եմ փախչել իրականությունից, քանի որ ժողովրդիս համար տարին իրո՛ք ծանր էր:

2020 թվական, սեպտեմբերի 27: Նոր էր մեր մարմինը ամռան տոթն ու կեզը հաղթահարել, երբ եկավ հոգո՛ւ այրվելու ու պատառ-պատառ լինելու ժամանակը: Առավոտը, որ որպես չգրված օրենք պետք է բերեր խաղաղության լուրը, բերեց պատերազմի բոթը: Մարդիկ, որ նոր սպասումներով ու նպատակներով արթնացել էին՝ շարունակելու իրենց գործերը, մի պահ քարացան տեղում, չէ՞ որ նրանցից նորից խլել էին ապրելու իրավունքը, արարելու ձգտումը ու ամենից վեհը՝ խաղաղությունը:

Ժամանակն այս անգամ իրո՛ք կանգ առավ, գուցե արդեն անզոր էր նայել մարդկանց աչքերին ու կրկնել մշտապես ասած սուտը՝ «ես կտանեմ ձեր ցավերը, ես կբուժեմ ձեր վերքերը»: Ամեն բան գլխիվայր շուռ եկավ: Արցախյան 3-րդ պատերազմ: Արյունարբու ու արյան տենչին կարոտ թշնամի, 18-20 տարեկան՝ կյանքի համը դեռ չառած երիտասարդներ, որդում մի վերջին անգամ տեսնելու ցանկությունից խամրած ծնողներ, արկերի պայթյուն, ռումբերի շառաչ, հպարտություն, սեր, հուզում ու ալեկոծում: Սիրուց ծնված մղում՝ պաշտպանելու, անզորությունից ատելության ալիք վառող նսեմացում:

Սա պատերազմ չէր հանուն խաղաղության, այլ պատերազմ՝ հանուն ապրելու իրավունքի: Շատերն ընկան մարտերում, շատերը զինակից ընկերներ կորցրին, շատերի համար ամեն բան դարձավ առավել քան ունայն, իսկ շատերն ուղղակի այս ամենը թեկուզ զգալու իրավունքից զրկվեցին: Պատերազմը մի պահ մեր միջից ուղղակիորեն ջնջեց մարդուն՝ թողնելով այնտեղ անհուն մի վիհ՝ պատրաստ լցվելու նորից մարդկային բոլոր լավ ու վատ գծերով, սակայն ոչինչ էլ առաջվանը չի լինի, մենք էլ առաջվանը չենք:

Հիմա մեր ունեցածը փխրուն խաղաղությունն է...

2020 թվական, նոյեմբերի 29, տեղաց առաջին ձյունը: Ես ակամա հիշեցի Վարդգես Պետրոսյանի տողերը՝ «Ձյուն գար աշխարհում, ծածկեր ամեն ինչ ու չհալվեր, ու դրա վրա կառուցվեր կյանքը, ձյուն գար, ծածկեր բոլոր չապրած տարիները, սխալները, անկումները, ետ վերադառնային չապրած տարիները...»: Երանի իրոք այդպես լիներ:

Ու այս ամենի միջով անցնելը կլինի իզուր, եթե մենք դասեր չքաղենք: Մեզ պետք է ունենալ կիրթ ու գրագետ սերունդ, ու դրա համար պետք է մենք առաջինը այդպիսին լինենք: Պիտի հոգևոր սնունդ ստանանք ու առաջնորդենք մեր միջի մարգիկին: Մաքրենք մեր հոգին ու սիրենք ամեն բան ու յուրաքանչյուրին: Իհարկե բարդ կլինի, բայց դա կլինի ճանապարհը, որը յուրաքանչյուրը պետք է անցնի յուրովի՝ հետապնդելով անհատականություն լինելու ու ազգի համար գեթ չնչին օգուտ բերելու մղումը:

Իսկ ապագայում ես ուղղակի կուզեի, որ մարդկային միտքը այնքան թուլացրած լիներ իր կապանքները, որ պատերազմի, աղետածին գործողությունների փոխարեն սեր ու համերաշխություն սփռեր...

Գուցե տեսնեմ դա, կամ էլ՝ չէ, բայց հույս ունեմ, որ ինչ-որ մեկը գոնե կտեսնի այդպիսի մի իրականություն... հույս ունեմ...

Ստելլա Առաքելյան
ՀՊՏՀ ֆինանսական ֆակուլտետ,
1-ին կուրս

Շատ կցանկանայի խոսել երազանքներիս, նպատակներիս, ապագայի հետ կապված մտքերիս մասին: Անհոգ մանուկներ, աշխույժ երիտասարդներ, նրանցով հպարտացող ծնողներ և արդեն պատերազմ տեսած տատիկներ ու պապիկներ:

Եվ պատերազմ... Կրկին պատերազմ...

Կորցրի ընկերներ, ում հետ մեկ հոգի էի, մեկ սիրտ: Սակայն նրանք մեզ հետ չեն միայն ֆիզիկապես: Նրանք ապրում և ապրելու են մեր սրտերում մինչ երկնային հրեշտակ դառնալը: Չնայած չենք տեսնելու նրանց տարիներով, բայց չենք դադարելու մնալ ընկերներ:

Այս դժվարին օրերին ուժ եմ գտել մտքերս հանձնելու թղթին և ասել, որ ընկերներիս կիսատ թողած գործը շարունակելու եմ: Շարունակելու եմ կրթվելով, նրանց կյանքի դիմաց տրված կյանքս արժանապատիվ ապրելով:

Վստահ եմ՝ նրանք տեսնում են մեր յուրաքանչյուր քայլը և ժպտում: Ժպտում են այն ժամանակ, երբ մեր հայացքը բարձրացնում ենք վեր և տեսնում խաղաղ և պարզ երկինք:

Իսկ այժմ պետք է ուժ հավաքել և մեր կյանքով ապրել նաև նրա՛նց կյանքը....

Գայանե Հակոբյան
ՀՊՏՀ կառավարման ֆակուլտետ,
1-ին կուրս

Ես միշտ ունեցել եմ վառ պատկերացումներ՝ ապագայիս հետ կապված: Յուրաքանչյուր տարիքում, սակայն, այդ պատկերացումը այլ է եղել: Հիմա՝ ավելի կոնկրետ մի քանի ամիս է, որպես հասուն և գիտակից մարդ, այլ կերպ եմ կառուցում ապագաս: Մինչ այս իմ պատկերացրած ապագան այսքան դաժան չէր, այնտեղ տեղ չկար մի կաթիլ դաժանության համար անգամ:

Բայց հիմա...

Հիմա իմ ունեցած ներկապնակի գույները կարծես վերջացել են, թվում է՝ այլևս երբեք չի գալու իմ երազած ապագան, կարծես ես էլ երբեք չեմ նկատելու ոչ մի վառ գույն: Բայց, անկախ այս ամենից, չեմ դադարել և չեմ դադարի երազել, չնայած սպասելիքներս ապագայից այլ են արդեն. ես կասկածի տակ եմ դնում իմ ապրելիք հաջորդ րոպեն...

Հիմա ուղղակի փորձում եմ ապրել իմ ունեցած ներկայով, ապրել լիարժեք՝ առանց բացթողումների, որ հաջորդ վայրկյանին չզղջամ արածիս կամ չարածիս համար:

Ես չեմ կարողանում ռեալ ապագա պատկերացնել, միգուցե այն պատճառով, որ շատերը չհասկացան այդ բառի ողջ իմաստը, շատերի ապագան այդպես էլ անորոշ մնաց, կամ պարզապես շատերը կորցրին իրենց հավատն ու սպասումը ապագայից:

Միակ ակնկալիքս միանշանակ խաղաղությունն է, ես չափից շատ եմ ուզում, որ ապագան մեր հանդեպ մի փոքր բարի գտնվի ...

Էլմիրա Հարությունյան
ՀՊՏՀ կառավարման ֆակուլտետ,
1-ին կուրս

Իմ ապագա՝ Հայաստան, իմ ազգ ու բանակ, ես հուսով եմ, որ մեր սխալներից դասեր քաղել ես կամ գոնե դեռ ժամանակ ունես: Մենք չկարողացանք դասեր քաղել անցյալից և ստիպված եղանք շոշափել պատերազմը, փորձել ջնջել երկնքի հետ սահմանը, ստիպված եղանք կառուցել Հայաստան նաև երկնքում, և երկինքը դարձրինք Մովսես Գորգիսյանի «վաղվա Հայաստանը»: Չէ՞ որ մեր վաղվա Հայաստանի առաջամարտիկները գնացին երկինք:

....Երևի երկինքն էլ է հայը ստեղծել, որ դիմանում է մեր քաջերի հզորությանը....

Ապագա՛, փորձի՛ր ամուր հող կառուցել, մենք երկինքը կառուցել ենք:

Մի՛ լքիր հայրենիքը, որովհետև այն հողը, որ գրկում է ոտքերդ ու խնդրում չհեռանալ, նզովելու է քեզ ու քո ապագան՝ հեռանալուդ համար:

Զա՛րկ տուր կրթությանը և գիտությանը, որովհետև հայի նավթն ու ոսկին իր գլուխն է:

Պատմություն ուսումնասիրիր և հայրերիդ ամեն պատգամ դաջիր գլխումդ, որ ստիպված չլինես մաքրել ամոթի խարանը ճակատիդդ:

Կառչի՛ր արմատներիդդ, որ տոհմածառդ փթթի ու նոր պտուղներ տա:

Եվ հիշի՛ր՝ Հայաստանն այլևս «այրվող այգեստանների» երկիր չէ, այլ ծաղկող այգիների ու բուրաստանների երկիր է:

...Մեր ապագան մանուկների լուսավոր աչքերի մեջ է, ովքեր հավատում են հրաշքներին, իսկ տիեզերքը ողջ ուժով նպաստում է այն հրաշքների իրականացմանը, որին հավատում ենք: Նրանց հղած նամակները չեն մնա անպատասխան: Նրանց հավատով ու Աստծո զորությամբ այս նոր տարին վերջ կտա հայի ցավերին: Մանկական անմեղ ժպիտներով մենք փյունիկի պես կհառնենք ու կբերենք իրենց երազանքների խաղաղությունը ու Հայքի՛ Հայաստանը:

Նվարդ Պողոսյան
ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ,
1-ին կուրս

Եթե այս նամակը գրեի երկու ամիս առաջ, վստահ եմ՝ այն չէր ունենա նույն բովանդակությունը: Իմ պատկերացումներն արդեն փոխվել են: Հիմա ինձ համար ամեն ինչից վեր խաղաղությունն է, որի կարևորությունը երբևէ չեմ արժևորել, որովհետև այն կարծես թե ունեցել ենք: Հիմա ես հասկանում եմ, որ նպատակներիդ իրագործման մասին կարող ես մտածել, երբ հայրենիքդ, ընտանիքդ և շատ այլ կարևոր արժեքներ վտանգված չեն: Ուստի խնդրում եմ, ապագա՛, տո՛ւր մարդկությանը արդարության աչքերով աշխարհին նայելու և ամենուր մարդասիրություն հաստատելու շնորհ: Ստեղծարար ժողովրդիս տո՛ւր արարելու, կառուցելու, հզորանալու հնարավորություն: Տո՛ւր մեզ չընկճվելու և առաջ շարժվելու կամք, խոհեմություն: Պարգևի՛ր մեր հերոս եղբայրներին արժանի քույր լինելու պատիվը, որը կարող ենք ունենալ՝ նրանց սխրանքների կողքին դնելով մեր նվաճումները: Քո լույսով մեզ ուղեկցիր դեպի հաղթանակ՝ Ծովից ծով Հայաստան: Ես հավատում եմ... հավատում եմ...

Աննա Գորգինյան
ՀՊՏՀ հաշվապահական հաշվառման և աուդիտի ֆակուլտետ,
1-ին կուրս

ԴԵՊԻ ՀԱՎԵՐԺՈՒԹՅՈՒՆ.
«Քաջերի հարությունն է մահը»



Աշոտ Կոստյայի Մաթևոսյանը մեր համալսարանում սովորել է 1994-1999 թթ.՝ ստանալով նյութական ռեսուրսների կառավարման և արտադրական միջոցների մեծածախ առևտրի կազմակերպչի մասնագիտություն: Նա մեկն է այն հայորդիներից, որոնք ճամփա ընկան դեպի հավերժություն: Աշոտի զարմուհին՝ Շուշան Նավասարդյանը, իր սրտի խոսքն է հասցեագրում իր ու մեր հերոսին:

2020 թվականի սեպտեմբերի 27-ին սկսված Արցախյան նոր գոյամարտի առաջին իսկ վայրկյանից բազմաթիվ քաջարի հայորդիներ մեկնեցին Արցախ՝ թուրք ոսոխից պաշտպանելու սրբազան Հայոց աշխարհի սահմանները: Այդ անձնվեր հերոսների թվում էր նաև լեյտենանտ Աշոտ Կոստյայի Մաթևոսյանը (ծնված 1978 թվականի մայիսի 7-ին), ով, պատերազմի լուրն առնելով, կամավորագրվեց և անմիջապես մեկնեց ռազմաճակատ: Աշոտը արմատներով Շամշադինից էր: Հզոր Տավուշ աշխարհը մեծ դեր ուներ նրա կյանքում. նա ամուր կառչած էր հայրենի հողին: Փայլուն գիտեր հայ ժողովրդի պատմությունը ու ապրում էր հայրենիքով:

Շուրջ մեկ ամիս լինելով ռազմաճակատի ամենաթեժ հատվածներում՝ նա իր պարտքն է կատարել սիրելի հայրենիքի առջև, մահվան ճիրաններից փրկել բազմաթիվ կյանքեր: Նույնիսկ բեկորային վնասվածքներ ստանալուց հետո Աշոտը շարունակել է իր նվիրումը: Եվ, ահավասիկ, հոկտեմբերի 28-ի երեկոյան, դարձյալ փրկելով բազմաթիվ կյանքեր ու հերոսաբար կռիվ մղելով, Կարմիր շուկա կոչվող համայնքի տարածքում նա անմահացավ:

Աշոտն իր կյանքը զոհեց հանուն իր կնոջ, իր երեք անչափահաս զավակների, հանուն հայ ազգի, որպեսզի սերունդներն ապրեն խաղաղ երկնքի ներքո: Աշոտի կինը, ով իր ամուսնու հայրենանվեր գործի գաղափարակիցն է, հերոսական ոգով շարունակելու է հայրենասիրություն սերմանել իր զավակների մեջ, քանզի նրանց հայրը հերոս է: Իսկ հերոսից հերոսներ են ծնվում:

Երիտասարդ տաղանդավոր գեղանկարիչ, դիմանկարի վարպետ Միքայել Հարությունյանը կերտել է Աշոտի դիմանկարը՝ այդպիսով իր հարգանքի տուրքը մատուցելով նրան: Սահուն գծերի միջոցով նկարիչը հասել է կերպարի բացահայտմանը՝ թափանցելով հերոսի ներաշխարհի նուրբ խառնարաններ, ընդգծելով հոգու արտահայտչականությունն ու հուզականությունը:

Եվ, հիրավի, այստեղ տեղին է հիշատակել Գարեգին Նժդեհին. «Քաջերի հարությունն է մահը»:

Սխրանքդ անգնահատելի է, Հերո՛ս, Անունդ հավերժացավ հայոց երկնակամարում: Հավերժ փա՛ռք քեզ:

ՀԵՐՈՍՍ

Իմ կանաչաչյա ՀԵՐՈՍԸ այսօր,
Մեր կանաչաչյա ՀԵՐՈՍԸ դարձավ,
Հավերժի ճամփան բռնեց լուռ ու մունջ,
Ու հույս տվողս, մեր լույսը դարձավ:

Մի աստղ էլ փայլեց երկնակամարում,
ՀԵՐՈՍԻՍ աստղն է վառ ու լուսավոր,
Հերոսին վայել փառքով, հարգանքով,
Սուրբ հողի համար պայքարեց կյանքով:

Ու քանի-քանի կյանքեր փրկելով,
Քանի-քանիսին ուժ ու հույս տալով,
Ապրեց իր կյանքը սեր ու հարգանքով,
Ու նահատակվեց փառքով ու պատվով:

Իմ կանաչաչյա ՀԵՐՈՍԸ այսօր,
Մեր կանաչաչյա ՀԵՐՈՍԸ դարձավ...

Ակադեմիական միտքը ծառայում է պետական քաղաքականությանը.

Դավիթ Հախվերդյան

Թեև անցնող տարին դժվարին էր, այդուհանդերձ, ՀՊՏՀ կառուցվածքային բոլոր ստորաբաժանումները պատշաճ կատարել են իրենց գործառույթները: Անխափան ու արդյունավետ իր գործունեությունն է շարունակել նաև «Ամբերդ» հետազոտական կենտրոնը: Տարեսկզբին կենտրոնը հանդես եկավ մեր երկրի տարբեր ոլորտների հիմնախնդիրներին վերաբերող վերլուծականներով, որոնք ՀՊՏՀ պաշտոնական կայքի, բուհի և կենտրոնի ֆեյսբուքյան էջերով ներկայացվել են լայն հանրությանը, պատրաստվել և հրապարակվել են «Ամբերդ տեղեկագրի» համարները, որոնցում ներկայացված հոդվածները յուրօրինակ արագ արձագանք էին աշխարհը ցնցած թագավարակին, դրա հետևանքով առաջացած տարատեսակ հիմնախնդիրներին, պատերազմին, ինչպես նաև տարբեր ոլորտներում ի եկած նոր իրողություններին:

Տարեվերջին՝ դեկտեմբերի 4-ից, կենտրոնը հայտարարեց հետազոտական թեմաների շուրջ հանրային քննարկումների շարք սկսելու մասին: Օրակարգում էին ամենատարբեր թեմաներ՝ միջհամայնքային համագործակցության առանձնահատկությունները, ՀՀ ցորենի և ալյուրի շուկաների, աղբահանության ոլորտի խնդիրները, ՀՀ տարածքային կառավարման համակարգի հեռանկարները, էլեկտրոնային առևտրի զարգացման հնարավորությունները, Հայաստանի տնտեսության վրա բացասաբար ազդող գործոնները, կրթական հաստատությունների գործունեության ֆինանսավորման գնահատումը, Հայաստան-Չինաստան տնտեսական համագործակցության հեռանկարները, պարենային անվտանգության, ՀՀ աշխատաշուկայի հիմնախնդիրները, ՀՀ ֆինանսական ենթակառուցվածքներում արհեստական բանականության կիրառական լուծումները, պետական մասնակցությամբ բժշկական կազմակերպությունների կառավարման հարցերը, ագրոզբոսաշրջության զարգացման հնարավորությունները:

«Տնտեսագետի» հարցին ի պատասխան, թե «Ամբերդ» հետազոտական կենտրոնի համար ինչ հիմնական շեշտադրումներով առանձնացավ անցնող տարին, կենտրոնի տնօրեն, տ.գ.դ., պրոֆեսոր Դավիթ Հախվերդյանը նշեց. *«Ի դժբախտություն բոլորիս, տարին ավարտում ենք համազգային ծանր պարտությամբ՝ հուսալով, որ վերջինս այդուհանդերձ կդառնա միակ գերակայության՝ ունեցածն արժևորելու և պետությունն ու տնտեսությունը հզորացնելու մեկնակետը: Ինչ վերաբերում է «Ամբերդ» հետազոտական կենտրոնի տարեկան գործունեությանը, նշեմ, որ հայտնի պատճառներով ոչ բոլոր ծրագրերն իրականություն դարձան, սակայն մեր կողմից նախանշած հիմնական արդյունքներին հաջողվեց հասնել: Մասնավորապես, թողարկվել են «Ամբերդ տեղեկագիր» գիտահանրամատչելի պարբերականի բոլոր համարները, ավարտին են հասցվել կենտրոնում իրականացված թվով 13 հետազոտություններ: Հրապարակվել են տասնյակ գիտական հոդվածներ և վերլուծականներ, խորացվել են միջազգային համագործակցության հիմքերը»:*

Ինչ վերաբերում է հանրային քննարկումների կազմակերպմանը, կենտրոնի տնօրենը նշեց, որ դրա նպատակը կենտրոնի իրականացրած հետազոտությունների հանրայնացումն է: *«Վերջինս, անշուշտ, նպաստում է ինչպես համալսարանի, այնպես էլ «Ամբերդի» հեղինակության բարձրացմանը: Դրանից բացի, հետազոտությունների ստվար մասը կատարվել է ՀՀ պետական կառավարման մարմինների առաջարկած թեմաներով, որից ելնելով՝ նպատակահարմար էր քննարկումներում ներգրավել նաև այդ մարմինների ներկայացուցիչներին, լսել նրանց դիտարկումներն ու առաջարկությունները՝ հետազոտությունների կիրառականությունն ապահովելու նպատակով: Ընդհանուր առմամբ, քննարկումները կարելի է հաջողված համարել, պետական կառավարման մարմինների ներկայացուցիչները գոհունակություն հայտնեցին մեր կատարած հետազոտություններից, մի քանիսը, ինչպես օրինակ՝ ՀՀ ՏՄՊՊՀ-ն և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, արդեն իսկ իրենց գործունեությունում օգտագործել են մեր հետազոտությունների արդյունքները: Արվածի գլխավոր արժանիքն այն է, որ ակադեմիական միտքը ծառայում է պետական քաղաքականությանը՝ գիտականորեն հիմնավորված տարբեր ներառելով պետական քաղաքականության մեջ»,*- ասաց Դավիթ Հախվերդյանը՝ հավելելով, *որ գալիք տարի համագործակցությունը շարունակելու պայմանավորվածություններ են ձեռք բերվել:*

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ









ՄԻՔԱՅԵԼ ԱՐԱՄՅԱՆՑ. ԴՐՎԱԳՆԵՐ ՄԵԾ ԲԱՐԵՐԱՐԻ ԿՅԱՆՔԻՑ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

Ներկայումս աշխարհում շուրջ 1300 մեծահարուստ միլիարդատերեր կան, որոնցից քչերն են իրենց շրջապատի, ժողովրդի կյանքով ու կեցությամբ մտահոգ բարերարներ: Ժամանակին հենց այդպիսին է եղել հայ մեծահարուստ ու բարերար Միքայել Արամյանցը (1843-1924 թթ.), որը բարի ու դրական հետք է թողել ոչ միայն 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի անդրկովկասյան գործարար աշխարհում, այլև հայ և հարևան ժողովուրդների հիշողության մեջ:

Արամյանցը բարերարությունը համարում էր իր կյանքի և գործունեության ուղեցույց՝ առաջնորդվելով իր իսկ ձևակերպած հետևյալ կարգախոսով. ***«Փողերը կվերջանան, փառքը՝ նույնպես: Սակայն իմացեք, որ Հայաստանը մեր միակն է և արարեք հանուն ձեր երկրի ու նրա ժողովրդի երջանկության»:***



Միքայել Արամյանցը ծնվել է Լեռնային Ղարաբաղի Քյաթուկ գյուղում: Ավարտել է Շուշիի ծխական դպրոցը: Տարիներ անց, դառնալով վաճառականի օգնական և որոշակի գումար վաստակելով, նա կատարում է իր առաջին բարեգործությունը. հավաքած գումարին ավելացնելով հայրական տան վաճառքից ստացած 45 հազար ռուբլին՝ հիմնադրման 70-ամյակի առիթով այն նվիրաբերում է Շուշիի ծխական դպրոցին:

Առևտրի շնորհիվ ձեռք բերելով որոշակի կարողություն՝ Արամյանցը 1871 թ. տեղափոխվում է Թիֆլիս: Զբաղվելով բրդի, թելի, բնական մետաքսի, շաքարի տարանցիկ առևտրով՝ նա մի քանի տարի անց վաստակում է իր առաջին միլիոն ռուբլին, տեղափոխվում է Բաքու և մեծ դերակատարություն է ունենում Կովկասում նավթարդյունաբերության զարգացման գործում: Հասկանալով, որ Բաքվի նավթը «սև ոսկու» երակ է՝ Արամյանցը ղարաբաղցի 3 ընկերների հետ հիմնում է «Բալախանսկայա» նավթարդյունաբերական ընկերությունը: Սակայն զգալով, որ չի կարող դիմանալ ռուսական և ամերիկյան նավթային հսկաների՝ Նոբելի և Ռոտշիլդների մրցակցությանը՝ Արամյանցն իր վաղեմի ընկերոջը՝ Մանթաշյանցին (Մանթաշովին), ով այդ ժամանակ Թիֆլիսի կոմերցիոն բանկի սեփականատերն էր, առաջարկում է միանալ իր նավթային բիզնեսին:

Հետագայում Արամյանցի նավթային ընկերությունը միլիոններ է վաստակում՝ նախ՝ նավթը երկաթուղային ցիստեռներով արտասահման տեղափոխելու, այնուհետև՝ Բաքվում կառուցված առաջին նավթամուղի շնորհիվ, որը Բաքվի նավթը Բաթումիով տեղափոխում էր Եվրոպա և Հնդկաստան: Որոշ ժամանակ անց, երբ նրանք արդեն մրցակցում էին նավթային խոշոր ընկերությունների հետ, Մանթաշյանցը, ձեռք բերելով 3 գործընկերների կապիտալի մասնաբաժինները, ձգտում է դառնալ ընկերության միանձնյա սեփականատերը: Արամյանցը, դրանից նեղսրտած, իր մասնաբաժինը ևս վաճառելով Մանթաշյանցին և նրան հիշեցնելով. «Ալեքսանդր, մոռացե՞լ եք, որ շնորհիվ ինձ եք դարձել մեծ կարողության տեր», վերադառնում է Թիֆլիս:

Թիֆլիսում Արամյանցը գործարարությամբ այլևս չի զբաղվում և ապրում է իր կապիտալի տոկոսներից ստացվող եկամտով: Նա բազմաթիվ եկամտաբեր տների, կալվածքների, ամառանոցների, հանգստավայրերի, մասնավորապես՝ Ախթալայի և Կիսլովոդսկի բուժիչ հանքավայրերի սեփականատեր էր:

Մարդասիրական ու բարեսիրական իր ծավալուն գործունեությամբ Արամյանցը ոչնչով հետ չէր մնում իր վաղեմի ընկեր Մանթաշյանցից: Նրա՝ որպես մեծ բարերարի գործունեությունից և թողած հսկայական ժառանգությունից որոշ դրվագներ ներկայացնենք մեր ընթերցողին.

1. Արամյանցը Բորչալուի շրջանում, եղեռնից մազապուրծ հայ գաղթականների համար, 80 հարմարավետ տներ է կառուցում՝ ընդարձակ փողոցներով, դպրոցով, եկեղեցով, ոռոգման ջրանցքներով: Գյուղացիներին հատկացնում է հողագործական գործիքներ, սերմացու: Ի նշան երախտագիտության՝ նոր բնակավայրն անվանակոչվում է «Արամաշեն»:

2. Արամյանցը Թիֆլիսի «Ազգային բարեգործական ընկերության» հիմնադիրն էր, Ներսիսյան դպրոցի մշտական հոգաբարձուն ու հովանավորը:

3. Նա հովանավորել է «Հայկական ազգագրական ընկերության», մասնավորապես՝ ակադեմիկոս Նիկողայոս Մառի ղեկավարությամբ Անիում կատարվող պեղումների ու գտածոների պահպանման ծախսերը:

4. Արամյանցի հովանավորությամբ է հիմնադրվել Հայաստանի պատմության թանգարանը:

5. Արամյանցը սիրել է Թիֆլիս քաղաքը և միջոցներ չի խնայել այն բարեկարգելու համար: Նաև նրա ջանքերով է Թիֆլիսը դարձել «Կովկասի Փարիզ»: Մասնավորապես, սեփական միջոցներով 1910 թ. Թիֆլիսում կառուցում է եվրոպական չափանիշներով հիվանդանոց՝ «Արամյանցի հիվանդանոցը», որն ուներ տարածաշրջանում առաջին ռենտգենյան սարքավորումը: Հետազոտություններն ու բուժումները կատարվում էին անվճար:

6. Նրա միջոցներով Թիֆլիսում կառուցված հյուրա-

նոցը, որը կոչել է իր 5 զավակների անվան առաջին տառերով՝ ԱՐՓԱՏՈ, այսօր էլ կանգուն է: Այնտեղ է տեղակայված Վրաստանի թատերական ինստիտուտը:

7. Արամյանցի կառուցած մյուս երկու՝ «Պալասօտելս» և «Մաժեստիկ» (ներկայիս «Թբիլիսի-Մարիոտ») հյուրանոցները գործում են առ այսօր:

8. Արամյանցի կառուցած Ախթալայի ամառանոցդղյակը, որը Ծվեյցարիայում գտնվող կառույցի նմանօրինակն է, 2016 թվականից ընդգրկվել է ՀՀ պատմության ու մշակութային անշարժ հուշարձանների պետական ցանկում:

Միքայել Արամյանցի նկատմամբ դաժանորեն է վարվել խորհրդային իշխանությունը՝ բռնագրավելով նրա ողջ կարողությունը: Նա զրկվել է հարստությունից ու դիրքից և կյանքի վերջին տարիներին ապրել իր իսկ կառուցած 5 միլիոնանոց հյուրանոցի նկուղում՝ սովի և աղքատության մեջ: Հաճախ, նստելով հյուրանոցի պատերի տակ, կրկնում էր. «Ախ, ի՜նչ ժամանակներ էին... ի՜նչ տարիներ»:

Այնուհանդերձ, ժողովրդի անսահման հարգանքին ու սիրուն արժանացած բարերարի գործունեությունը պետք է ուղեցույց դառնա մերօրյա մեծահարուստների համար:

ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՈՐ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Աղքատության մակարդակը որևէ երկրի բնակչության բարեկեցության, կենսամակարդակի գնահատման կարևոր քանակական ցուցանիշ է, որի փոփոխությունը սովորաբար պետք է համահունչ լինի տնտեսական աճի շարժընթացին և, մասնավորապես, մեկ շնչին ընկնող ՀՆԱ ցուցանիշին: Սակայն ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի «ՀՀ սոցիալական պատկերը և աղքատությունը» 2020 թ. զեկույցի տվյալների՝ Հայաստանում աղքատության մակարդակը 2019 թ. կազմել է 26,4%՝ 2018 թ. 23,5% ցուցանիշի պարագայում, այն դեպքում, երբ տնտեսական աճը 2019 թ. կազմել է 7,6%՝ 2018 թ. 5,2% աճի դիմաց: Այսինքն, եթե ՀՆԱ-ի աճի նախորդ տարվա ցուցանիշին գերազանցել է 2,4%-ով, ապա աղքատության մակարդակը, այլ հավասար պայմաններում, պետք է կրճատվեր, մինչդեռ աճել է 2,9%-ով:

ՀՀ վիճակագրական կոմիտեն այս երևույթը բացատրում է նրանով, որ 2019 թ. աղքատության մակարդակի ցուցանիշը համադրելի չէ 2018-ին արձանագրված աղքատության ցուցանիշին, ինչը պայմանավորված է աղքատության գծի, ինչպես նաև սպառման և աղքատության գնահատման մեթոդաբանության փոփոխությամբ:

Նշենք, որ աղքատությունը Հայաստանում պաշտոնապես գնահատվում է 1996 թվականից սկսած՝ Համաշխարհային բանկի մեթոդաբանությամբ, և 2019 թվականից Հայաստանում օգտագործվում է Համաշխարհային բանկի կողմից վերանայված թվով 4-րդ մեթոդաբանությունը: Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի՝ 2019 թվականի համար գնահատված աղքատության մակարդակը, 2009 թ. մեթոդաբանությամբ հաշվարկված, 2018 թ. աղքատության գնահատման ցուցանիշներից տարբերվում է հետևյալ առումներով.

ա) սպառման ագրեգացված ցուցանիշը հաշվարկվել է տնային տնտեսությունների կենսապայմանների

ամբողջացված հետազոտությամբ (ՏՏԿԱՀ) վերանայված հարցաշարի տվյալների հիման վրա,

բ) ՏՏԿԱՀ-ում կիրառվել է տվյալների հավաքման նոր մեթոդ՝ գրասալիկի (պլանշետի) միջոցով,

գ) փոփոխվել է աղքատության գծերի հաշվարկման մեթոդաբանությունը:

Նախքան վերը նշված մեթոդաբանական փոփոխություններին անդրադառնալը, անհրաժեշտ ենք համարում նշել, որ աղքատությունը, որը բնութագրվում է բնակչության կենսամակարդակի դինամիկայով, ընդհանրական ցուցանիշ է և արտահայտվում է նյութական ու ոչ նյութական աղքատության ձևերով՝ շոշափելով բնակչության կյանքի տարբեր կողմերը՝ սպառումը, պարենային անվտանգությունը, առողջությունը, կրթությունը, իրավունքները (ներառյալ ձայնի, անվտանգության, արժանապատվության, արժանապատիվ աշխատանքի իրավունքները): Ոչ նյութական աղքատության բնորոշիչներ են համարվում վատ առողջությունը, կրթության ցածր մակարդակը, սոցիալական անտեսվածությունը կամ մերժվածությունը, իրավունքների և խոսքի ազատության անկիրառելիությունը կամ գործնականում սեփական խնդիրների մասին հայտնելու անկարողությունը:

Նյութական աղքատությունը գնահատվում է սպառման ագրեգացված ցուցանիշով, որը հաշվարկվում է տնային տնտեսությունների կենսապայմանների ցուցանիշների հիման վրա: Միջազգային փորձը վկայում է, որ սպառումը եկամտի համեմատ ավելի հավաստի ու ճշգրիտ տեղեկություն է տալիս բարեկեցության մակարդակի վերաբերյալ, քանի որ այնքան էլ զգայուն չէ կարճատև տատանումների նկատմամբ:

Սպառման ագրեգացված ցուցանիշը ներառում է հետևյալ բաղադրիչները.

ա) սպառված պարենային և ոչ պարենային ապրանքների արժեքը՝ ներառյալ սեփական արտադրության ապրանքները, մարդասիրական կազմակերպություններից և այլ աղբյուրներից ստացված օգնությունները,

բ) երկարատև օգտագործման ապրանքների հաշվարկային արժեքը:

Հայաստանում նյութական աղքատությունը գնահատելու համար օգտագործվում է բացարձակ աղքատության հայեցակարգը, որի համաձայն՝ բնակչությունն ըստ աղքատության կարգավիճակի բաժանվում

է ոչ աղքատ և աղքատ տնային տնտեսությունների: Աղքատներն իրենց հերթին բաժանվում են չափավոր (շատ) աղքատ և ծայրահեղ աղքատ խմբերի:

2019 թ. աղքատության մակարդակը գնահատելու համար սահմանվել է աղքատության գծերի հաշվարկման նոր մեթոդաբանություն, ըստ որի՝ 1 չափահաս անձի հաշվով սահմանվել են աղքատության վերին, ստորին, ծայրահեղ և միջին գծեր, որոնք համապատասխանաբար գնահատվել են ամսական սպառման հետևյալ չափերով.

- վերին գիծ՝ 53043 դրամ,
- ստորին գիծ՝ 35054 դրամ
- ծայրահեղ գիծ՝ 23763 դրամ
- միջին գիծ՝ 44048 դրամ:

Սրան համապատասխան ***աղքատ*** են համարվել նրանք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության վերին գծից՝ 53043 դրամից, ***չափավոր (կամ շատ) աղքատ*** են համարվել աղքատության ստորին գծից՝ 35054 դրամից ցածր սպառողները, ***ծայրահեղ աղքատ (կամ թերսնված)*** են համարվել նրանք, ում սպառումը ցածր է աղքատության ծայրահեղ կամ պարենային գծից՝ 23763 դրամից: Աղքատության սրությունը 2019 թ. համար, որն արտացոլում է աղքատների միջև եղած սպառման անհավասարությունը, գնահատվել է 3,4%:

Տրիլիոն դոլարից ավելի ՀՆԱ ունեցող աշխարհի երկրները (2019 թ. դրությամբ)

No	Երկիր	ՀՆԱ-ն (տրլն դոլար)	ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով (դոլար)	ՀՆԱ-ի բաժինը համաշխարհային ՀՆԱ-ի մեջ (%)
1.	ԱՄՆ	20,494	62605	23,55
2.	Չինաստան	13,608	9608	15,64
3.	Ճապոնիա	4,970	39309	5,71
4.	Գերմանիա	3,996	48264	4,59
5.	Մեծ Բրիտանիա	2,825	42557	3,25
6.	Ֆրանսիա	2,777	42877	3,19
7.	Հնդկաստան	2,726	2036	3,13
8.	Իտալիա	2,073	34260	2,38
9.	Բրազիլիա	1,960	8967	2,25
10.	Կանադա	1,712	46260	1,97
11.	Ռուսաստան	1,657	11326	1,81
12.	Հարավ.Կորեա	1,619	31349	1,86
13.	Ավստրալիա	1,432	56351	1,65
14.	Իսպանիա	1,426	30697	1,64
15.	Մեքսիկա	1,223	9807	1,41
16.	Ինդոնեզիա	1,042	3870	1,19

Աղյուսակի տվյալներից պարզվում է, որ տրիլիոն դոլարից ավելի ՀՆԱ ունեցող աշխարհի 16 երկրներ արտադրում են համաշխարհային ՀՆԱ-ի 75,22%-ը, 2 տրիլիոն դոլարից ավելի ՀՆԱ ունեցող 8 երկրներին բաժին է ընկնում համաշխարհային ՀՆԱ-ի 61,44%-ը, իսկ երկու գերհզոր երկրներին՝ ԱՄՆ-ին և Չինաստանին, բաժին է ընկնում համաշխարհային ՀՆԱ-ի 39,19%-ը: Այլ կերպ ասած՝ հարստության բարձր կենտրոնացվածությունն արտահայտվում է նաև ըստ երկրների:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱՅՆԱՊԱՏԿԵՐԸ ՓԼՈՒԶՈՒՄԻՑ ԱՌԱՋ ԵՎ ՀԵՏՈ

1991 թվականի դեկտեմբերի 8-ին Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելառուսի առաջնորդները՝ Բորիս Ելցինը, Լեոնիդ Կրավչուկը և Ստանիսլավ Շուշկևիչը, ստորագրեցին ԽՍՀՄ-ի գործունեության դադարեցման և նոր միջպետական միավորման՝ ԱՊՀ կազմավորման մասին փաստաթուղթը: Հետաքրքրական է, թե 29 տարի անց ինչպես է փոխվել տնտեսական համայնապատկերը նախկին ԽՍՀՄ հանրապետություններում: Պատկերը տեսանելի կդառնա բնակչության 1 շնչին ընկնող ՀՆԱ-ի հետևյալ բնութագրական ցուցանիշներով:

Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ի շարժընթացը 1990-2019 թթ.՝ գնահատված ԱՄՆ դոլարի գնողունակության համարժեքությամբ (դոլար)

Երկիրը	1990	2019	Շարժընթացը
Էստոնիա	5794	38811	+33017
Լիտվա	5922	38214	+32292
Լատվիա	5490	32204	+26714
Ռուսաստան	8018	29181	+21163
Ղազախստան	8271	27444	+19173
Բելառուս	5232	19943	+14711
Վրաստան	5731	15637	+9906
Թուրքմենստան	5437	15196	+9759
Ադրբեջան	5360	15001	+9641
Հայաստան	2774	14220	+11446
Մոլդովա	3186	13574	+10388
Ուկրաինա	7305	13341	+6036
Ուզբեկստան	2493	7289	+4796
Ղրղզստան	2546	5471	+2925
Տաջիկստան	2641	3520	+879

Համեմատության համար նշենք, որ նույն ժամանակահատվածում աշխարհի ՀՆԱ-ն 1 շնչի հաշվով 5549 ԱՄՆ դոլարից բարձրացել է 17673 ԱՄՆ դոլարի կամ 12124 ԱՄՆ դոլարով: Բերված աղյուսակից ակնհայտ է Էստոնիայի, Լիտվայի և Լատվիայի առաջընթացը, որը պայմանավորված է, թերևս, Եվրամիությանն անդամակցությամբ:

ՍԱՄՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ

ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

Սկիզբը՝ նախորդ համարում

2014 ԹՎԱԿԱՆ

ՀՊՏՀ ներկայացուցիչները հունվարի 15-18-ը Մոսկվայում մասնակցում են «Ռուսաստանը և աշխարհը. կայուն զարգացում» խորագրով «Գայդարյան համաժողով-2014»-ին:

ՀՊՏՀ-ն փոխըմբռնման հուշագրեր է ստորագրում Կոլոմբոյի (Շրի Լանկա), Մանիլայի (Ֆիլիպիններ), Յոգջակարտայի (Ինդոնեզիա) տնտեսագիտական համալսարանների հետ:

ՀՊՏՀ ԵՄ-ում դեկտեմբերի 21-ին «Մարզերի զարգացման սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները ՀՀ-ում» խորագրով 2-րդ հանրապետական գիտաժողովն է, մասնակցում է Վայոց ձորի մարզպետ Էդգար Ղազարյանը:

ՀՈՒՎԱ Կրթական բարեփոխումների հանձնաժողովի նախագահ, ՀՊՏՀ ուսանողուհի Արուս Հարությունյանը դառնում է ԲԿՈԱ առաջին միջազգային փորձագետ-ուսանողը Հայաստանից, փետրվարի 12-ին ընտրվում է ԵՈՒՄ որակի ապահովման գծով ուսանողական փորձագիտական խմբի անդամ:

Փետրվարի 21. ՀՊՏՀ ՈՒԽ-ն՝ «Լավագույն ուսանողական ինքնակառավարման մարմին» անվանակարգի մրցանակակիր:

Ուսումնական վարպետ Մեսրոպ Ղուկասյանը փետրվարի 23-ին դառնում է 2014 թ. Հայաստանի սեղանի թենիսի անհատական առաջնության չեմպիոն:

Մարտի 5-ին «Տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում» թեմայով կլոր սեղան-քննարկմանը ներկա են Հարավային Կովկասում Շվեյցարական համագործակցության գրասենյակի ներկայացուցիչ Լուկաս Լյուշերը, ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ Վաչե Տերտերյանը:

«**Ա**մբերդ»-ում ապրիլի 8-ին հյուր են ՌԴ «Տնտեսագիտության բարձրագույն դպրոց»-ի տնօրեն Տատյանա Չետվերնինան և հայաստանյան նախագծերի համակարգող Նոնա Միրզախանյանը:

Մարտի 13-ին ցերեկույթ է՝ նվիրված Եղիշե Չարենցի 117-ամյակին, կազմակերպիչ՝ հայոց և ռուսաց լեզուների ամբիոնի վարիչ Մարի Զաքարյան:

Գառնիի Ատոմի անվան ավագ դպրոցում, մայիսի 8-ին, ՀՊՏՀ զոհված ուսանող-ազատամարտիկ, ծնունդով գառնեցի Դերենիկ (Ատոմ) Աբրահամյանին նվիրված միջոցառմանը մասնակցում են դասախոս Արմեն Ռուբենյանը և ՈՒԽ «Էկոնոմ plus» ամսագրի գլխավոր խմբագիր Հայկ Բեջանյանը:

Մայիսի 23-ին, ռեկտոր Կորյուն Աթոյանի մասնակցությամբ, ՌՊՏՀ-ում ստորագրված պայմանագրով, մեր համալսարանը դառնում է Տնտեսագիտական համալսարանների եվրասիական ասոցիացիայի անդամ:

Սեպտեմբերի 12-ին հյուր է ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանը:

Հանրապետության տոնի առթիվ՝ մայիսի 28-ին, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով պրոֆեսոր Լյովա Սամվելյանն արժանանում է ՀՀ ֆիզիկական կուլտուրայի և սպորտի վաստակավոր գործչի պատվավոր կոչման:

Ռեկտոր Կորյուն Աթոյանը սեպտեմբերի 19-ին հյուրընկալում է Դուբայի համալսարանի նախագահ Էսա Բաստակիին:

Սեպտեմբերի 24-ին ՀՊՏՀ Բրիտանական բիզնես դպրոցի բացման պաշտոնական արարողությունն է. մասնակցում են ՀՀ վարչապետ, ՀՊՏՀ խորհրդի նախագահ Հովիկ Աբրահամյանը, ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի արտակարգ և լիազոր դեսպան Քետրին Ջեյն Լիչը, պաշտոնատար այլ անձինք:

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը ՀՀ Անկախության տոնի առթիվ, ինչպես նաև գիտության և կրթության զարգացման գործում ունեցած մեծ վաստակի համար ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս-քարտուղար, ամբիոնի վարիչ Յուրի Սուվարյանին շնորհում է ՀՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչում:

Հոկտեմբերի 3-ին հյուր են ԼՂՀ վարչապետ, ԱՊՀ խորհրդի նախագահ Արայիկ Հարությունյանը և նույն համալսարանի ռեկտոր Մանուշ Մինասյանը:

Հոկտեմբերի 29-31-ը տեղի է ունենում «Զարգացման ժամանակակից մարտահրավերներ» խորագրով ՀՊՏՀ 24-րդ գիտաժողովը:

ՀՊՏՀ ՈՒԽ նախաձեռնությամբ հոկտեմբերի 7-ին տեղի է ունենում «Մեդիագրագիտություն» խորագրով բաց դաս, վարում է մեդիափորձագետ Սամվել Մարտիրոսյանը:

Հոկտեմբերի 5-ին ՀՊՏՀ-ն առաջատար է դառնում Հայաստանի ուսանողական մարզական 15-րդ խաղերի հրաձգության մրցաշարում:

«**Ա**մբերդ» կենտրոնը և «Նորավանք» գիտակրթական հիմնադրամը նոյեմբերի 4-ին ստորագրում են համագործակցության հուշագիր:

Նոյեմբերի 21-ին դրամի գրանշանի հեղինակ Կարեն Կոմենդարյանը հանդես է գալիս «Դրամների նշաններ» դասախոսությամբ:

Նոյեմբերի 24-ին, «Հայոց մեծ եղեռնի 100-րդ տարելիցին ընդառաջ» ծրագրի շրջանակում գիտակների մրցույթում ՀՊՏՀ «Index PRO» թիմը զբաղեցնում է 1-ին պատվավոր հորիզոնականը:

Նոյեմբերի 13-ին ՀՊՏՀ-ի և «Ինգո Արմենիա» ապահովագրական ընկերության միջև կնքվում է համագործակցության հուշագիր:

Դեկտեմբերի 3-ին ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանի մասնակցությամբ տեղի է ունենում ՀՊՏՀ ՈՒԽ թարմացված կայքի և 1-ին ուսանողական ալիքի շնորհանդեսը:

Ռեկտոր Կորյուն Աթոյանը «Համազգային վստահության վարկանիշ-2014»-ի մրցանակակիր է:

Դեկտեմբերի 25-ին ՀՊՏՀ-ն համագործակցության հուշագիր է ստորագրում «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա» ԲԲԸ ֆոնդային բորսայի հետ:

Ռուսումնական վարպետ Մեսրոպ Ղուկասյանը դեկտեմբերի 12-14-ը սեղանի թենիսի Հայաստանի բաց մրցաշարում նվաճում է ոսկե մեդալ:

2015 ԹՎԱԿԱՆ

Մարտի 31-ին, ՌԴ ԱՊՀ երկրների ինստիտուտի հետ համատեղ, «Եվրասիական տնտեսական ինտեգրման հեռանկարները. հայացք Հայաստանից» միջազգային գիտագործնական սեմինարն է:

«Հայկյան» մրցանակաբաշխությանը ՀՊՏՀ ՈՒԽ-ն չորրորդ տարին անընդմեջ ճանաչվում է լավագույն ուսանողական ինքնակառավարման մարմին:

Մարտի 6-ին նորաստեղծ «Անգլախոսների ակումբի» հյուրն է ՀՀ ԿԲ վարչության պետ Վարուժան Ավետիքյանը:

Մարտին ՀՊՏՀ գրադարանը դառնում է Հայաստանի էլեկտրոնային գրադարանների կոնսորցիումի անդամ:

ՀՊՏՀ ուսանող-ազատամարտիկների անվան լսարանում մարտի 19-ին պոլսահայ լրագրող, «Ակոսի» գլխավոր խմբագիր Հրանտ Դինքին նվիրված «1 500 000+1» միջոցառումն է՝ նվիրված Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին:

Մարտի 17-ին հյուր են «ԱՍԱԼԱ»-ի լեգենդար մարտիկներ, «Վան» գործողության հրամանատար Վազգեն Սիսիլյանը և նույն գործողության մասնակից Հակոբ Ջուլֆայանը:

Ապրիլի 17-19-ը ՀՊՏՀ և ՀԵՀ նախաձեռնությամբ Ծաղկաձորում անցկացվում է «ՀՀ տնտեսական համակարգը. նորարարություն, զարգացում, իրագործում» խորագրով InHead միջբուհական ուսանողական գիտաժողովը՝ նվիրված ՀՊՏՀ հոբելյանին: Հյուր է ՀՀ վարչապետ, ՀՊՏՀ խորհրդի նախագահ Հովիկ Աբրահամյանը:

Ապրիլի 15-16-ին ռեկտոր Կորյուն Աթոյանը Սանկտ Պետերբուրգում մասնակցում է Համալսարանների եվրասիական ասոցիացիայի 13-րդ համագումարին:

Համալսարանը 4 տարով ինստիտուցիոնալ հավատարմագրում է ստանում. մայիսի 21-ի նիստում այս որոշումն ընդունում է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովը: Հունիսի 22-ին ՀՀ ԿԳ նախարար Արմեն Աշոտյանը հրամանագրում է ստորագրում ՀՊՏՀ-ին հավատարմագրման վկայական շնորհելու վերաբերյալ:

Ֆինանսական ֆակուլտետում ապրիլի 22-ին բացվում է Անդրանիկ Օզանյանի անունը կրող լսարան:

ՀՊՏՀ լեզուների ամբիոնի նախաձեռնությամբ ապրիլի 29-ին անցկացվում է Հովհաննես Շիրազի ծննդյան 100-ամյակին նվիրված գրական ցերեկույթ:

Մայիսի 8-ին «Նժդեհ» ակումբի նախաձեռնությամբ, զոհված ազատամարտիկների անվան լսարանում, կայանում է բաց դաս՝ նվիրված ՀՊՏՀ զոհված ուսանող-ազատամարտիկ Արթուր Կարապետյանին:

Ռեկտոր Կորյուն Աթոյանը մայիսի 19-ին հյուրընկալում է ՀՊՏՀ ԲԲԴ հիմնադիր, Լոնդոնի կոմերցիայի դպրոցի խորհրդի նախագահ լորդ Ջոն Թոմլինսոնին:

Հուլիսի 17-ին ՀՊՏՀ ԵՄ է այցելում ՀՀ-ում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան Ռիչարդ Միլզը՝ ծանոթանալու «Խաղաղության կորպուս» ծրագրով ստեղծված տնտեսագիտական հետազոտությունների կենտրոնի աշխատանքներին:

Համահայկական 6-րդ ամառային խաղերի շրջանակում հրաձգության կանանց առաջնությունում հաղթող է ճանաչվում ուսանողուհի Էլմիրա Կարապետյանը:

ՀՊՏՀ-ում օտարերկրյա քաղաքացիների երկրորդ մագիստրոսական կրթական ծրագիրը՝ գործարար կառավարում մասնագիտությամբ, մեկնարկում է սեպտեմբերի 22-ին:

ՈՒԽ նախաձեռնությամբ սեպտեմբերի 25-ին հյուրընկալվում է «Արմենիա Տելեֆոն Կոմպանի» ՓԲԸ գլխավոր տնօրեն Անդրեյ Պյատախինը:

Հոկտեմբերի 7-ին ֆինանսական ֆակուլտետում բաց դաս է՝ նվիրված Անդրանիկ Օզանյանի 150-ամյակին:

Ռեկտոր Կորյուն Աթոյանը հոկտեմբերի 9-ին ընդունում է Շախմատի համալսարանական թիմերի Եվրոպայի առաջնությանը Հայաստան ժամանած պատվիրակներին:

Ռեկտոր Կորյուն Աթոյանը հոկտեմբերի 12-ին հյուրընկալում է Մոսկվայի «Սիներգիա» ֆինանսաարդյունաբերական համալսարանի ռեկտոր Յուրի Ռուբինին, Երևանում գիտության և մշակույթի ռուսական կենտրոնի տնօրեն Մարկ Կալինինին:

Ռեկտոր Կորյուն Աթոյանը և պրոռեկտոր Գագիկ Վարդանյանը հոկտեմբերի 12-ին DAAD-ի տեղեկատվական կենտրոնի տնօրեն Սիլվիա Շմիդի հետ քննարկում են համագործակցության հարցեր:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Հրայր Թովմասյանը հոկտեմբերի 14-ին հանդիպում է ուսանողների հետ:

ԵՄ Տեմպուս-ի HEN-GEAR՝ «Հայաստանում մարդկային կապիտալի գնահատմանն ու շրջանավարտների զբաղվածունակությանն ուղղված բարձրագույն կրթական ցանց» ծրագիրը, որում ներգրավված է մեր բուհը, ավարտվում է հոկտեմբերի 29-ի ամփոփիչ հանդիպմամբ:

Հոկտեմբերի 27-ին հյուր է ՄԱԿ-ի Արդյունաբերական զարգացման կազմակերպության (UNIDO) հայաստանյան գրասենյակի ղեկավար Անահիտ Սիմոնյանը:

Ֆինանսական ֆակուլտետի ուսանող Վահան Տեր-Բալյանը Կուալա Լումպուրում՝ բազկամարտի աշխարհի 37-րդ առաջնությունում, նվաճում է չեմպիոնի կոչում:

Ուսանողության միջազգային օրվա առիթով ՈՒԽ նախագահ Սերգեյ Խառատյանն արժանանում է Ազգային ժողովի նախագահի ոսկե հուշամեդալի:

Դեկտեմբերի 1-ին ռեկտոր Կորյուն Աթոյանը հյուրընկալում է «Էրազմուս+» ծրագրի գործընկեր, դոցենտ Անժելա Ալբուհի (Ռումինիա):

Նոյեմբերի 28-29-ին, Մոսկվայում, մաս-ռեստլինգ մարզաձևի աշխարհի առաջնության բացարձակ չեմպիոն է դառնում ուսանող Կարեն Մարտիրոսյանը:

2016 ԹՎԱԿԱՆ

ՀՊՏՀ ՈՒԽ-ն «Հայկյան – 2015» մրցանակաբաշխության հաղթող է:

ՀՀ Կառավարությունը 2015 թ. դեկտեմբերի 29-ի նիստում որոշում է «Երևանի պետական ֆինանսատնտեսագիտական քոլեջ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպել՝ միացնելով «ՀՊՏՀ» ՊՈԱԿ-ին:

Դեկտեմբերի 18-ին ՀՀ-ում Հնդկաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Սուրեշ Բաբու Թադիպաանեն դասախոսում է «Հայ-հնդկական տնտեսական հարաբերությունները» թեմայով:

Ուսանող Գրիգոր Գրիգորյանը կրթության ոլորտում ձեռքբերումների համար դառնում է «Լավագույնները կրթության մեջ» միջազգային հանրագիտարանի 2015 թ. հերոս:

Հունվարի 9-ին «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» հեռուստախաղի ձմեռային մրցափուլի եզրափակչում հաղթում է ՀՊՏՀ ասպիրանտ Հարություն Արզումանյանի ղեկավարած թիմը, նա արժանանում է «Մարմարե արծիվ» մրցանակին՝ ճանաչվելով լավագույն խաղացող:

Հունվարի 21-23-ը ռեկտոր Կորյուն Աթոյանը, որակի ապահովման բաժնի պետ Ներսես Գևորգյանը, ճՇՀԱՀ գործընկերների հետ Իտալիայում հանդիպում են Ալմա Լաուրեա միջհամալսարանական կոնսորցիումի և Բոլոնիայի համալսարանի ղեկավար կազմերի հետ:

2015-2016 ուստարվա երկրորդ կիսամյակում 5 ամսով մեր բուհում աշխատում է «Ֆուլբրայթ» հիմնադրամի կրթաթոշակակիր՝ ԱՄՆ-ի Մաքուեթի համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետի դասախոս Փիտր Թումանոֆը:

ՀՊՏՀ ֆուտզալի հավաքականը նվաճում է Հայաստանի ֆուտզալի բարձրագույն խմբի 2015-2016 թթ. առաջնության չեմպիոնի կոչումը:

Կառավարման ֆակուլտետի 3-րդ կուրսի ուսանող Նարեկ Մադաթյանը Հայաստանի ուժային եռամարտի մրցումներում դառնում է չեմպիոն:

Ալմբիոնի վարիչի ժ/պ, ՀՀ ՈՒՄՖ նախագահության անդամ Հովհաննես Գաբրիելյանն ընտրվում է Եվրոպայի համալսարանական սպորտի ասոցիացիայի նախագահության անդամ և աուդիտոր՝ Հայաստանի առաջին ներկայացուցիչը:

Մարտի 30-ին տեղի է ունենում Տեմպուսի «Արարատ» ծրագրի «Համալսարան-գործատու հայկական համակարգող գործակալության» «Համալսարան-աշխատաշուկա ՀՀ ազգային ցանցի» (ՀԱԱՑ) ամփոփիչ համաժողովը՝ «Արարատ» ծրագրի համակարգող Ներսես Գևորգյանի, ՄԿ ՈԱԱԿ հիմնադրամի տնօրեն Ռուբեն Թոփչյանի մասնակցությամբ:

ՀՊՏՀ ՈՒԽ-ն ներառվում է հայկական «Դյուցազնագրքի» «Օրինակելի» բաժնում:

ՈՒԽ նախաձեռնությամբ և ՀԵՀ աջակցությամբ մարտի 19-20-ը կայանում է Compass (կողմնացույց) միջբուհական-ուսանողական աշխատաժողովը:

Անգլախոսների ակումբի հյուրը փետրվարի 24-ին և մարտի 23-ին ՀԱԱՀ դոկտոր Պամելա Կարգն է՝ «Կոոպերատիվներ. Rochdale Principles»՝ տնտեսության մեջ Ռոչդելյան 7 գործարար սկզբունքները դասախոսությամբ:

ՏՏ կենտրոնի աշխատակից Արման Օհանյանը «Մայքրոսոֆթի» կողմից արժանանում է տվյալների բազայի օպտիմալացման, անվտանգության, անխափան հասանելիության ապահովման մասնագետի միջազգային որակավորման:

Ապրիլի 22-ին Վարշավայի համալսարանի պրոֆեսոր Կարոլ Կարսկին հանդես է գալիս «Ռաֆայել Լեմկին՝ Ցեղասպանություն եզրույթի հեղինակը» խորագրով բաց դասախոսությամբ:

ՀՊՏՀ ՈՒԽ և ՀԵՀ նախաձեռնությամբ մայիսի 20-22-ը Ծաղկաձորում անցկացվում է Level-up միջազգային ուսանողական գիտաժողովը՝ «Համաշխարհային տնտեսական մարտահրավերներ» խորագրով:

Մայիսի 5-ին «Արարատ» բանկի վարչության նախագահ, գործադիր տնօրեն Աշոտ Օսիպյանը դասախոսում է «Բանկային համակարգի զարգացման համաշխարհային միտումները» թեմայով:

Մայիսի 24-25-ին հյուր են շվեյցարական ՈՒՄԵՖ համալսարանի ռեկտոր Ջավեդ Սանգդելը և պրոռեկտոր Ալան Հուդաշքյանը:

ՀՀ բուհերի ուսանողների 17-րդ մարզական խաղերում՝ ծյուդոյի առաջնությանը, ուսանող Հարություն Աբրահամյանը դառնում է հաղթող, ԳՄ ուսանող Անդրանիկ Մարգարյանը՝ բրոնզե մեդալակիր:

Հայաստանում ԳԴՀ դեսպան Մաթիաս Քիսլերը մայիսի 3-ին այցելում է ՀՊՏՀ:

Կարիերայի և մարքեթինգի կենտրոնի նախաձեռնությամբ և Ucom ընկերության աջակցությամբ մայիսի 2-ին ՀՊՏՀ-ում բացվում է QR գրադարան:

«Ամենախելացին» խաղի 3-րդ եթերաշրջանի հաղթող է դառնում ՀՊՏՀ ուսանող Տիգրան Պետրոսյանը:

Հունիսի 9-ին ՀՊՏՀ ԵՄ հյուրն է «ԱՄՆ Խաղաղության կորպուս/Հայաստան»-ի տնօրեն Չարլզ Էնիսոնը:

ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով, ՀՀ Անկախության 25-ամյակի առթիվ, Ազգային ժողովի պատգամավոր, ամբիոնի վարիչ Միքայել Մելքումյանը պարգևատրվում է «Մխիթար Գոշ» մեդալով:

ՀՊՏՀ-ում մեկնարկում է «Խելացի պատեր» խորագրով նախագիծը՝ QR գրադարանի համանմանությամբ:

ՀՊՏՀ ԵՄ-ում հանդիսավորությամբ ճանապարհում են ԱՄՆ Խաղաղության կորպուսի կամավոր Բրայան Սալիբային:

Սեպտեմբերի 10-ին մեկնարկում է ՀՀ Անկախության 25-ամյակին նվիրված միջոցառումների շարքը. հյուր է ՀՀ պաշտպանության նախարարի պաշտոնակատար Սեյրան Օհանյանը, բացվում է Քառօրյա պատերազմում զոհված հայորդիների հիշատակի լսարան:

Նոյեմբերի 15-18-ն ընթանում է «Գործարար միջավայրի բարելավման և միջազգային տնտեսական համագործակցության ընդլայնման արդի հիմնախնդիրները ՀՀ-ում» խորագրով ՀՊՏՀ 26-րդ գիտաժողովը:

Հոկտեմբերի 14-ին հանրային դասախոսությամբ հանդես է գալիս ԱՄՆ Մասաչուսեթսի համալսարանի պրոֆեսոր Միքայել Հաննահանին:

Պրոռեկտոր Գագիկ Վարդանյանը և ամբիոնի վարիչ Գրիգոր Նազարյանը հոկտեմբերի 28-ին մասնակցում են ՌՊՏՀ-ի 85-ամյակին նվիրված միջոցառումներին:

Նոյեմբերի 10-13-ը Հնդկաստանի Հանրապետությունում ընթացող FICCI բարձրագույն կրթության համաժողովին մասնակցում են ռեկտոր Կորյուն Աթոյանը, բաժնի պետ Վարդ Ղուկասյանը:

Նոյեմբերի 16-ին հյուր են Հայաստանում ՉԺՀ դեսպանատան խորհրդական Գո Յույը և հյուպատոս Վանգ Ֆընգը:

Նոյեմբերի 17-ին ռեկտոր Կորյուն Աթոյանը հանդիպում է Սլովակիայի կրթության, գիտության, հետազոտության և սպորտի նախարար Պետեր Պլավչանի հետ:

Նոյեմբերի 18-ին «Նժդեհ» ակումբի նախաձեռնութամբ հանդիպում է Քառօրյա պատերազմի հերոս, «Մարտական խաչ» երկրորդ աստիճանի շքանշանակիր, ՀՊՏՀ ուսանող Հարություն Բադալյանի հետ:

Դեկտեմբերի 20-ին հյուր է Հայաստանում ԱՄՆ արտակարգ և լիազոր դեսպան, Ն. Գ. Ռիչարդ Մ. Միլս Կրտսերը:

2017 ԹՎԱԿԱՆ

«Էրազմուս+» ծրագրով փետրվարի 16-ին դասախոսում է Մեծ Բրիտանիայի Բեդֆորդշայրի համալսարանի դասախոս, դոկտոր Կիրիլ Շարապովը:

«Էրազմուս+» ծրագրի շրջանակում, ՀՊՏՀ մասնակցությամբ, մեկնարկում է eDrone նախագիծը:

Ուսանողներ Լիլիթ Գևորգյանն ու Նելլի Ցականյանն արժանանում են «Հայ համայնքը՝ հայ ուսանողությանը» հիմնադրամի սահմանած և «Ռոսգոսստրախ–Արմենիայի» կողմից ֆինանսավորվող անվանական կրթաթոշակի:

ՀՊՏՀ-ում ներդրվում է փաստաթղթաշարժի էլեկտրոնային Mulberry համակարգ:

Փետրվարի 24-ին «Հայկյան-2016» մրցանակաբաշխությանը ՀՊՏՀ ուսանող Հարություն Բադալյանն արժանանում է «Հայկյան-2016» հատուկ մրցանակի, ՀՊՏՀ ՈՒԽ նախագահ Սերգեյ Խառատյանը՝ «Ուսանողական ինքնակառավարման մարմնի լավագույն նախագահ» մրցանակի, «Լավագույն երիտասարդական հասարակական կազմակերպություն մարզում» անվանակարգում «Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում» ՀԿ մրցանակը հանձնվում է կազմակերպության անդամներ, ՀՊՏՀ դասախոս Սոֆյա Օհանյանին և ասպիրանտ Հերմինե Կատվալյանին:

Տնտեսագետ Արա Չալաբյանը փետրվարի 22-ին հանդես է գալիս «Ներքին աուդիտ» դասախոսությամբ:

Փետրվարին Հայաստանի սեղանի թենիսի մեծահասակների անհատական առաջնությունում ուսումնական վարպետ, դասախոս Մեսրոպ Ղուկասյանը նվաճում է չեմպիոնի կոչում:

Ուսանող, եռացատկորդ Լևոն Աղասյանը Բալկանյան երկրների ատլետիկայի ձմեռային 22-րդ առաջնությունում նվաճում է չեմպիոնի կոչում:

Մարտի 13-ին ՀՊՏՀ գրադարանը մասնակցում է ռուսաստանյան խոշոր Юрайт գրահրատարակչության «Յուրայթի նորարարական կրթական ծառայությունները և տեխնոլոգիաները՝ ի նպաստ դասավանդողների» թեմայով վեբինարին:

Ապրիլի 4-ին համագործակցության եռակողմ համաձայնագիր է ստորագրվում ՀՊՏՀ-ի, ՃՇՀԱՀ-ի և ՎՊՀ-ի միջև:

Հունիսի 6-ին ՀՊՏՀ խորհրդի նախագահ է ընտրվում ՀՀ փոխվարչապետ, ՀՀ միջազգային տնտեսական ինտեգրման և բարեփոխումների նախարար Վաչե Գաբրիելյանը:

Ապրիլի 28-ին ԱՀ նախագահ Բակո Սահակյանն ընդունում է ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանին:

ՀՊՏՀ ՈՒԽ և ՀԵՀ նախաձեռնությամբ մայիսի 26-28-ը Ծաղկաձորում անցկացվում է Level-up միջազգային ուսանողական գիտաժողովը՝ «Տնտեսագիտությունը ավելի լավ տնտեսության համար» խորագրով:

Ուսանող, եռացատկորդ Լևոն Աղասյանը մայիսի 21-ին դառնում է 2017 թ. Հայաստանի ատլետիկայի առաջնության չեմպիոն:

Մայիսի 27-ին ՀՊՏՀ-ում հանդիսավորությամբ հանձնվում են Հայաստանում բրիտանական բիզնես դպրոցի շրջանավարտների ավարտական հավաստագրերը:

ՀՀ անկախության տոնի առթիվ, գիտության և կրթության բնագավառներում ներդրած ավանդի համար, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի շքանշանով է պարգևատրում կառավարման ամբիոնի վարիչ, ակադեմիկոս Յուրի Սուվարյանին:

ՀՊՏՀ և ՎՊՀ նախաձեռնությամբ հունիսի 28-ին Ստեփանակերտում կայանում է «Բարձրագույն կրթություն. հիմնախնդիրներ և հեռանկարներ» խորագրով աշխատաժողովը:

Ռեկտոր Կորյուն Աթոյանը և «Ամբերդ» կենտրոնի տնօրեն Արմեն Գրիգորյանը հուլիսի 21-ին ՀՀ Ազգային ժողովում ստորագրում են համագործակցության հուշագիր: ՀՊՏՀ ներկայացուցիչներին ընդունում է ՀՀ ԱԺ տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Խոսրով Հարությունյանը:

Սեպտեմբերի 11-ին ՃՇՀԱՀ-ում տեղի է ունենում ՀՊՏՀ, ՃՇՀԱՀ և ՎՊՀ համատեղ նախագծերի կառավարում մագիստրոսական կրթական ծրագրի մեկնարկային միջոցառումը:

Ապրիլի 12-ին ռեկտոր Կորյուն Աթոյանը և ՈՒՄԵՖ համալսարանի ռեկտոր Միքելե Ակերիբը ստորագրում են համաձայնագիր, որով սկիզբ է դրվում մագիստրատուրայում գործարար կառավարում (MBA) մասնագիտության կրկնակի աստիճանաշնորհման համատեղ կրթական ծրագրի:

ՀՀ 18-րդ հանրապետական ուսանողական մարզական խաղերի շրջանակում սեպտեմբերի 30-ին՝ լողի առաջնությանը, ուսանող Վլադիմիր Մամիկոնյանը դառնում է հաղթող:

Ռեկտոր Կորյուն Աթոյանը մասնակցում է ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի 20-ամյակի հոբելյանական միջոցառմանը:

Հունիսի 30-ին տեղի է ունենում ՀՊՏՀ արհեստակցական կազմակերպության 5-րդ համաժողովը, փակ գաղտնի քվեարկությամբ արհկոմիտեի նախագահ է ընտրվում տնտեսական բաժնի պետ Ալբերտ Ղազարյանը:

Սեպտեմբերի 11-ին հյուր է երգիչ Սևակ Խանաղյանը:

Հոկտեմբերի 6-ին նշվում է ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղի հիմնադրման 10-ամյակը:

Արդյունքում մի խումբ ուսանողներ սեպտեմբերի 25-29 մեկշաբաթյա դասընթացների, ՈՒԽ միջոցառումների են մասնակցում ՀՊՏՀ-ում:

Նոյեմբերի 22-25-ն ընթանում է ՀՊՏՀ 27-րդ գիտաժողովը՝ «Տնտեսության և հասարակության զարգացում. 21-րդ դարի մարտահրավերներ և հնարավորություններ» խորագրով:

Մեկնարկում է «Ֆինանսական ներգրավվածություն», «Դրամավարկային քաղաքական նույնություն և տնտեսական աճ»,

«Ինովացիոն և ինստիտուցիոնալ հետազոտություններ» և «Սոցիալական հետազոտություններ» գիտաուսումնական լաբորատորիաների աշխատանքը:

«Ամբերդ» կենտրոնի տնօրեն Արմեն Գրիգորյանը, դեկան Գրիգոր Նազարյանը և ասիստենտ Աննա Փախլյանը նոյեմբերի 7-ին Աժ-ում մասնակցում են ՀՀ տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 2018 թ. քաղաքականության հիմնախնդիրների քննարկմանը:

ՀՊՏՀ ֆինանսատնտեսագիտական քոլեջում նոյեմբերի 16-ին հյուր է Արցախյան ազատամարտի հերոս, գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադևոսյանը (Կոմանդոս):

«Ամբերդ» կենտրոնը և ՌԻՄԵՖ համալսարանը նոյեմբերի 23-ին սկիզբ են դնում համագործակցության:

ՌԽ նախաձեռնությամբ դեկտեմբերի 8-ին ՀՊՏՀ-ականները մասնակցում են արյունատվության ակցիայի:

Ռեկտոր Կորյուն Աթոյանը դեկտեմբերի 1-ին մասնակցում է «Եվրասիական տնտեսական հեռանկարներ» 5-րդ միջազգային համաժողովին:

Դեկտեմբերի 15-ին հյուր է Եվրոպայի պահպանողականների և ռեֆորմիստների դաշինքի նախագահ Յան Զահրադիլը:

2018 ԹՎԱԿԱՆ

«Ամբերդ» կենտրոնը, ԱՄՆ Փենսիլվանիայի համալսարանի «Ուղեղային կենտրոններ և քաղաքացիական հասարակություն» ծրագրի ուղեղային կենտրոնների՝ 2018 թ. հունվարի 30-ին հրապարակված ամենամյա հեղինակավոր Global Go To Think Tank Index Report համաշխարհային վարկանշային զեկույցում, «Կենտրոնական Ասիայի լավագույն ուղեղային կենտրոններ» բաժնում զբաղեցնում է 65-րդ հորիզոնականը:

Ֆիզդաստիարակության, ԱՒ և ՔՊ ամբիոնի պրոֆեսոր Սիմոն Հակոբյանի ջանքերով կայացած «Առողջության և գեղեցկության ակումբը» դառնում է 3 տարեկան:

Մարտի 29-ին համալսարանը գործարկում է իր պաշտոնական նոր կայքը՝ asue.am:

Մարտի 10-11-ին ընթանում է Elevator խորագրով, «եկե՛ք ավելի վեր բարձրանանք» կարգախոսով աշխատաժողովը:

ՀՀ ՏՄՊՊՀ նախագահ Արտակ Շաբոյանը մարտի 16-ին հանդես է գալիս «Ի՞նչ օգուտներ է տալիս մրցակցության զարգացումը հասարակությանը» զեկուցմամբ:

Մարտի 27-ին, Ստանիսլավսկու անվան ռուսական դրամատիկական թատրոնում ՀՊՏՀ ՈՒՀԱ Hap-Хоз թիմը նվաճում է «КВН Երևանի գավաթ»-ը:

Ռեկտոր Կորյուն Աթոյանը և ՀՀ-ում ՉԺՀ արտակարգ և լիազոր դեսպան Թիան Էրլունը ապրիլի 19-ին ՀՊՏՀ-ում բացում են Չինաստանի լսարան:

ՀՊՏՀ խորհրդի նախագահ Վաչե Գաբրիելյանի մասնակցությամբ հունիսի 21-ին կայանում է ՀՊՏՀ 2018-2022 թթ. զարգացման ռազմավարական ծրագրի ընդլայնված քննարկումը: Սեպտեմբերի 25-ին խորհուրդը միաձայն քվեարկությամբ հաստատում է ծրագիրը:

Չինաստանի Հասարակական գիտությունների ակադեմիայի պատվիրակությունը հունիսի 26-ին «Ամբերդ»-ում հանդիպում է կենտրոնի ղեկավար կազմի և փորձագետների հետ:

ՀՊՏՀ ֆինանսատնտեսագիտական քոլեջի և «Ռոսգոսստրախ-Արմենիա» ապահովագրական ընկերության միջև սեպտեմբերի 6-ին կնքվում է համագործակցության հուշագիր:

Հոկտեմբերի 15-ին հյուր է «ՎիվաՍել-ՄՏՍ» ընկերության գլխավոր տնօրեն Ռալֆ Յիրիկյանը՝ «Բիզնես-հաջողությունները ինստիտուցիոնալ կազմակերպման միջոցով» թեմայով դասախոսությամբ:

«Եվրասիական շաբաթ» ամենամյա ցուցահանդես-համաժողովին՝ հոկտեմբերի 24-ին, «Մտագրոհ. ԵԱՏՄ ապագան երիտասարդության աչքերով» խորագրով կրթական նստաշրջանին մասնակցում են ՀՊՏՀ դասախոսներ Դիանա Գալոյանը, Դավիթ Հախվերդյանը, Կարմեն Գրիգորյանը, Աննա Փախլյանը, Ալբերտ Հայրապետյանը, Արմեն Գրիգորյանը, Աղավնի Հակոբյանը, Կարեն Հակոբյանը:

Նոյեմբերի 24-25-ին ՀՊՏՀ-ում տեղի է ունենում ՈՒԽ նախաձեռնած CrosSkill՝ «Հմտությունների խաչմերուկ» միջբուհական ուսանողական աշխատաժողովը:

Դեկտեմբերի 13-ին ՀՀ Անվտանգության խորհրդի գրասենյակի և ՀՊՏՀ «Ամբերդ» կենտրոնի միջև համագործակցության հուշագիր է ստորագրվում:

Դեկտեմբերի 20-ին ռեկտորատի նիստում ՀՀ ԿԳ նախարարի պաշտոնակատար Արայիկ Հարությունյանը տեղեկացնում է, որ ռեկտոր Կորյուն Աթոյանը նախորդ օրը պաշտոնից ազատման դիմում է ներկայացրել և քննարկվել ու որոշում է ընդունվել ռեկտորի պաշտոնակատար նշանակել Ռուբեն Հայրապետյանին:

2019 ԹՎԱԿԱՆ

Ռեկտորի պաշտոնակատար Ռուբեն Հայրապետյանը 2019 թ. հունվարի 7-ին հանդես է գալիս համալսարանի շրջանավարտների ցանց ստեղծելու նախաձեռնությամբ:

Հունվարի 18-ին ՀՊՏՀ խորհրդի նիստը, որին ներկա էր խորհրդի 32 անդամներից 25-ը, ՀՊՏՀ խորհրդի նախագահ է առաջադրում և ընտրում խորհրդի անդամ, «Համայնքների ֆինանսիստների միավորում» ՀԿ նախագահ Վահան Սովսիսյանին:

Փետրվարի 15-ին մեր համալսարանում «Լավագույն ուսանող» 2018 թ. հանրապետական մրցույթի հաղթողների թվում է ՀՊՏՀ ուսանող Գագիկ Հակոբյանը: Ներկա է ՀՀ ԿԳ նախարար Արայիկ Հարությունյանը:

ԱՀ նախկին վարչապետ, Արցախի նախագահի խորհրդական-հատուկ հանձնարարությունների գծով ներկայացուցիչ Արայիկ Հարությունյանը փետրվարի 14-ին դասախոսում է «Արցախի տնտեսական հեռանկարները և զարգացման տեսլականը» թեմայով:

Մարտի 11--ին հրավիրված խորհրդի նիստում, որը վարում է խորհրդի նախագահ Վահան Սովսիսյանը, հաստատվում է համալսարանի վարչական հատվածի նոր կառուցվածքը:

Մարտի 21--ին ՀՊՏՀ-ի և «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» (IDeA) հիմնադրամի միջև փոխըմբռնման հուշագիր է ստորագրվում:

«Հումորի լիգայի» ուսանողական գավաթում ՀՊՏՀ Hap-Хоз ՈւՀԱ թիմը զբաղեցնում է առաջին հորիզոնականը:

2019-2020 ուսումնական տարվա համար ներդրվում են գործարար կառավարում և հանրային կառավարում մասնագիտությունների գծով նոր մագիստրոսական ծրագրեր:

Ներդրվում է ուսանողական հարցումների էլեկտրոնային համակարգ:

Ապրիլի 23-ին կայանում է նոր՝ թեքբոլ մարզածևի շնորհանդես-ցուցադրական մրցում:

Համալսարանը ներգրավվում է «Էրազմուս+»-ի «Հետազոտությունների կառավարման և բաց գիտության կարողությունների զարգացումը Մոլդովայի և Հայաստանի բուհերում (Minerva) 2019-2021» ծրագրում:

Համալսարանը ներկայացված է Linkedin սոցիալական հարթակում:

Հունիսի 21-ին ՀՊՏՀ-ի և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայության միջև ստորագրվում է հուշագիր:

Հունիսի 27-ին մեկնարկում է Հայկական տնտեսագիտական միության տարեկան գիտաժողովը, մասնակցում են նաև հյուրեր արտերկրից:

ՀՀ ԿԳՄՍ նախարար Արայիկ Հարությունյանի հրամանով օգոստոսի 22-ին ռեկտորի պաշտոնակատար է նշանակվում պրոռեկտոր Դիանա Գալոյանը:

Սեպտեմբերի 5-ին մեկնարկում է ՀՊՏՀ և Տարածաշրջանային գիտության կովկասյան ասոցիացիայի կազմակերպած «Ինստիտուցիոնալ կառույցներ, կառավարում և տարածաշրջանային զարգացում» խորագրով միջազգային գիտաժողովը:

Համալսարանի բակում ՀՊՏՀ և ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության Զբաղվածության պետական գործակալության համատեղ կազմակերպած աշխատանքի տոնավաճառն է:

Սեպտեմբերի 29-ին տեղի է ունենում TEDxASUE միջոցառումը՝ «Կոտրելով սահմանները» կարգախոսով:

ՀՊՏՀ ԳՄ-ում հոկտեմբերի 20-23-ը տեղի է ունենում մասնաճյուղի առաջին միջազգային գիտաժողովը «Աղետի գոտուց զարգացման գոտի…անցյալի դասերը և ժամանակի մարտահրավերները» խորագրով:

Սեպտեմբերի 5-ին ՀՊՏՀ-ն և ՀՀ ԱԺ ֆինանսավարկային և բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովը սկսում են համագործակցություն:

«Ֆուլբրայթ» կրթական փոխանակման ծրագրի կրթաթոշակակիր Սեսիլիա դը Բոկը մասնակցում է օտար լեզվի համադասավանդման գործընթացին:

Նորաբաց «Փոփոխությունների կառավարում» (Change Lab) լաբորատորիայի շնորհանդեսը դեկտեմբերի 11-ին է:

2020-2021 ուստարվանից նախատեսվում է ներդնել մագիստրոսական նոր կրթական ծրագիր՝ տեղեկատվական տեխնոլոգիաները բիզնեսում:

ՀՊՏՀ-ի և ՀՀ ՊԵԿ-ի միջև նոյեմբերի 14-ին ստորագրվում է համագործակցության հուշագիր:

Նոյեմբերի 23-24-ին ՀՊՏՀ ՈՒԽ նախաձեռնությամբ համալսարանում տեղի է ունենում Let's Talk միջբուհական աշխատաժողովը:

Նոյեմբերի 4-ին «Արցախի տնտեսական զարգացման հեռանկարները» թեմայով պանելային քննարկման հյուրը ԱՀ նախկին վարչապետ Արայիկ Հարությունյանն է:

Նոյեմբերի 11-ին համագործակցության հուշագիր է ստորագրվում ՀՀ ՊԿԾ-ի, նոյեմբերի 29-ին ՀՀ վարչապետի աշխատակազմի «Հանրային կապերի և տեղեկատվության կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ:

Նոյեմբերի 12-ին «Բարձր տեխնոլոգիաների զարգացումը և Հայաստանի տնտեսության մրցունակությունը» թեմայով կլոր սեղան-քննարկումն է (կազմակերպիչներ՝ «Այլընտրանք» հետազոտական կենտրոն և ԱՐՓԱ հիմնարկ (ԱՄՆ)), մասնակցում է ՀՀ էկոնոմիկայի նախարար Տիգրան Խաչատրյանը:

ՀՊՏՀ-ն և «Արցախի երիտասարդ գիտնականների և մասնագետների միավորում» ՀԿ-ն նոյեմբերի 20-ին ստորագրում են գիտակրթական և գործնական համագործակցության հուշագիր:

Նոյեմբերի 29-ին համագործակցության հուշագիր է ստորագրվում ՀՊՏՀ-ի և ՀՀ ՏՄՊՊՀ-ի միջև:

ՀՊՏՀ-ի և Ազգային բժշկական պալատի (ԱԲՊ) նախաձեռնությամբ դեկտեմբերի 6-ին մեկնարկում է «Հոսպիտալ մենեջմենթ» դասընթացը:

Դեկտեմբերի 3-ին ՀՊՏՀ-ի և Ինգո Արմենիայի միջև կնքվում է համագործակցության պայմանագիր:

Դեկտեմբերի 6-ին բուհ-աշխատաշուկա համագործակցությանը նվիրված աշխատաժողով է, մասնակցում են կազմակերպությունների ներկայացուցիչներ, ղեկավարներ:

Դեկտեմբերի 16-ին «Ամբերդ տեղեկագիր» գիտահանրամատչելի հանդեսի շնորհանդեսն է:

Դեկտեմբերի 20-ին դասախոսում է «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության, Հայաստանում UWC Դիլիջանի միջազգային դպրոցի համահիմնադիր, գործարար Ռուբեն Վարդանյանը:

Պատրաստեց Արմինե ՎԱՐԴԱՆՅԱՆԸ

ՈՒԵԱԴՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ԷԻՆ ՈՒՍԱՆՈՂՆ ՈՒ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Նոյեմբերի 19-ին կայացավ ՀՊՏՀ գիտական խորհրդի առցանց նիստը: Ռեկտորի պարտականությունները կատարող, ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Արմեն Գրիգորյանի առաջարկով այն սկսվեց լռության րոպեով՝ ի հիշատակ կյանքից հեռացած ՀՊՏՀ հարգարժան գիտնականների, ինչպես նաև Արցախա-ադրբեջանական պատերազմում հերոսաբար զոհված մեր հայրենակիցների:

Օրակարգի հաստատումից հետո Արմեն Գրիգորյանը հանդես եկավ «Առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի, առկա և հեռակա ուսուցման մագիստրատուրայի ուսումնառության, գիտելիքի գնահատման և վարչարարության մեխանիզմների կազմակերպման կարգերում» ժամանակավոր փոփոխություններ կատարելու մասին հարցի զեկուցմամբ՝ նշելով, որ առաջարկվող փոփոխությունները պայմանավորված են հիմնականում նոր կրթական ծրագրերի ներդրմամբ: Այդ շարքում էր մինչև նոյեմբերի 20-ը բացակայությունները չհաշվառելը: Ուսանողական խորհրդի նախագահ Գոռ Մելիք-Սահակյանը ներկայացրեց ուսանողների առաջարկն այն մասին, որ հարկավոր է կրճատել քննությունների թիվը՝ հաշվի առնելով ներկա դժվարին իրավիճակում ուսանողների բարոյահոգեբանական խնդիրները: Դեկանները, սակայն, պարզաբանեցին, որ քննությունների թվի կրճատումը հետագայում ուսանողների համար ավելի շատ խնդիրներ կառաջացնի տարբերությունների և կրեդիտների հաշվարկման համար: Այդուհանդերձ, ներկայացվող կարգերը հաստատվեցին, նշվեց, որ ստեղծված իրավիճակում ուսանողների նկատմամբ պրոֆեսորադասախոսական կազմը կցուցաբերի ըմբռնում, իսկ ուսումնառության գործընթացն արդեն իսկ թեթևացվել է՝ բացակայությունների մի մասը չհաշվառելու և բակալավրիատում անհատական աշխատանքները հանելու արդյունքում:

Գիտության գծով պրոռեկտոր Թաթուլ Մկրտչյանը ներկայացրեց գիտական խորհրդի՝ 2019 թ. սեպտեմբերի 6-ի «Գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողով ստեղծելու և դրա կազմը հաստատելու մասին» N4 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին հարցը՝ նշելով, որ փոփոխությունը պայմանավորված է ՀՊՏՀ հարգարժան գիտնականներ Աշոտ Սալնազարյանի և Վարդան Սարգսյանի ցավալի կորստով, ինչպես նաև գիտության բաժնի պետի փոփոխությամբ: Նոր կազմը հաստատվեց:

Այնուհետև Թաթուլ Մկրտչյանը զեկուցեց ատենախոսությունների թեմաներ և գիտական ղեկավարներ հաստատելու մասին հարցը՝ ընդգծելով, որ նախորդ օրն այն քննարկվել է գիտամեթոդական հանձնաժողովում: Գիտական խորհուրդը հաստատեց 13 թեկնածուական և 1 դոկտորական ատենախոսությունների թեմաներ:

Գիտության գծով պրոռեկտորը նաև գիտխորհրդին զեկուցեց «ՀՀ Շիրակի մարզի սոցիալ-տնտեսական զարգացման մոդելի մշակում» հետազոտության («Ամբերդ» հետազոտական կենտրոն) հրատարակությունը երաշխավորելու մասին հարցը: Նշենք, որ հետազոտական խմբի ղեկավարն է տ.գ.դ., պրոֆեսոր Զոյա Թադևոսյանը, հետազոտական խմբի խորհրդատուն՝ տ.գ.թ., դոցենտ Վահե Բուլանիկյանը, խմբում ներգրավված են տնտեսագետներ Կարեն Պետրոսյանը, Թադևոս Ավետիսյանը, Ալբերտ Հայրապետյանը, Գայանե Սալնազարյանը, Ղարիբ Հարությունյանը, Լուսյա Գալոյանը, Ռուբեն Ղանթարչյանը, Արմեն Մարկոսյանը, Լիանա Իսայանը, Համլետ Մկրտչյանը: Գրախոսներն են տ.գ.դ., պրոֆեսորներ Հայկ Մնացականյանը և Տիգրան Մարտիրոսյանը, մասնագետ խմբագիրն է տ.գ.դ., պրոֆեսոր Դավիթ Հախվերդյանը: Գիտխորհուրդը երաշխավորեց հետազոտության հրատարակությունը:

Ընթացիկ հարցերի շարքում փոփոխություն կատարվեց գիտական խորհրդի աշխատակարգում, ընդգծվեց, որ նիստերը կարող են անցկացվել նաև առցանց կամ հարցման կարգով:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՎԱՐՏՎՈՂ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԹՎԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԷՐ

Դեկտեմբերի 1-ին գիտական խորհրդի նիստը կազմակերպվեց հարցման կարգով: Օրակարգում երկու հարց էր՝ սույն թվականի նոյեմբերի 19-ին ՀՊՏՀ գիտական խորհրդի առցանց նիստում հաստատված «Առկա և հեռակա ուսուցման բակալավրիատի, առկա և հեռակա ուսուցման մագիստրատուրայի ուսումնա-



ռության, գիտելիքի գնահատման և վարչարարության մեխանիզմների կազմակերպման կարգերում» ժամանակավոր փոփոխություններ կատարելու մասին որոշման 14-րդ կետը ուժը կորցրած ճանաչելու և նոր խմբագրությամբ հաստատելու, ինչպես նաև ՀՊՏՀ առկա և հեռակա ուսուցմամբ բակալավրիատի և մագիստրոսական կրթական ծրագրերում 2020-2021 ուսումնական տարում քննությամբ ավարտվող դասընթացների ցանկը հաստատելու և դրան համապատասխան ums.asue.am էլեկտրոնային համակարգում դասընթացների գնահատման կշիռները փոփոխելու մասին քննարկումները:

Հաշվի առնելով, որ գիտական խորհրդի՝ ուսանողության կողմից ընտրված անդամները նախորդ նիստում դեմ էին քվեարկել որոշման նախագծի 14-րդ կետին, ըստ որի՝ բակալավրիատի և մագիստրատուրայի առկա և հեռակա կրթաձևերում 2020-2021 ուստարվա համար սահմանված քննությամբ ավարտվող դասընթացների թիվը մնում է անփոփոխ և հաշվի առնելով, որ որոշման 14-րդ կետն այնուամենայնիվ ոչ միարժեք է ընդունվել ՀՊՏՀ ուսանողների կողմից, նոյեմբերի 24-ին և նոյեմբերի 28-ին նշյալ հարցը moodle.asue.am հարթակում դրվել էր քվեարկության: Քվեարկությանը մասնակցել էր բակալավրիատի 2936 ուսանող (նվազագույնը 1300 ուսանողի մասնակցության պայմանով): Մագիստրատուրայի ուսանողներից, նոյեմբերի 30-ի դրությամբ, քվեարկությանը մասնակցել էր 434 ուսանող (նվազագույնը 385 ուսանողի մասնակցության պայմանով), ինչի արդյունքում կարելի է արձանագրել, որ մագիստրոսների հարցումը նույնպես կայացել է: Քվեարկությանը մասնակցած բակալավրիատի ուսանողների շուրջ 96%-ը նախապատվությունը տվել էր 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակում 2 քննությամբ ավարտվող դասընթաց թողնելու տարբերակին: Քվեարկությանը մասնակցած մագիստրատուրայի ուսանողների շուրջ 97%-ը նախապատվությունը տվել էր 2020-2021 ուստարվա առաջին կիսամյակում 3 քննությամբ ավարտվող դասընթաց թողնելու տարբերակին: Ուսանողների քվեարկության արդյունքները հաշվի առնելով էլ հարցը կրկին բերվեց գիտական խորհուրդ:

Գիտական խորհրդի քվեարկության արդյունքում որոշվեց ՀՊՏՀ առկա և հեռակա ուսուցման բակալավրիատում 2020-2021 ուստարվա համար սահմանել քննությամբ ավարտվող 2 դասընթաց, իսկ առկա և հեռակա մագիստրատուրայում՝ 3 դասընթաց: ՀՊՏՀ պաշտոնական կայքում հրապարակվեց նաև քննությամբ ավարտվող դասընթացների ցանկը:

ԿԱՅԱՑԱՎ ՏԱՐԵՎԵՐՋՅԱՆ ՆԻՍՏԸ

Դեկտեմբերի 24-ի առցանց նիստը ղեկավարում էր ՀՊՏՀ ռեկտոր, գիտական խորհրդի նախագահ Դիանա Գալոյանը: Ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր Արմեն Գրիգորյանը շնորհավորեց Դիանա Գալոյանին՝ ՀՀ Կառավարության որոշմամբ ՀՊՏՀ ռեկտորի պաշտոնում հաստատվելու առիթով, ապա շնորհավորեց կոլեկտիվին և շնորհակալություն հայտնեց անցնող ծանր ժամանակաշրջանում համբերատար, նվիրված և համախմբված աշխատանքի համար: Նա վստահորեն նշեց, որ Դիանա Գալոյանի ղեկավարությամբ Տնտեսագիտական համալսարանը զարգացման նոր հորիզոնների կհասնի:

Ողջունելով գիտխորհրդի անդամներին՝ Դիանա Գալոյանը շնորհակալություն հայտնեց կոլեկտիվին՝ իրեն աջակցելու, նվիրված աշխատանքի համար, հատուկ ընդգծեց Արմեն Գրիգորյանի դերը անցած դժվարին ժամանակաշրջանում բուհի պատշաճ ղեկավարումն իրականացնելու գործում: ՀՊՏՀ ռեկտորն ընդգծեց, որ հաստատակամ է իր ուժերը բուհի զարգացման և առաջընթացի գործում ներդնելու հարցում, նաև հույս հայտնեց, որ հնարավոր կլինի բուհը դարձնել լավագույն կրթական հաստատություն, որ հաջողությունների հասնելու համար բուհում պետք է պահպանվի համերաշխության ու նվիրվածության մթնոլորտը:

Մինչ օրակարգի հաստատումը, քվեարկությամբ այն լրացվեց ևս մեկ հարցով՝ Ուսանողական խորհրդի տարեկան հաշվետվությամբ:

Օրակարգի առաջին հարցը՝ «Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան» ՊՈԱԿ-ի կոլեգիալ կառավարման մարմնի (խորհրդի) կազմի ձևավորման նպատակով պրոֆեսորադասախոսական կազմից խորհրդի անդամության թեկնածուներ առաջադրելու և ընտրելու մասին, զեկուցեց պրոռեկտոր Արմեն Գրիգորյանը: Նա նշեց, որ խորհրդի անդամներից մի քանիսի ժամկետը լրացել է, նոր անդամների առաջադրման գործընթացը կազմակերպվել է պատշաճորեն՝ պահպանելով բուհի և ֆակուլտետների կանոնադրությունները: Ֆակուլտետները քննարկել և գիտխորհրդի առաջադրմանն են ներկայացրել 8 թեկնածություն: Ներկայացված թեկնածությունները հաստատվեցին, հետագայում ցանկը կներկայացվի լիազոր մարմնին:

Այնուհետև Արմեն Գրիգորյանը զեկուցեց ՀՊՏՀ ոսկե մեդալով պարգևատրելու մասին հարցը:

Ռեկտոր Դիանա Գալոյանը մանրամասնեց, որ անցնող տարին մեր համալսարանի համար հոբելյանական էր, և թեև համավարակով, այնուհետև պատերազմով պայմանավորված՝ հոբելյանական բազում միջոցառումներ չիրականացվեցին, այդուհանդերձ, բուհի ղեկավարությունը պատրաստվում է ՀՊՏՀ ոսկե մեդալներ հանձնել մեր բուհի կայացման և առաջընթացի գործում մեծ ներդրում ունեցած անձանց: Հարցը դրվեց գիտխորհրդի քվեարկության:

Գիտության գծով պրոռեկտոր Թաթուլ Մկրտչյանը զեկուցեց գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանման և զարգացման ծրագրերի 2020 թ. հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածն ընդգրկող տարեկան հաշվետվությունների մասին

հարցը: Խոսքը երկու ծրագրերի՝ «Կառավարչական որոշումների ընդունման և իրագործման կառուցակարգերի ու հաղորդակցության տեխնոլոգիաների ազդեցությունը ՀՀ հանրային կառավարման արդյունավետության վրա» (ծրագրի գիտական ղեկավար՝ ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, տ.գ.դ., պրոֆեսոր Յու.Մ.Սուվարյան) և «ՀՀ տնտեսության իրական և ֆինանսական հատվածների արդյունավետ փոխգործակցության հնարավորությունները» (ծրագրի գիտական ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Կ.Հ. Գրիգորյան), մասին էր: Առաջին ծրագրի հաշվետվությունը ներկայացրեց կառավարման ամբիոնի ասիստենտ, տ.գ.թ. Մարիաննա Քոչարյանը, իսկ երկրորդը՝ Կարեն Գրիգորյանը: Հաշվետվությունները հաստատվեցին, իսկ բուհի ղեկավարն ընդգծեց, որ առաջիկայում պետք է ջանքեր գործադրել բուհի հետազոտողների գիտական աշխատությունները ազդեցության գործոն ունեցող միջազգային ամսագրերում հրապարակելու համար: Այս համատեքստում, Դիանա Գալոյանը գիտխորհրդին հիշեցրեց, որ իր պատմության մեջ առաջին անգամ ՀՊՏՀ-ն ներառվել է Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի (EECA) բուհերի QS World University Rankings 2021 վարկանիշում, ինչը մեծ ձեռքբերում է: Նրա խոսքով՝ վերջին տարիներին, չնայած գործադրված ջանքերին, այս ուղղությամբ շոշափելի հաջողություններ չէին արձանագրվում, սակայն այս տարի բուհի և արտաքին կապերի դեպարտամենտի ջանքերի շնորհիվ իրողություն դարձավ:

Թաթուլ Մկրտչյանը, անդրադառնալով ասվածին, նշեց, որ գալիք տարի միահամուռ ջանքեր կներդրվեն՝ առկա հաջողությունները զարգացնելու ուղղությամբ:

Օրակարգի հաջորդ հարցը զեկուցեց ՀՊՏՀ ՈՒԽ նախագահ Գոռ Մելիք-Սահակյանը՝ ներկայացնելով ուսանողական խորհրդի տարեկան հաշվետվությունը:

Դիանա Գալոյանը նշեց, որ հասկանալի պատճառներով այս տարի չեն իրականացվել միայն մշակութային և մարզական միջոցառումները, սակայն ուսանողները համավարակի և պատերազմի ժամանակաշրջանում ակտիվորեն ներգրավված են եղել կամավորական, աջակցության բազում աշխատանքներում: Բուհի ղեկավարը նշեց նաև ՀՀ կենտրոնական բանկի կողմից հայտարարված մրցույթում մեր ուսանողների հաջողությունների մասին և շնորհավորեց նրանց: Նա բարձր գնահատեց ուսխորհրդի աշխատանքը և գիտխորհրդին առաջարկեց բավարար գնահատել հաշվետվությունը, ինչը հաստատվեց:

Ընթացիկ հարցերի շարքում պրոռեկտոր Թաթուլ Մկրտչյանը զեկուցեց ատենախոսությունների թեմաներ և գիտական ղեկավարներ հաստատելու մասին հարցը՝ նշելով, որ ներկայացված թեմաները քննարկվել և հաստատվել են գիտական խորհրդին կից գիտամեթոդական հանձնաժողովի՝ 2020 թ. դեկտեմբերի 23-ի նիստում: Գիտխորհուրդը հաստատեց հարցը:

Ամփոփելով՝ բուհի ղեկավարը շնորհավորեց գիտխորհրդի անդամների գալիք Նոր տարին, մաղթեց առողջություն և խաղաղություն և նշեց, որ առաջիկայում պետք է փորձել համախմբված ուժերով հաղթահարել ճգնաժամը և կյանքի կոչել հարազատ բուհի առաջընթացի ծրագրերը:

ԳՈՀԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

...Ապագայի հույսով ու հայրենիքը ծենծղելու պատրաստակամությամբ

2020-ը՝ կրկնվող թվերի տարին, խոստանում էր լինել միայն բարձունքների նվաճման ժամանակաշրջան, բայց դարձավ մարտահրավերների ու մեր մեջ աներևակայելի ուժ գտնելու տարի:

Անցնող բարդ ու դժվարին ընթացքը ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի համար ամփոփել ենք մասնաճյուղի պաշտոնակատար* Կարեն Պետրոսյանի *վերլուծությամբ: Մեր խնդրանքով նա անդրադառնում է այն հիմնական հանգրվաններին, որոնց միագումարն ամբողջացնում է բուհական ձեռքբերումներն առանձին վերցված մեկ միջավայրում, որտեղ առաջնորդողը կրթության ու գիտության հանդեպ մեծ մղումն է, համամարդկային վեհ արժեքները, փոխըմբռնումն ու փոխօգնությունը:

– 2020 թվականը բավականին մեծ շուքով ու բոլորս միասին դիմավորեցինք՝ վառելով մասնաճյուղի ամանորյա լույսերը: Նույն ոգևորությամբ ու լավատեսությամբ էլ սկսեցինք աշխատանքը նոր տարում: Առաջին երկու ամիսների ընթացքում ոչ միայն մեր պլանավորած աշխատանքները կատարեցինք, այլև արդյունավետ համագործակցություն սկսեցինք մայր բուհի ու «Ազգային բժշկական պալատի» հետ՝ կազմակերպելով շարունակական կրթության դասընթացներ մարզի բուժաշխատողների համար: Իսկապես համոզվեցինք, որ դա անհրաժեշտություն էր այս ոլորտում, քանի որ մասնակիցների քանակը նախատեսվածից ավելին էր, ու հարկադրված եղանք 2 խումբ բացել: Մեզ համար կարևոր և առաջնային է ամբողջ մարզի կրթական միջավայրի բարելավման գործում ներդրում ունենալը:

Մասնաճյուղը միայն բուժաշխատողների համար նախատեսված «Հոսպիտալ մենեջմենթ» դասընթացներով չի բավարարվել: Ուշադրության կենտրոնում են եղել նաև դպրոցականները: Այսպես. ապագա համալսարանականների համար կազմակերպվեց «1 օր ՀՊՏՀ ԳՄ-ում» ծրագիրը, որը գործունեության մեկուկես ամիսների ընթացքում հյուրընկալեց ավելի քան 120 ավագ դասարանցիների, ովքեր ծանոթացան ուսանողական առօրյային ու մասնակցեցին անվճար կարճ դասընթացների:

Մեզ համար նշանակալի էր նաև «Խելացի զբոսայգու» գաղափարի շուրջ համախմբվելը և գործնական քայլերի նախաձեռնումը: Զբոսայգին միայն մեր ուսանողների համար չէ նախատեսված, այլ քաղաքում, ինչու ոչ՝ նաև ամբողջ երկրում ուսանողական ու կրթական նոր միջավայր ստեղծելու փորձ է: Այգում ունենալու ենք ստարտափ ակադեմիա, որպեսզի ուսանողները կարողանան գործարարության փորձարկումներ կատարել և նոր գաղափարներ զարգացնել: Որոշել ենք ստեղծել նաև խելացի զրուցարաններ, որոնք հագեցված կլինեն համացանցային կապով, QR գրադարանով: Բաց լսարան ենք նախատեսել՝ մեծ էկրանով ու համացանցի հնարավորություններով, լուսավորությունն էլ պետք է լինի հետաքրքիր ծրագրային լուծումներով: Այսինքն, բազմաբովանդակ տարածք, ուր տարբեր բուհերից կգան երիտասարդները, ուսանողները, կապահովվի նրանց ժամանցն ու շփումը, և սա կհամադրվի մասնագիտական գործունեության հետ: Այգու գաղափարը բուռն արձագանք է գտել, ու չնայած ծագած դժվարություններին՝ արտակարգ իրավիճակին ու ռազմական դրությանը, այգու ստեղծումը դեռ օրակարգում է, քանի որ ուժեղ պետության հիմքում գիտելիքի վրա հիմնված պետական հնստիտուտներն են և դրանց ստեղծմանը միտված մեր հավաքական ջանքերը:

Կրթության ուժի հանդեպ հավատի շնորհիվ արտակարգ իրավիճակի պայմաններում մասնաճյուղի թե՛ պրոֆեսորադասախոսական կազմը, թե՛ ուսանողները կարողացան ոչ միայն փոփոխությունների կրողները դառնալ, այլև հանդես գալ տարբեր ձեռնարկներով՝ մասնագիտական վեբինարներ ու սոցիալական փոխաջակցության ծրագրեր: Դրանց մի մասը նպատակաուղղված է ուսանողների հետազոտական գործունեությանը նպաստելուն:

Արտակարգ դրության ընթացքում ամփոփվեց 2019-2020 ուսումնական տարվա առաջին կիսամյակի արդյունքներով, նախորդ տարվա համեմատ, առաջադիմության ամենաբարձր շարժընթաց գրանցած ուսանողների մրցույթը: Հաղթող ճանաչված 2 ուսանողները բուհի կողմից ստացան վարձավճարի 30% զեղչ: Նմանօրինակ զեղչային ծրագրերը միտում ունեն աջակցելու ուսանողներին ոչ միայն ֆինանսական տեսանկյունից, այլ նաև լրացուցիչ խթանելու ուսումնական գործընթացում մեծ ջանքեր ներդնելու մղումն ու ցանկությունը: Մեր կողմից կարևորվում է ուսանողների ու դասախոսների համագործակցությունը գիտահետազոտական ոլորտում, դրա լավագույն օրինակներից էր «Հայկական կարիտաս» ԲՀԿ-ի հետ իրականացված հետազոտական աշխատանքների մրցույթը, որի շրջանակում սոցիալապես անապահով ընտանիքների 17 ուսանողների հետ դասախոսներն աշխատեցին Շիրակի մարզի զարգացման ու հիմնախնդիրների լուծման ուղղությամբ: Արդյունքում, ոչ միայն բարելավվեցին ուսանողների հետազոտական հմտությունները, այլ նաև ստացված գումարներն ուղղվեցին ուսանողների վարձավճարների փոխհատուցմանը:

Արտակարգ դրությունը նաև չխանգարեց ընդունելության գործընթացին: Բուհը, նախորդ տարիների համեմատ, դիմորդների 53% աճ գրանցեց, ու դա պայմանավորված էր, ոչ միայն քննությունների կրճատմամբ, այլ նաև բուհի հանդեպ վստահության աճով: Մասնաճյուղը բացարձակ առաջատարն էր մարզում տնտեսագիտական մասնագիտությունների ու մեդալակիր դիմորդների քանակով: Արդյունքում, նոր ուսումնական տարին մասնաճյուղն սկսեց «1,5 մետր հեռավորությամբ», դիմակավորված, բայց ստեղծարար մոտեցումներով և իրեն հատուկ շքեղությամբ:

Նոր ուսումնական տարին տակավին լիիրավ հուն չմտած՝ սեպտեմբերի 27-ին տարածվեց սահմանին տիրող իրավիճակի մասին լուրը: Բուհի ուսանողներն ու աշխատակիցները շատ արագ ինքնակազմակերպվեցին՝ մասնակից դառնալով առաջին օգնության դասընթացների ու կամավորական աշխատանքների, պարենային ու ֆինանսական աջակցություն ցուցաբերելով ռազմաճակատին:

Ցավոք, մենք ունեցանք կորուստ. կառավարում մասնագիտության հեռակա 1-ին կուրսի ուսանող Պավել Մանուկյանը զոհվեց հանուն հայրենիքի, կամավորագրված ու զորահավաքով առաջնագծում գտնվող ուսանողներից շատերը դեռ չեն վերադարձել:

Այս դժվարին տարին մեզ ստիպեց ապագային, մեր որոշումներին ու կրթության համակարգին այլ աչքերով նայել: 2021-ը ոչ թե շնորհավորանքով, այլ յուրաքանչյուրս ավելի լավը դառնալու ու հայրենիքը զարգացնելու պատրաստակամությամբ պետք է սկսենք:

Ցանկանում եմ, որ 2021-ը լինի իրապես խաղաղության, ուժի՝ կամքի ուժի տարի ու ամրապնդվի կրթության ու գիտության վրա հիմնված ամուր ու միասնական թիկունքի աշխատանքով:

Պատրաստեց
ՀՊՏՀ Գյումրու մասնաճյուղի
հանրային կապերի պատասխանատու
ԼԵՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ

ՀՊՏՀ գրադարանը սկսել է նոր նախաձեռնություն. «Հայ տնտեսագետների շտեմարանում» էլեկտրոնային ձևաչափով անդրադարձ կկատարվի հայ տնտեսագիտական մտքի ականավոր դեմքերին: Նպատակն է՝ ուսանողներին ներկայացնել հայ տնտեսագետների կենսագրական տվյալները, աշխատությունները, տնտեսագիտական հայացքները, նրանց մասին հոդվածները: Շտեմարանի նյութերը հետագայում կհամալրեն նաև հայկական «Վիքիպեդիա» հանրագիտարանը:

Այս համատեքստում, առանձին խորագրով կներկայացնենք յուրաքանչյուր տարվա հիշարժան տարեթվերը՝ հոբելյաններ, նշանակալի իրադարձություններ՝ այսպիսով արժանին մատուցելով այն անվանի մտավորականների հիշատակին, որոնց ջանքերով զարգացել է հայ տնտեսագիտական միտքը և հաջողություններ արձանագրել:

«Տնտեսագիտական հիշարժան տարեթվեր» շարքը 2020 թ. համալրում են այնպիսի անվանի տնտեսագետների հոբելյաններ, ինչպիսիք են՝ Վահրամ Ներսիսյանց–80, Ստեփան Սիտարյան–90, Ներսես Թովմասյանի–110, Թադևոս Ավդալբեգյան–135, Գրիշա Ղարիբյան–90, Զաքարե Բաշինջաղյան–125, Արմեն Դարբինյան–55, Մուշեղ Ադոնց–110:

Մուշեղ Ադոնց (1910-1994): Ծնվել է Բաքվում (տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր): 1945-1948 թթ. սովորել և ավարտել է Մոսկվայի Մ. Լոմոնոսովի անվան պետական համալսարանի ասպիրանտուրան՝ պաշտպանելով թեկնածուական ատենախոսություն: 1957-ին լույս է ընծայվում նրա՝ «Արևելյան Հայաստանի տնտեսական զարգացումը» մենագրությունը, որի համար արժանանում է տնտեսագիության դոկտորի գիտական աստիճանի: Մ. Ադոնցը հեղինակ է ավելի քան 100 գիտական ուսումնասիրությունների:

2010 թ. գիտնականի 100-ամյակի առթիվ ՀՊՏՀ-ում կազմակերպվեց գիտաժողով և գրադարանի գիտական ընթերցասրահը անվանակոչվեց Մ. Ադոնցի անունով:

Նրա գրքերից գրադարանում առկա են՝ «Արդյունաբերական արտադրանքի ինքնարժեքը և նրա իջեցման ուղիները» (1956), «Միջտնտեսային կոոպերացիան և ագրոարդյունաբերական ինտեգրացիան» (1978), «Սոցիալիստական հասարակարգի ազգային եկամուտը» (1963), «Հայաստանի ժողովրդական տնտեսությունը և հայ տնտեսագիտական միտքը 20-րդ դարի սկզբին» (1972), «Պետական պլանավորման զարգացումը Սովետական Հայաստանում» (1972):

Թադևոս Ավդալբեգյան (1885-1937): Ծնվել է Պարսկաստանի Մակու քաղաքում: Նրա գիտական հետաքրքրություններն ընդգրկել են տնտեսագիտության, պատմության, բանասիրության, բառարանագիտության ոլորտները: Ուշագրավ են հեղինակի՝ «Հայ ազատագրական շարժման երկու հոսանք 18-րդ դարի վերջում» և «Ծահամիր Ծահամիրյանն ու հնդկահայոց համայնական ինքնությունը 18-րդ դարում» ուսումնասիրությունները: 1930-ական թվականներին Ավդալբեգյանը գերմաներենից թարգմանում է Կ. Մարքսի «Կապիտալի» երեք հատորները: Բոլոր հատորները գրադարանում առկա են:

Զաքարե Բաշինջաղյան (1895-1971): Ծնվել է հայտնի գեղանկարիչ Գևորգ Բաշինջաղյանի ընտանիքում (գիտնական, կուսակցական և պետական գործիչ): Գիտական հետաքրքրությունների շրջանակում են եղել տնտեսագիտության, գրականության և արվեստի հարցերը: Առանձին գրքույկներով լույս են տեսել նրա՝ «Կարլ Մարքս. կյանքը և գործը», «Ֆրիդրիխ Էնգելս. կյանքը և գործը» մենագրությունները: Եղել է «Քաղաքատնտեսություն» ուսումնական ձեռնարկի համահեղինակը:

Գրիշա Ղարիբյան (ծնվ. 1930 թ. Սյունիքի մարզի Բորիսովկա գյուղում): Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, ՀՀ գիտության վաստակավոր գործիչ է: Նրա աշխատություններից են «Բնակչության կենսամակարդակը և նրա բարձրացումը Սովետական Հայաստանում», «Բնակչության կենսամակարդակի բարձրացման պրոբլեմները սոցիալիստական հասարակարգում», «Մարդկային զարգացման հիմունքներ» (համահեղինակ), «ՀՀ աշխատանքային շուկայի վերլուծություն» (համահեղինակ), «ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացումը և մարդկային կապիտալի վերարտադրության հիմնախնդիրները» (համահեղինակ):

Գրադարանում առկա են՝ «Բնակչության եկամուտների բաշխման և վերաբաշխման հարաբերությունները Հայաստանի Հանրապետության անցումային տնտեսությունում» (2011), «Անկախության տարիներին Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացումները և մարդկային կապիտալի վերարտադրության հիմնախնդիրները» (2017), «Կապիտալի նախասկզբնական կուտակման, հարստության ու եկամուտների բևեռացման առանձնահատկությունները և կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետության անցումային տնտեսությունում» (2011):

Ներսես Թովմասյան (1910-1989): Ծնվել է Արևմտյան Հայաստանի Խեք գյուղում (տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր): Նրա աշխատանքները նվիրված են հայ տնտեսագիտական մտքի պատմությանը, այդ շարքում են «Հայ սոցիալ-տնտեսագիտական միտքը վաղ միջնադարում», «Հայ սոցիալ-տնտեսագիտական միտքը 9-14-րդ դարերում», հատկապես ուշագրավ է «Գրիգոր Տաթևացու սոցիալ-տնտեսագիտական հայացքները» աշխատությունը, իսկ «Տնտեսագիտական ուսմունքների պատմություն:

Մինչև մարքսիզմի առաջացումը» գիրքն այժմ էլ ուսումնասիրվում է բուհերում և առկա է մեր ֆոնդում:

Վահրամ Ներսիսյանց (ծնվել է 1940 թ., Թեհրան քաղաքում, ՀՀ պետական և տնտեսական գործիչ): Աշխատել է Նյու Յորքի «Չեյզ Մանհեթեն բանկում» և «Յունիոն Քարբայթ» ձեռնարկությունում, Համաշխարհային բանկում (ՀԲ), 1970-1990 թթ.՝ Ասիայի, Աֆրիկայի և Լատինական Ամերիկայի երկրներում, 1990-1998 թթ.՝ ԱՊՀ երկրներում, մասնավորապես՝ աջակցելով ՀՀ անցումային շրջանի բարեփոխումներին:

1995-1998 թթ. եղել է ՀՀ-ում ՀԲ ներկայացուցիչ, 1998-2010 թթ.՝ ՀՀ նախագահի գլխավոր խորհրդական տնտեսական հարցերով, 2001-2010 թթ.՝ Զարգացման հայկական գործակալության խորհրդի փոխնախագահ, 2003-2010 թթ.՝ ՀՀ վարչապետին կից գործարարությանն աջակցող խորհրդի փոխնախագահ, 2003-2010 թթ.՝ ՀՀ վարչապետին կից տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանն աջակցող խորհրդի փոխնախագահ: 2008 թ. մայիսի 30-ին ՀՀ վարչապետի որոշմամբ նշանակվել է ՀԲ կառավարիչների խորհրդում ՀՀ կառավարիչ, այնուհետև, մինչև 2010 թ. դեկտեմբերի 9-ը, ՀՀ նախագահի գլխավոր խորհրդական, ապա՝ ՀԲ խորհրդի նախագահ և գլխավոր գործադիր տնօրեն: Պարգևատրվել է Ս. Մեսրոպ Մաշտոց շքանշանով:

Ստեփան Սիտարյան (1930-2009): Ծնվել է ՀՀ Ալավերդի քաղաքում: Սովորել և ավարտել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան համալսարանի տնտեսագիտության բաժինը: Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր է: Զբաղվել է տնտեսական մոդելների մշակմամբ, միութենական հանրապետությունների ազգային եկամտի և ֆինանսական հոսքերի բաշխման հարցերով: 1992 թ. ստեղծել և գլխավորել է ՌԴ գիտությունների ակադեմիայի Արտաքին տնտեսական հետազոտությունների ինստիտուտը: Սիտարյանի աշխատանքներից հատկանշական է «Բաշխման հարաբերությունները և արտադրության արդյունավետությունը» մենագրությունը:

Արմեն Դարբինյան (ծնվ. 1965 թ.): Ավարտել է Մոսկվայի Լոմոնոսովի անվան պետական համալսարանը, որտեղ «Աշխատանքի վարձատրության համակարգի կատարելագործումը տնտեսության պայմաններում» ատենախոսության պաշտպանությամբ ստացել է տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճան: 2006 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսությունը՝ «Տնտեսական զարգացման մոդել. Հայաստանի ընտրությունը» թեմայով: 2001-ից Հայ-ռուսական համալսարանի ռեկտորն է: Գրադարանում առկա են նրա խմբագրությամբ լույս տեսած «Տնտեսագիտական տերմինների և հասկացությունների հայ-ռուսերեն բառարանի» 2006, 2010 թթ. հրատարակությունները:

ԱՐՄԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՀՊՏՀ գրադարանի տնօրեն

83 տարեկան հասակում կյանքից հեռացավ տնտեսագիտության տեսության ամբիոնի երախտավոր, վաստակաշատ գիտնական-մանկավարժ, պրոֆեսոր Իշխան Երեմի Խլղաթյանը: Բուհի հիմնադրման օրվանից մինչև 2017 թ. նա աշխատել է մեր համալսարանում, իր բեղմնավոր գիտամանկավարժական գործունեությամբ նպաստել բուհի, ամբիոնի կայացմանը, իր մարդկային վեհ հատկանիշներով գրավել թե՛ ուսանողների, թե՛ գործընկերների սրտերը:

Նելլի Գեղամի Ավագյանը՝ վեց լեզուների տիրապետող փայլուն բանասերը, շուրջ 65 տարի նվիրեց ռուս բանասիրության ոլորտում գիտամանկավարժական գործունեությանը՝ բուհական համակարգում ռուսաց լեզվի և գրականության դասավանդմանը: Նա երկար տարիներ ղեկավարել է մեր համալսարանի ռուսաց լեզվի ամբիոնը:

Հարգված ու սիրված մտավորականների լուսավոր կերպարները մշտարթուն կմնան նրանց սաների և գործընկերների հիշողության մեջ:

ՀՀ կենտրոնական բանկի պաշտոնական կայքը դեկտեմբերի 22-ին հրապարակեց ԿԲ առաջին նախագահ Իսահակ Իսահակյանի անվան կրթաթոշակի հերթական մրցույթի արդյունքները: Մրցույթին մասնակցելու նպատակով հետազոտական-վերլուծական աշխատանք էր ներկայացրել ԵՊՀ, ՀՊՏՀ 8 ուսանող: Գնահատելով աշխատանքները՝ ԿԲ խորհուրդն ամսական 50.000 դրամի չափով, 6 ամիս ժամկետով Իսահակ Իսահակյանի անվան կրթաթոշակ է սահմանել 3 ուսանողի համար, 3-ն էլ ՀՊՏՀ-ական են. Դավիթ Մինասյան, Անդրանիկ Մարգարյան, Հայկ Քալանթարյան:

Մակրոտնտեսական վերլուծություն մասնագիտացման 2-րդ կուրսի մագիստրանտ Դավիթ Մինասյանը ներկայացրել է «Միջազգային փորձը տեխնոլոգիապես բաց բանկային գործունեության դաշտում (Open banking) և նրա կիրառելիությունը ՀՀ-ում», տնտեսության պետական կարգավորում մասնագիտացման 1-ին կուրսի մագիստրանտ Անդրանիկ Մարգարյանը՝ «Արժութային ինտերվենցիաների հիմնախնդիրները զարգացող երկրներում», հաշվապահական հաշվառում և հարկում մասնագիտության 4-րդ կուրսեցի Հայկ Քալանթարյանը՝ «Ֆինանսական տեխնոլոգիաներ. ռիսկեր, հնարավորություններ և կարգավորման հեռանկարներ» աշխատանքները:

ՀՀ ԿԳՄՍՆ գիտության կոմիտեի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության բազային ֆինանսավորման ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագրի «ՀՀ տնտեսության իրական և ֆինանսական հատվածների արդյունավետ փոխգործակցության հնարավորությունները» թեմայի շրջանակում ՀՊՏՀ մակրոէկոնոմիկայի ամբիոնը դեկտեմբերի 1-ին կազմակերպել էր ամփոփիչ առցանց գիտական սեմինար (հետազոտական խմբի ղեկավար, մակրոէկոնոմիկայի ամբիոնի վարիչ Կարեն Գրիգորյան): Մասնակցում էին և շնորհանդես ներկայացրին խմբի անդամներ Գայանե Ավագյանը, Քնարիկ Վարդանյանը, Վարսիկ Տիգրանյանը, Լուսինե Մխիթարյանը, ՀՀ ֆինանսների նախարարության բաժնի պետ Գարիկ Պետրոսյանը և ասպիրանտ Նարեկ Կարապետյանը: Ներկա էին գիտահետազոտական աշխատանքների կազմակերպման բաժնի պետ Տիգրան Մարտիրոսյանը և տնտեսագիտության տեսության ամբիոնի վարիչ Ֆիրուզա Մայիլյանը, ուսանողներ: Գիտական արդյունքների զգալի մասն արդեն հրապարակվել է խմբի հետազոտողների հոդվածներում, տեղ գտել միջազգային ամսագրերում:

ՀՊՏՀ-ում դեկտեմբերի 7-ին մեկնարկեց «Մարքեթինգը երկաթուղային տրանսպորտում» խորագրով վերապատրաստման դասընթացը, որը նախատեսված է «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ 10 աշխատակցի համար: Հանդիպմանը մասնակցում էին պրոռեկտոր, ռեկտորի պարտականությունները կատարող Արմեն Գրիգորյանը, արտաքին կապերի դեպարտամենտի տնօրեն Լուսինե Դանիելյանը, շարունակական կրթության և վերապատրաստումների բաժնի պետ Աղավնի Հակոբյանը, մարքեթինգի ամբիոնի վարիչ Վադիմ Գրիգորյանը: Դասընթացավարը մարքեթինգի ամբիոնի դոցենտ Սիմոն Իսկաջյանն է, ծրագիրը մշակվել է նրա և Վադիմ Գրիգորյանի կողմից: Դասընթացը ներառում է «Մարքեթինգի կոնցեպցիան երկաթուղային տրանսպորտում», «Մարքեթինգային հետազոտությունները տրանսպորտային շուկայում», «Տրանսպորտային շուկայի հատվածավորումը», «Դիվերսիֆիկացումը և դիֆերենցումը երկաթուղային տրանսպորտում», «Մարքեթինգի համալիրի (ծրագրի) մշակումը», «Մարքեթինգի կառավարումը երկաթուղային տրանսպորտում» հիմնական թեմաները:

«Մարքեթինգը երկաթուղային տրանսպորտում» դասընթացն իրականացվում է ՀՊՏՀ և «Հարավկովկասյան երկաթուղի» ՓԲԸ-ի միջև կնքված պայմանագրի շրջանակում: Վերապատրաստումը կազմակերպվում է 5-ական խմբով:

ՀՊՏՀ-ն իր պատմության մեջ առաջին անգամ ներառվել է Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի (EECA) բուհերի QS World University Rankings 2021 վարկանիշում: Հայաստանից այս վարկանշավորման մեջ ներառված է 5 բուհ: Նշենք, որ ՀՊՏՀ-ն Հայաստանի ամերիկյան համալսարանի և ՃԵՀԱՀ-ի հետ միասին կիսում է 251-300-րդ հորիզոնականը: Վարկանիշում ներառված են նաև Հայ-ռուսական համալսարանը (131-րդ հորիզոնական) և Երևանի պետական համալսարանը (179-րդ հորիզոնական):

Վարկանիշում ընդգրկված են Լեհաստանի, Ռումինիայի, Բուլղարիայի, Հունգարիայի, Չեխիայի, Սլովակիայի, Էստոնիայի, Լատվիայի, Լիտվայի, Սլովենիայի, Խորվաթիայի, Բոսնիա և Հերցեգովինայի, Կոսովոյի, Սերբիայի, Ալբանիայի, Հյուսիսային Մակեդոնիայի, Կիպրոսի, Բելառուսի, Ուկրաինայի, Ռուսաստանի Դաշնության, Թուրքիայի, Վրաստանի, Ադրբեջանի, Ղազախստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի, Թուրքմենստանի, Ուզբեկստանի և Հայաստանի Հանրապետության շուրջ 2800 բուհերից 400-ը:

Հայաստանի ազգային գրադարանում ՀՀ ԿԳՄՍ փոխնախարար Նարինե Խաչատուրյանը դեկտեմբերի 15-ին ԿԳՄՍՆ պատվոգրեր է հանձնել ՀՀ մի շարք գրադարանների և մշակութային հաստատությունների. առիթը՝ Գրադարանավարի օրն էր, ինչպես նաև արտակարգ դրության պայմաններում առցանց հարթակում կատարած արդյունավետ աշխատանքը:

ՀՊՏՀ գրադարանը ԿԳՄՍՆ պատվոգրի արժանացած միակ բուհական գրադարանն է, պատվոգիրը ստացել է մեր գրադարանի տնօրեն Արմինե Հովհաննիսյանը: Ինչպես նշել է փոխնախարարը, նախատեսված է եղել պատվոգրերը հանձնել դեռևս հոկտեմբերի 7-ին՝ Գրադարանավարի օրը, սակայն համավարակի և պատերազմի պատճառով միջոցառումը հետաձգվել է:



Սեպտեմբերի 19-ին կայացել է Ուժային եռամարտի Հայաստանի առաջնությունը՝ նվիրված Արցախա-ադրբեջանական պատերազմում նահատակված հերոս հայորդիների հիշատակին: ՀՊՏՀ մարքեթինգի և բիզնեսի կազմակերպման ֆակուլտետի 1-ին կուրսի ուսանող Էրիկ Խաչատրյանը դարձել է առաջնության չեմպիոն: Այսպիսով, մեր ուսանողն արդեն Հայաստանի 7-ակի չեմպիոն է: Նա նաև Աշխարհի և Եվրոպայի չեմպիոնական տիտղոսակիր է, Գինեսի գրքի և «Դյուցազնագրքի» ռեկորդակիր, միջազգային կարգի սպորտի վարպետ:

ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱԽՃԱՊԱԿԻՆ՝ ՍՈՒՐԲ ՔԱՂԱՔԻ ԽՈՐՀՐԴԱՆԻՇ

Հայկական հախճապակին Երուսաղեմում ոչ միայն հայտնի է, այլև սուրբ քաղաքի խորհրդանիշներից մեկն է: Այս գունագեղ արվեստն անմիջականորեն աղերսվում է Երուսաղեմի հայ համայնքի և 20-րդ դարասկզբի հայ ժողովրդի պատմությանը: Համարձակ գույներով և ավանդական դիզայնով, ձեռքով նկարված հախճապակյա իրերը զարմացնում են բոլորին: Կենսունակ երանգներն ու խճճված նախշերը մշակվել են հայ ականավոր վարպետների կողմից և որպես ընտանեկան գաղտնիք պահպանվում ու փոխանցվում են սերնդեսերունդ: Այդ տարածաշրջանում դեկորատիվ հախճապակու և խեցեգործության արտադրություն նախկինում գոյություն չուներ, իսկ այսօր հայկական խեցեղենը կամ հայկական հախճապակին դարձել է կենցաղի ու մշակույթի բաղկացուցիչ: Դրանք նրբանկար ափսեներ են, սալիկներ, որոնք ներկված են գունեղ կոբալտի կապույտով, խոր փիրուզագույնով և վառ կարմիրով: Սակայն, քչերին է հայտնի այս արվեստ-արհեստի իրական պատմությունը և այն մարդկանց անունները, ովքեր հեղինակեցին հախճապակյա այս ինքնօրինակ ստեղծագործությունները:

1919 թվականին Երուսաղեմի բրիտանացի նահանգապետ սըր Ռոնալդ Սթորսը, Երուսաղեմում արվեստի և արհեստների գործունեության վերականգնման շրջանակներում, հանդես եկավ Ժայռի գմբեթի՝ մահմեդականության հնագույն տաճարի հախճապակյա սալիկների վերանորոգման նախագծով: Հայ արհեստավարժ նկարիչ, կավագործ, լեզվաբան և «Քյոթահիա խեցեգործական միության» ղեկավար Դավիթ Օհանեսյանին հանձնարարվեց հավաքագրել մի խումբ հայ նկարիչների և խեցեգործների, որոնք կընդգրկվեին Ժայռի գմբեթի վերանորոգման աշխատանքներում: Թուրքիայի Քյոթահիա քաղաքից վարպետ-նկարիչ Մկրտիչ Քարաքաշյանը նրանց շարքում էր:

Հալածանքների պատճառով հեռանալով Թուրքիայից՝ Մկրտիչ Քարաքաշյանը նախընտրում է մեկնել Երուսաղեմ՝ աշխատելու և հետագայում իր ընտանիքի անդամներին աստիճանաբար տեղափոխելու նպատակով: Հախճապակու հայազգի նկարիչների և բրուտագործների այս խումբը նմուշային սալիկներ է պատրաստում Ժայռի գմբեթի նախագծի համար: Այնուամենայնիվ, տարբեր պատճառներով նախագիծը չեղարկվում է: Բայց Քարաքաշյանը և նրա գործընկերը՝ բրուտագործ Նշան Բալյանը, որոշում են մնալ Երուսաղեմում և արտադրամաս բացել Նաբլուսի ճանապարհին: Դա 1922 թվականին էր: Նրանք արտադրում են հայկական առաջին խեցեգործական իրերը: Դավիթ Օհանեսյանը նույնպես արտադրամաս է հիմնում:

Ռոնալդ Սթորս, Դավիթ Օհանեսյան, նկարիչ Մկրտիչ Քարաքաշյան և բրուտագործ Նշան Բալյան. ահա նրանք, ովքեր «պատասխանատու» են Երուսաղեմում հայկական խեցեղենի ներմուծման և ստեղծման համար: Ցավոք, Դավիթ Օհանեսյանը 1948 թ. արաբ-իսրայելական պատերազմի ժամանակ փակում է «Ժայռի գմբեթի սալիկ» արվեստանոցը և հեռանում Երուսաղեմից: Մի քանի տարի անց Բեյրութում կյանքից հեռանում է:

1963 թվականին կյանքից հեռանում է նաև Մկրտիչ Քարաքաշյանը, և նրա որդին՝ Ստեփան Քարաքաշյանը, առանձնանալով Բալյաններից, եղբոր՝ Բերգեի հետ 1964-ին բացում է սեփական՝ «Վիա Դոլորոսա» արհեստանոցը: Այնտեղ նրանք շարունակում են հայկական խեցու արտադրությունը: Ստեփանի և Բերգեի նախագծերից մեկը Երուսաղեմի Հին քաղաքի փողոցների անվանումները հախճասալիկների վրա գրելն էր: 1965 թվականին Հորդանանի Կառավարությունը, որը իշխում էր Երուսաղեմում, եղբայրներին հանձնարարում է Հին քաղաքի փողոցների անվանումները նկարել հախճասալիկների վրա: Սկզբում փողոցների բոլոր անունները գրվում էին միայն արաբերեն և անգլերեն: Բայց երբ 1967 թվականին իսրայելացիները գրավում են Երուսաղեմը, որոշում են արդեն գոյություն ունեցող փողոցների անունների վրա ավելացնել եբրայերենը: Եղբայրներին հանձնարարվում է նաև դա անել:

70-ականների սկզբին Քեբրոնում (Երուսաղեմին մոտ քաղաք) շատ արհեստավորներ սկսում են ընդօրինակել Բալյանների և Քարաքաշյանների ընտանիքի գործերն ու ոճը: Այս նմանակումները, տպագրության և մասսայական արտադրության տեխնիկայի լայն կիրառմամբ, ներկայումս հայտնի են որպես «Քեբրոնի խեցեգործություն»: Սա գեղարվեստական առումով լիարժեք արտադրանք չէ, այլ Քարաքաշյան և Բալյան ընտանիքների ստեղծած նմուշների պատճենը: Քեբրոնի խեցեղենը ազատորեն հասանելի է հին Երուսաղեմի, Պաղեստինի և Իսրայելի հուշանվերների խանութների մեծ մասում, որոնք զբոսաշրջային շուկայի համար ցանկանում են էժան հախճապակյա իրեր


VOLUME LII NUMBER SIX

THE NATIONAL GEOGRAPHIC MAGAZINE

DECEMBER, 1927

CONTENTS

TWENTY-FOUR PAGES OF ILLUSTRATIONS IN FULL COLOR

The Pageant of Jerusalem
With 16 Illustrations — MAJOR EDWARD KEITH-ROACH

Color Records from the Changing Life of the Holy City
With 17 Illustrations — MAYNARD OWEN WILLIAMS

East of Suez to the Mount of the Decalogue
With 12 Illustrations — MAYNARD OWEN WILLIAMS

The Geography of Money
With 11 Illustrations — WILLIAM ATHERTON DU PUY

PUBLISHED BY THE NATIONAL GEOGRAPHIC SOCIETY
HUBBARD MEMORIAL HALL
WASHINGTON, D.C.



ARMENIAN CERAMISTS ARE REVIVING AN ALMOST FORGOTTEN ART

In the days of Suleiman the Magnificent, Jerusalem faience work was added to the Dome of the Rock. Recently the original kilns were discovered and potters are being encouraged by the Pro-Jerusalem Society to replace missing or damaged tiles and to revive the entire ceramic industry.

ձեռք բերել:

Ինչ վերաբերում է հայկական խեցեղեն պատրաստող այլ հայ ընտանիքներին, ապա կա մի քանի արհեստանոց, որոնք, ընդօրինակելով արդեն ստեղծ ված ավանդույթը, միաժամանակ ստեղծել են հայկական խեցեղենի իրենց ոճը: Այս արհեստանոցները համեմատաբար նոր են՝ շուրջ 30 տարվա պատմությամբ և ոչ մի կապ չունեն այն ընտանիքների հետ, որոնք այս արվեստ-արհեստը բերել են Երուսաղեմ և մի նոր բարձրակետի հասցրել:

Ըստ էության, Թուրքիայից եկած ընտանիքներից միայն Քարաքաշյաններն ու Բալյաններն են շարունակում իրական ավանդույթը: 1995 թվականին ընտանեկան ավանդույթի շարունակող է դառնում Քարաքաշյանների երրորդ սերնդի ներկայացուցիչ Ստեփան Քարաքաշյանի որդին՝ Հակոբը: Մանուկ հասակում հայրը ամառային արձակուրդներին նրան տանում էր իր հետ աշխատելու և սովորեցնում էր նկարել և նկարազարդել: Այդ հիշողություններն ու փորձառությունը Հակոբի մեջ սեր են սերմանում, և ահա այսօր նրա առաքելությունն ու նպատակն է՝ Երուսաղեմի հայկական ամենալավ և որակյալ խեցեղենն արտադրել այն ավանդական ձևով, որը հայրն է փոխանցել իրեն: Կնոջ՝ Ցողիկի օգնությամբ Հակոբը ներկում և նկարազարդում է սալիկներն ու խեցեղենն իր արվեստանոց-արհեստանոցում, որը գտնվում է Հունաստանի ուղղափառ պատրիարքարանի 3 հասցեում՝ Երուսաղեմի Հին քաղաքում, Յաֆֆայի դարպասի և Նոր դարպասի մոտակայքում: Նրանք ջերմորեն ընդունում են բոլոր այցելուներին և սիրով ներկայացնում իրենց ընտանեկան պատմությունը:

Հայկական հախճապակու պատմությունը լի է վերելքներով և անկումներով, տառապանքներով և ուրախություններով: Նշան Բալյան կրտսերը հիշում է հոր պատմությունները 40-ականների վերջի դժվարին ժամանակների մասին. իրավիճակն այնքան հուսահատ էր, որ նրանք գործարանի պատուհանների փայտե շրջանակներն այրում էին՝ որպես հնոցի վառելիք: Գործարանը լիովին ավերվել էր 1967-ի արաբ-իսրայելական պատերազմում, բացառությամբ հսկայական գմբեթավոր հնոցի, որն ամբողջությամբ պատված էր հախճապակով, որն էլ հետագայում վաճառվեց և ներդրվեց վերակառուցման մեջ: Ի վերջո, հաղթահարվում են դժվարությունները, և գործարանը բարգավաճում է: Նրա հայրը՝ Սեդրակ Բալյանը, խեցեգործություն է սովորել Անգլիայում՝ Բերնարդ Լիչի ղեկավարությամբ, ապա 50-ականների սկզբին վերադարձել Երուսաղեմ և հիմնել աղյուսի և տանիքների սալիկների գործարան Ամմանում, Հորդանանում: Մայրը՝ Մարի Բալյանը, հախճապակյա սալիկների նկարիչ է, որի աշխատանքները ցուցադրվել են ամբողջ աշխարհում: 1992 թ. Վաշինգտոնի Սմիթսոնյան թանգարանում նրա անհատական ցուցահանդեսը շարունակվել է 6 ամիս, այնուհետև տեղափոխվել է Ամերիկայի հայկական գրադարան, ապա Բոստոն, 2003-ին մի շարք ցուցահանդեսներ են կազմակերպվել Թել Ավիվի «Էրթեզ Իսրայել» թանգարանում և Իսպանիայի Ալիկանտե քաղաքում:

Նշան Բալյան կրտսերը գործարանը ղեկավարում է հոր մահից ի վեր՝ 1996 թվականից: Նա մեքենաշինության և կերամիկական ճարտարագիտության մասնագետ է, կրթություն է ստացել Օհայոյի Հոկինգ քոլեջում, ապա համալսարանում:

Բալյանների հայկական հախճապակու բնօրինակը վաճառվում է միայն նրանց գործարանում և մանրածախ վաճառակետում՝ Արևելյան Երուսաղեմի Նաբլուսի 14 հասցեում, ինչպես նաև պաշտոնական կայքում՝ https://armenianceramics.com/: Ներկայիս գործարանն այն վայրն է, որտեղ ծնվել է այս ինքնատիպ արվեստ-արհեստը, որը հայտնի է որպես Երուսաղեմի հայկական հախճապակի:

2020 թ. հունվարին Իսրայելի Պետություն աշխատանքային այցի շրջանակում ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանը և տիկին Նունե Սարգսյանը Երուսաղեմում այցելել են Ռոքֆելլեր հնագիտական թանգարան և դիտել հայկական հախճապակուն նվիրված ցուցադրությունը, որը կազմակերպել է հախճապակու ստեղծմամբ զբաղվող Բալյանների հայտնի ընտանիքի չորրորդ սերնդի ներկայացուցիչ Սեդրակ Բալյանը:

Սեդրակ Բալյանը նշել է, որ ցանկություն ունեն իրենց փորձառությունը ներդնել և հախճապակի արտադրել նաև Հայաստանում:

ԱՆԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ՀՊՏՀ լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի առաջին կարգի մասնագետ

Նյութի աղբյուրը և լուսանկարները՝ Բալյանների և Քարաքաշյանների պաշտոնական կայքէջեր: